ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ

IX

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Ջեռնադրության շնորհաբաշխությունն Մայր Աթոռում	3
Ամենայն Հայոց Հայրապետը (խմբագրական «ՀԱՍԿ»ի) . . .	6
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ.— Քարոզ	10
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Ս. Էջմիածնի միաբանությունը ուժեղացավ չորս երիտասարդ և զարգացած հոգևորականներով . .	12
Հոգեշնորհ Պարգև աբեղա Գեորգյան	15
Հոգեշնորհ Վահան աբեղա Գալամդարյան	16
Հոգեշնորհ Եղիշե աբեղա Սարգսյան	17
Հոգեշնորհ Հայրիկ աբեղա Ավետիսյան	18
ԴՆԵԼ Ծ. ՎՐԴ. ՃԵՐԵՃՅԱՆ.— Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակության ուղևորությունը դեպի Հայաստան՝ երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Հայրապետի օծման և թաղման մասնակցելու	19
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Վարդան Կաֆայեցու չափածո տոմարը	27
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Հաղարծինի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները	32
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Երաժշտագետ Գրիգոր քահանա Գոզիկ . .	42
ՊԱՐԳԵՎ ԱՐԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ.— Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և նայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում . .	45
Արժեքավոր նվեր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանին	56
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	57
Սիոն եպիսկոպոս Մանուկյանի վերադարձը Էջմիածնեն . . .	61
Պատարագ և քարոզ	62
Գերագույն Հոգևոր խորհուրդին խիղճը ճանդարտ է, թեև վիշտը անդարմանելի	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՍՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱՎԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի Մայր Արոռ Ս. Էջմիածնում բացառիկ շքով և հանդիսությամբ տոնվեց Ս. Խաչվերաց տոնը՝ հոգևոր ուրախության և մխիթարության կրկնակի առիթ հանդիսանալով հավատացյալների համար:

Նույն օրը՝ սեպտեմբերի 12-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի որոշումով, գերապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը սուրբ պատարագի ընթացքում, հավատացյալների և ուխտավոր խումբ բազմության ներկայության, Մայր Տաճարի Ավագ սեղանի վրա, պատշաճ հանդիսությամբ կատարեց շնորհաշխության խորհուրդը՝ կուսակրոն քահանա ձեռնադրելով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանից շրջանավարտ բարեշնորհ Քաջիկ, Անդրանիկ, Սարգիս և Հենրիկ ավագ սարկավագներին:

Վաղուց էր, որ Մայր Տաճարում տեղի չէր ունեցել ձեռնադրության շնորհաշխության խորհուրդը, հայ ժողովրդի սրտին մոտիկ, նվիրական և խորհրդավոր այդ սուրբ արարողությունը, հատկապես Ճեմարանից շրջանավարտների ձեռնադրության օրհնությունը:

Ուրախության, հոգևոր բերկրանքի ցնծատոն էր սեպտեմբերի 12-ը ողջ միաբանության, Ճեմարանի ուսանողության և բովանդակ հավատացյալ հայ ժողովրդի համար:

Երջանիկ էին ամենքը մանավանդ այն պատճառով, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը տվել էր իր առաջին հունձը, երիտասարդ կուսակրոն հոգևորականների առաջին խումբը, որոնք Մայր Հայրենիքի ազատ և անկախ պետականության պայմաններում, ուխտել էին անձնանվեր սիրով, հոգևորական կոչման բարձր գիտակցությամբ ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ հավատացյալ ժողովրդին:

Շնորհաշխության այդ նվիրական օրը ուրախության, երախտագիտության արցունք կար բոլորի աչքերին և այն խորը համոզմունքը, որ Մայր Արոռում, հարազատ հայրենի իշխանության հովանու ներքո, աճում ու ամրապնդվում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ ի մխիթարություն հայ ժողովրդի և ի փառս Հայ եկեղեցու:

Արդարև, հուզիչ ու սրտագրավ էր այն պահը, երբ նորընծա ձեռնադրյալները բարձրանում էին քայլ առ քայլ դեպի պատրոնի, կոչման, ծառայության խորհրդանշան հանդիսացող ավագ սեղանը, ու սուրբ խորանի առաջ ծնկաչոք ուխտում՝ աչքի լույսի պես պահել հայրենի սրբազան ավանդությունները, որ մեզ ավանդ են թողել մեր երջանկահիշատակ հայրապետները, ուխտում էին ծառայել նրանց ոգով և օրինակով. «Երանի՜ զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցէ ի գաւիթս քո» (Սաղմ. ԿԴ, 5): Ծառայության, նվիրումի ոգին հատուկ է եղել մեր հոգևորականությանը՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ողջ պատմության ընթացքում:

Ավելի քան մխիթարական ու քաջալերիչ է այն հանգամանքը, որ չի մեռել նախնյաց ծառայության, նվիրումի ոգին մեր օրերում ևս, նաև Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սաների սրտերում, որոնք կոչված են արժանավոր ժառանգավորները լինելու նախնյաց արյունով և կյանքով ձեռք բերված անկրկնելի հոգևոր արժեքների:

Ընդհանուր ուրախության այդ հոպեներին, շնորհաշխության այդ սրբազան պահին, Մայր Տաճարում գտնվող յուրաքանչյուր հավատացյալի մտածումը սլանում էր դեպի ամենից սիրված ու հարգված մեծագործ Հայրապետը, որը չհասավ այդ երջանիկ օրվան՝ Իր իսկ հայրապետական Ս. Աջով օծելու Իր սիրասուն զավակների հակատները և նրանց ձեռքից բռնած առաջնորդելու դեպի սուրբ խորանը՝ հայր Աբրահամի հավատով ու հոգով...

«Ուխտս դիք և կատարեցէք...»:

Շատերն են ուխտել այդ սուրբ խորաններին առաջ խորը հավատով, աննկուն կամքով, նվիրումի և ծառայության ոգով սպասավորելու: Այդ հավատով ուխտյալներից մեկն էր նաև հանգուցյալ Վեհափառը, որը օրերից մի օր նույն սուրբ սեղանի առաջ ծնրադրեց, ուխտեց և պահեց իր ուխտը:

Եվ այժմ անա հայրերի տեղ՝ որդիները նույն սեղանների առաջ:

Հանգուցյալ Վեհափառը Իր հոգով ու գաղափարով դաստիարակել է նրանց:

Երեկ, իրենց Հոր և մեծ Ուսուցչի բարձ հողակույտի առաջ, այսօր սուրբ սեղանի դիմաց ծնրադիր, ձեռնադրյալները ուխտում են սիրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այնպե՛ս, ինչպես Վեհափառն էր սիրում, ծառայել հայ ժողովրդին այնպե՛ս, ինչպես Վեհափառն էր ծառայում, լինել աշխատանքում, կոչման ու պարտականության բարձրության վրա, ինչպիսին էր Վեհափառը:

«Որդի հարազատ նմանութիւն բերէ Հօրն» — ա՛յդ ոգով է դաստիարակել Վեհափառը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նոր սերունդին:

Եվ Նա գոն էր արդյունքից...: Հիվանդության մահճին գամված, մտքով ու հոգով ապրում էր Իր սարկավագների հետ, Իր սաների, Իր հոգևոր որդիների հետ: Ի՞նչ վարդագույն հույսեր էր կապում նրանց հոգևոր, հանրակրթական, իմացական անման, կատարելագործության հետ, նրանց ապագայի հետ:

Իր ազնվական հոգին, մեծ ու մարդասեր սիրտն էր դրել Իր սաների, Իր սարկավագների մեջ, հայրական անկաշտ ու անսպառ գուրգուրանքով էր շրջապատել նրանց: Նրանք վաղը Իր մեծ գործն էին շարունակելու; ու մանվան անկողնից Իր սիրասուն զավակներին տալիս էր Իր մեծ կտակը, կրակե բառերով. «ԷՋՄԻԱԾԻՆԸ ՏԱՒԱՊԱԼԻՑ ՈՒ ՓՇՈՏ ՃԱՆԱՊԱՐՀ է ԱՆՑԵԼ, ԲԱՑՑ ԿԵՆԴԱՆԻ է ՄՆԱՑԵԼ ՈՒ ԿՄՆԱ... ՍԻՐԵՑԷ՛Ք ԷՋՄԻԱԾԻՆԸ... ՄԵ՞ՂՔ է ԷՋՄԻԱԾԻՆԸ...» (ընդգծումը խմբագրությանն է):

Մեծանուն Հայրապետը, Իր գահակալության առաջին իսկ օրերից, Հոգևոր Ճեմարանը Իր սրտի ամենամոտ հաստատությունն էր դարձրել: Հոգևոր Ճեմարանը իր սկզբնավորության օրերից Վեհափառի ուշադրության կենտրոնումն է եղել, նրա հայրապետական ձեռնարկումներից ամենակարևոր հաստատությունն է հանդիսացել: «Իմ ցանկություններից երկուսն ամենից կարևորներն եմ համարում,— գրել է Վեհափառը Իր հայրապետական անդրանիկ կոնդակում, — առաջինը՝ տեսնել Մայր Տաճարը նորոգված և երկրորդը՝ նորաբաց Ճեմարանի շքեղանավարտներով ի վիճակի գտնվել ծածկելու Հայաստանյայց Եկեղեցու ասպարիզում եղած բացը»:

Հանգուցյալ Վեհափառ Հայրապետի ցանկության և ծրագրի համաձայն, արդարև, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը կոչված է մեծ ու պատվավոր դեր կատարելու Հայ Եկեղեցու կյանքում, իր կոչման ու պարտականության գիտակցող, հայրենասեր նոր հոգևորականություն պատրաստելու ասպարիզում:

Նույնիսկ մանվանից մի օր առաջ, ուսումնասեր մեծ Հայրապետը մտածում էր Ճեմարանի մասին— Ճեմարանը մեծ պարտականություններ ունի... պիտի ավելացնել ուսանողների թիվը... պիտի ավելի արդյունավետ դարձնել... արտասահմանից էլ 20 հոգի պիտի բերել ապ...

Գեորգ Զ.-ի գահակալությունը հուսավորչի Աթոռի վրա մի նոր ու խոստումնալից էջ բացեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նորագույն պատմության մեջ: Հանգուցյալ Վեհափառը, Իր հայրապետության առաջին իսկ օրերից, հարկավոր ու անհրաժեշտ ջանք չի խնայել ոտքի կանգնեցնելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, նոր շունչ ու կենդանություն տալու նրան, հայ հոգևորականության նորացած շարքերը հավաքելու նոր ուժերով ու նորից Եկեղեցին դնելու իր հոգևոր կոչման ու նշանակության բարձրագույն դերի վրա:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման աշխատանքներում միշտ էլ վճռական դեր են կատարել մեր հոգևոր ճեմարանները ու դպրեվանքերը, մեր ժառանգավորաց վարժարանները ու բնծայարան-

ներ: «Այժմ վստահ կարող ենք լինել,— գրել է Վեհափառ Հայրապետը,— Ս. Էջմիածնի Ճեմարանը, Ս. Երուսաղեմի և Տաճն Կիլիկիո ընծայարաններին հետ, ըստ ամենայնի ի վիճակի կլինեն հայ ժողովրդի հոգևոր-եկեղեցական կարիքները հոգալու և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնելու, որն այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգևոր զորացման, կուլտուրական բարձրացման և ազգային ինքնագիտակցության համար»:

Հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ, մեծ ու պատվավոր է եղել անցյալում մեր հոգևոր հեմարանների, վանքերի, դրպրանոցների դերը: Այնտեղ ո՛չ միայն մշակվել ու աչքի լույսի պես պահվել են մեր մշակութային անկրկնելի արժեքները, այլ վանքերից, հեմարաններից են դուրս եկել մեր անցյալի կուլտուրայի խոշորագույն գործիչները:

Անցյալի հազարավոր վանքերից ու հոգևոր հեմարաններից այսօր ունենք մի քանիսը միայն:

Այժմ, առանձնապես Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոնական հոգևոր դպրոց, կոչված է նոր երիտասարդ հոգևորականության պատրաստության գործին թե՛ Մայր Հայրենիքի և թե՛ Սփյուռքի եկեղեցիների համար:

Այսօր ուրախությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ կարճ ժամկետում, հանգուցյալ Վեհափառի ծրագրի համաձայն, Ճեմարանը տվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն իր անդրանիկ հունձը, իր երախայրիքը. Ճեմարանն ավարտող սարկավագներից չորսը ընդունել են արդեն կուսակրոն քահանայության սուրբ կոչումը և դարձել Մայր Աթոռի միաբանության հարազատ անդամները: Ճիշտ է, համեստ է այդ հունձը իբր սկզբնավորություն, բայց մեծ ու հուսադրիչ է նրա նշանակությունը: Լիաձույտ ենք ազգովին, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում առաջիկայում տեղի կունենան ձեռնադրության շնորհաբաշխության նոր հանդեսներ: Ավելի քան երբեք համոզված լ հայ հավատացյալ ժողովուրդը, որ տևապես պայծառ է մնալու Մայր Աթոռում Լուսավորչի միշտ պլպլալիք սուրբ կանթեղը, և ուր, ամեն մի նոր շնորհաբաշխության ժամին, նորից է իջնելու Ս. Հոգին իբր նոր շնորհաբաշխություն. «Քում ամենազոր էուրեանդ խոստովանիմք զամենայն պարգևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ձեռնադրես առաքելս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարձրացուցանես հաներս և բանաս զփակեալ ականջս խլից» (Նարեկացի):

Ավելի քան կենսունակ, պայծառ ու կանգուն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքում, «վասն զի ուղղափառ հաւատոյ քո լոյս՝ ո՞վ եկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ, ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ, զայրիւ յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց, ի ստուգութեան և ի ճշմարտութեան ճացն քո կենդանական՝ մեռելական խմոր և հերձուած քացախութեան շարութեան ոչ զանգեցաւ, յոսկի անբիծ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանգաճոտ և կապար սնաթոյր ոչ զտաւ» (Հովհան Երզնկացի):

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն հայ հավատացյալ ժողովրդի, սրտանդեղ սիրով շնորհավորում է Մայր Աթոռի նոր միաբաններին, մաղթելով նրանց հաջողություն, հարատևություն իրենց ընտրած դժվարին՝ բայց պատվավոր ու պատասխանատու ասպարիզում. «Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան» (Ա Տիմոթ., Դ 14): «Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ կալ» (Բ Տիմոթ., Դ 5):



ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ

(Խմբագրական «ՀԱՍԿ»ի)

Ս. Էջմիածնի դանդակներու զողանջեն տարածվող մեծ սուգին որպես փոխադարձ մակընթացություն՝ համահայկական սիրո, հավատարմության ու միասնականության զգացումներու և Հայաստանյայց Եկեղեցվո հանդեպ անսասան հավատքի հսկա ալիք մը բարձրացուց շնորհազարդ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումը։

Սփյուռքի բոլոր անկյուններեն, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներեն, Եվրոպայեն, Թալկանյան երկիրներեն, Կիլիկյան թեմերեն և Միջին Արևելքի երկիրներեն, եկեղեցական ու աշխարհական պատվիրակներ փութացին դեպի Ս. Էջմիածին՝ համայն հայության ցավակցությունները հայտնելու Մայր Աթոռին։ Իսկ հուղարկավորության ու թաղման արարողությանց մասնակցեցան Հայրենիքի բոլոր գավառներեն ու շրջակա երկիրներեն հավաքված ներկայացուցիչներ և ժողովրդական խումբեր, ավելի քան 50.000 հավատացյալներ։ Շարքերներով հեռագիրներ, ռադիոներ և մամուլը ժողովուրդին մտածումն ու զգացումը կենդրոնացած պահեցին Հայաստանյայց Եկեղեցվո Ս. Աթոռին և եկեղեցական դեմքերուն և ասոնց առնչակից հարցերու շուրջը։

Այս փոլորը հայտնի ապացույցներն են հայ ժողովուրդի սիրտին խորը տեղ գրաված և արտահայտվելու առիթ փնտրող այն լուսապաշտ ոգիին, հայրենասիրության ու հավատքին, որոնք դարերով կապված են Հայաստանյայց Եկեղեցիին՝ որպես անոր գոյության և ամրության կենդրոնական հաստատության։

Թեև ամեն գիտակից հայու համար ըմբռնելի է, թե եկեղեցական և ազգային տեսակետեն ինչ մեծ բաց կթողու Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանումը թե՛ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի հայության մեջ, բայց մյուս կողմե՝ պետք է պայծառ հոգիով վեր առնել սա իրողությունը, թե անգամ մը ևս Հայաստանյայց Եկեղեցին է, որ իրը հաղորդակցության միջոց ու միության կապ ծառայեց բաժանյալ հայ աշխարհներու միջև։

Ահա երեսուն և ավելի տարիներե ի վեր հայ ժողովուրդի ցրված բնակորները, Հայրենիքի ձորերեն մինչև Սփյուռքի անապատները, չեն կրցած ազատ ու մնայուն հաղորդակցության խողովակներ հաստատել՝ ո՛չ տնտեսական գետնի վրա, ո՛չ քաղաքական, ո՛չ փակ աչքան դյուրատարած մշակութային գետնին վրա։ Հայ աշխարհներու միջև հաղորդակցության, կապի ու միասնության միակ գլխավոր հաստատությունը եղած է Հայաստանյայց Եկեղեցին։ Ըլլա՝ կաթողիկոսներու ընտրության կամ վախճանումի առիթներով Անթիլիասի և Էջմիածնի մեջ, ըլլա՝ կաթողիկոսական կոնդակներու միջոցով, ըլլա՝ Մեռոնօրհնեքի, եկեղեցական համագումարի և ա՛յլ առիթներով, ըլլա՝ Մայր Աթոռի և թեմերու միջև նվիրապետական ու վարչական հաղորդակցությամբ, Հայաստանյայց Եկեղեցին եղած է մեծագույն կազմակերպությունը, որ կպահե ժողովուրդի միությունը տարածուն այս աշխարհի մակերեսին վրա։

Ահա թե ի՛նչ կենդրոնական դիրք կպահե և կարևոր դեր վկատարե Հայաստանյայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգեկան հաղորդակցության և ամբողջական միության պահ-

պանման տեսակետեն։ Եվ մեր ժամանակներու մեջ անոր եզական այս հանգամանքը նկատի պետք է որ ունենան բոլոր անոնք, Եկեղեցական կամ աշխարհական, որոնք գործ կրնեն Եկեղեցիի հետ կամ խոսք կրնեն Եկեղեցիի մասին։

Այս հայացքով դիտված՝ պիտի տեսնվի, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումով հայ ժողովուրդը շրջապատող սուգի մշուշեն վեր իսկ՝ միշտ տարածված կմնա հայ ժողովուրդի հավատքին, հայրենասիրության ու միասնականության լույսը, որ զայն պիտի կանչե, այսպիսի սգավոր օրերու բնական հոռետիտութենեն վեր, դեպի ինքնավերտահություն ու լավատես աշխատանք։

Իրողություն է, պատկերին մեկ կողմին վրա, որ Հայաստանյայց Եկեղեցվո վարիչ ուժերուն մեջ նվազում կտեսնվի, երբ հետզհետե աթոռն կիյնան հին սերունդին մեծ դեմքերը։ Բայց պատկերին մյուս կողմին վրա, նո՛ւյնքան մեծ իրողություն է, թե Հայաստանյայց Եկեղեցին ներկայիս իր վերակազմության շրջանին մեջ կգտնվի թե՛ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեջ։ Արաբական երկիրներուն մեջ կազմակերպված են թեմերը՝ իրենց շուրջ կրթական ու մշակութային լայն գործունեություններով։ Լավագույն արդյունքներ տալու վրա են դարձվանքները։ Պոլիս, հարաբերաբար ազատության շրջանի մը մեջ մտած, եկեղեցական նոր ուժերու պատրաստության համար բացած է իր դրպրեվանքը, առարկա՝ Պոստրիարք սրբազանի իմաստուն հսկողության ու ժողովուրդի գուրգուրանքին։ Ս. Էջմիածին նույնպես տունի իր վերականգնյալ Հոգևոր Ճեմարանը, որուն շրջանավարտները արդեն սկսած են հրապարակ գալ։ Ամերիկայի մեջ կառուցված են բազմաթիվ նոր եկեղեցիներ. Նյու-Յորքի մեջ Մայր Տաճարի մը կառուցման համար բացված մեկ միլիոն դոլարի հանգանակությունը դրոշին կիրով գոյացած է, նույնպես Գալիֆորնիո շրջանի և Հարավային Ամերիկայի թեմերը եռանդուն եկեղեցականներու առաջնորդությամբ վերակազմության մեջ են։

Հետզհետե լեցվելու վրա է Մեծ աղետի հետևանքով գոյացած դատարկությունը եկեղեցական տերունդներու միջև։ Ներկայիս բազմաթիվ են երիտասարդ խանդավառ եկեղեցականներ, որոնք պատասխանատու պաշտոններու բարձրացած են թե՛ Միջին Արևելքի մեր երկիրներուն մեջ, թե՛ Եվրոպա և թե՛ Ամերիկա։ Եվ քիչ տարիներու ընթացքին, անոնք անշուշտ պիտի կազմեն զորավոր սերունդը, որ իր ուսերուն վրա պիտի վերցնե վարչական ու մշակութային ամբողջ պատասխանատվությունը, որ կապված է եկեղեցական նվիրապետության։

Երբեք արդար չէ ուրեմն հրապարակներու վրա սովորական դարձած ավաղանքը՝ թե հիները կմեկնին և անոնց տեղը նորեր չեն դար։ Տապալող մեծությանց փոխարեն շարունակ նոր և արժեքավոր ուժեր հասնելու վրա են, պայմանով որ անոնք հասկացողությամբ ու գուրգուրանքով շրջանակվին։ Մեծ կաղնիներու անկումով զգալի կղատնան անոնց շուրջ բաց մնացած տարածությունները։ Բայց այդ բացերը ժամանակավոր պիտի ըլլան, որովհետև ինկողներու կողքին շուտով բարձրացողները պիտի ըլլան դարձյալ կաղնիներ։

Հայաստանյայց Եկեղեցվո նոր ժամանակներու մեջ վերականգնումին համար Իր մեծ հովանին տարածող այդպիսի հսկա կաղնի մըն էր Գեորգ Զ. Կաթողիկոս, կյանքով, գիտությամբ ու գործով, վարչական իմաստուն ղեկավարության ու հայրական սիրո մարմնացյալ տիպար Հայրապետ մը։ Իր մեծ անձին հմայքին ու հեղինակության կապած էր ամբողջ ազգը։ Անոր իրագործած ծրագիրները մեծ կատարումներ եղան։ Ուրիշ ոչ ոք, մեր ազգի տվյալ նեղկա կացության մեջ, պիտի կարենար հաջողցնել այն ձեռնարկները, զորս ինք հաջողցուց պետության ու ժողովուրդին գործակցությամբ։

Հայրապետական Աթոռի ներքին սահմաններուն մեջ, հոգելույս Կաթողիկոսին վերակազմական կարևոր գործերեն մեկը եղավ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին վերաբացումը, Իր կաթողիկոսական ընտրությենեն անմիջապես ետք, 1945-ին։ Ճեմարանը ցարդ արդեն աված է ութը նորընծա շնորհալի սարկավագներ, որոնցմե երեքը բարձրագույն ուսման կեդրոններ ղրկված են։ Անոնք ապահովաբար քիչ ատենեն պիտի ընդունին վարդապետական ձեռնադրություն և Հայաստանյայց Եկեղեցին ուրախացնեն իրենց թարմ ուժերուն գեղեցիկ գործերովը։

Երջանկահիշատակ Հայրապետի ուրիշ մեկ հաջողությունը եղավ «Էջմիածին» ամսագրին հրատարակությունը, 1944-են ի վեր, որպես արժանավոր շարունակությունը հին շրջանի «Արարատ» ամսագրին, լի Հայրապետի կենդանի շունչովը և պաշտոնական, կրոնական ու մշակութային բովանդակությամբ։

Ս. Աթոռի և պետության փոխադարձ հարաբերության դետնին վրա ևս, Գեորգ Զ. Կաթողիկոս ապահովեց համերաշխ գործակցություն և ստեղծեց վստահության մթնոլորտ։ Այդ փոխադարձ բարեկամեցողության

հողի վրա է, որ Ս. Աթոռին ի նպաստ ապահովվեց կարգ մը իրավասություններ, ինչպես՝ նյութական եկամուտներու ապահովություն, եկեղեցիներու նորոգություն, հրատարակչական գործունեության իրավունք, մաքսային առանձնաշնորհում և այլն։

Գեորգ Զ. Կաթողիկոս եղավ նաև ամուր կապը Հայրենիքի և Սփյուռքի հայության միջև, Իր տեղապահության օրով էր, որ մեծ խանդավառությամբ բացավ «Սասունցի Դավիթ» զորասյունի հանգանակությունը, ու քաջ կեցվածքով հայտարարեց, թե «Հայը չունի ա՛յլ հաստատուն կռվան՝ բայց եթե Մայր Հայրենիքը, Հայաստանյայց Եկեղեցին՝ նրան դլխավորող Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով։

Ան Սփյուռքի հայությունը հորդորեց երեք ուղղությամբ.—

— Նախ, հավատարիմ քաղաքացիությամբ պարտաճանաչ և օրինապահ ապրիլ տեղական այն իշխանություններու հանդեպ, որոնց հովանին կվայելեն հայ ժողովուրդը, շինարարությամբ նպաստելով այդ երկիրներու վերելքին։

— Երկրորդ, Հայաստանյայց Եկեղեցվո, հայ դպրոցի և հայ ընտանիքի շուրջ կազմակերպյալ գործունեությամբ պահպանել հայու դարերեն ծաղկած լուսափառ մշակույթը, ասով հայության տրոշ նպաստը բերելու համար աշխարհին։

— Եվ երրորդ, հայության ցրված բեկորներուն միջև արթնցնել ամբողջական միության գաղափարը, գերագույն փոխայ ունենալով հայությունը միացած ու ամրացած տեսնելու իր պատմական Հայրենիքին մեջ։

Այսպիսի լայն միտքերով՝ ազգին Հայրապետը կհետևեր արտասահմանի բոլոր դաղութներու ազգային, կրոնական ու մշակութային կյանքին, և անընդհատ անոնց կգրեր գնահատանքի ու հորդորանքի կոնդակներ, որոնք տասնյակներով կհաշվվին այսօր, ուղղված այլազան թեմերու և հաստատությանց, Հնդկաստանեն մինչև Ամերիկա։

Մեծ նախանձախնդրությամբ՝ Վեհափառ Հայրապետը կհսկեր Հայաստանյայց Եկեղեցվո ուղղափառ վարդապետության ու վարչական կեդրոնացումի պահպանության։ Իր անսասան հավատքը այն էր, ինչ որ եղած է հավատքը բոլոր պայծառ հոգիներուն՝ թե օտարության մեջ, հեռու հայրենի հոգեշունչ սրբություններեն, հայ ժողովուրդի ինքնուրույն գոյության և ազգային ինքնագիտակցության ամենեն ամուր հիմն է Մայր Եկեղեցին, որ իր նվիրական հուշարձաններով վեհստում է նորա սրտի, նորա հոգու ելևէջների հետ և կենդանի պահում նորա ներքին աշխարհում ազգային ոգին։ Այս համոզումով, Ան կուղղեր շեղողները, կհորդորեր սխալողները և ամեհի սաստումներով կծառանար Եկեղեցվոյն ավանդությունները խախտել ուզողներուն դեմ։

Արտաքին հարաբերությանց մեջ, ո՛չ միայն փոխադարձ հասկացողության ու սիրալիր վերաբերմունքի մթնոլորտի մը մեջ կապերը պահեց էջմիածնի և Անթիլիասի զույգ Աթոռներուն միջև, այլև ավելի լայն միջազգային հորիզոններու վրա՝ հարգալիր հարաբերություններ մշակեց քրիստոնեական ուրիշ Աթոռներու հետ։ Այս մասին, օրինակ, շատ հրահանգիչ են իր թղթակցությունները Անգլիքան Եկեղեցվո Պետ Կենտրբերիի Արքեպիսկոպոս Ջեոֆֆրիի հետ։

Ահա թե ինչպիսի՛ գործունեություններով, ներքին և արտաքին հորիզոններու վրա Իր հեղինակավոր անձին շնորհքն ու հմայքը տարածած դեմք մը եղավ Գեորգ Զ. Կաթողիկոս, սիրված իր ժողովուրդեն, հարգված կառավարությունեն ու մեծարված օտարներեն։ Ան հանդիսացավ մեկը մեր պատմության այն հոգևորական պետերեն, որոնք հայ ժողովուրդի, հայ Հայրենիքի և Եկեղեցվո սրբազան դատին նվիրած են իրենց ամբողջ կյանքը— գործով ու դաղափարով, մեծ ու նկարագիրով հոյակապ դեմքեր, որոնց մեջ հայրենասիրությունը զգացմունք մը չէ եղած, այլ՝ իրատեսություն և իմաստություն։

Հանգուցյալ Հայրապետը ուներ սակայն տակավին մեկ քանի երազներ, որոնց իրագործումին հետամուտ էր և որոնց տեսիլքով փակեց Իր աչքերը։

— Կուզեր Իր օրով վիրանորոգված տեսնել Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։ Կարգադրություններ ըրավ, խոստումներ ապահովեց, և անշուշտ հիմա Իր հոգին խաղաղության մեջ կճանչնա՝ թե հայրենի կառավարությունը հանձն առած է վերանորոգության ամբողջ հոգը,— ինչպես տեսած է վերանորոգել ուրիշ բազմաթիվ պատմական վանքեր։

— Հայրապետը կուզեր նաև նորաբաց Հոգևոր Ճեմարանի պարմանները ընդարձակել և արտասահմանեն ևս սաներ ընդունիլ, ուսանողներուն թիվը բարձրացնելով մինչև հարյուրի, և այս մասին ուժանդակություն ապահովելով արտասահմանի հայությենեն։

— Ուրիշ մեկ երազն էր ընդարձակված տեսնել Հայրենիքի սահմանները հայ ժողովուրդի պատմական իրավունքներու տարածության վրա, և այդ արդար Հայրենի ժառանգության մեջ վերստին ամփոփված տեսնել Իր օտարասփյուռ զավակները։ Այս

մասին իր հեղինակավոր ձայնը միշտ լսելի ըրավ մինչև միջազգային ատյանները։

— Իբրև Իր հայրապետական սիրո արտահայտութիւն՝ Գեորգ Զ. Կաթողիկոս ծրագրած էր նաև, նեռկա տարվան աշնան, Սրբալույս Մեռոնի օրհնութիւն կատարել Ս. Էջմիածնի մեջ։ Բայց Մեռոնօրհնեքի հայտարարութեան մանրամասնութիւնները ըներելիք կոնդակի ժամանումեն առաջ, ահա հեռագրավ հասավ գույժը Իր մահվան, որ անշարժացուց Անոր բազմարդյուն Ս. Աջը։

Այդ երազներով Հայոց Հայրապետը կիջնե հող ու կմիանա մեր հայրերու հավիտենական հանգիստին։

Բայց երազներն են ծնողները իրականութեանց։

Եվ հայ ժողովուրդը իր համատարած վիշտին մեջ պիտի գիտնա վեր առնել իր աչքերը և իր արցունքներու կաթիլներու մեջեն դիտել մեծ տեսիլքները Հայոց Հայրապետին, ձգտելով դեպի անոնց իրականացումը։

Ազգին սուգը, ուրեմն, պետք է որ վերածվի նո՛ր պատասխանատվութեան մը գիտակցութեան, մանավանդ անոնց համար, որոնք հայ ժողովուրդի հոգևոր ու մտավորական գործի մշակներն են, մեծ եկեղեցականներու ձեռքին ինկած ջահը վերցնելու և անոր դարավոր լույսը տարածելու համար Հայրենիքեն մինչև հեռավոր անկյունները հայկական Սփյուռքին։

Դարերու կորստաներեն ու վերականգնումներեն խոստ ազգային մեծագույն հավատքը պիտի մնա այն, թե՝ թեև մեկնողները պիտի չվերադառնան, բայց անոնց տեղը պիտի գրավեն միշտ նորերը։

Կիլիկիո Կաթողիկոսութիւնը, ինչպես իր Տեղապահ սրբազանով, միաբանութեան անդամներով ու մտավորականներով փութալով հանգուցյալ Հայրապետի հուղարկավորութեան ու թաղման արարողութեանց մասնակցելու, բաժնեց Ս. Էջմիածնի մեծ սուգը, նույնպես կտածե անսասան հավատքը՝ թե Ս. Աթոռին նորընտիր Տեղակալ բարձրապատիվ եղիշե արքեպիսկոպոսի իմաստուն վարչութեան տակ, Ս. Էջմիածնի Մայր Աթոռը պիտի շարունակե մնալ գործոն ու լուսարաշխ կենդրոնը համայն հայութեան, մինչև որ, ժամանակի լրումով, կատարվի կաթողիկոսական ընտրութիւնը և վերցվի սուգի քողը Ս. Էջմիածնի Հայրապետական Գահեն, ի մխիթարութիւն միաբանութեան ու հավատացյալ ժողովուրդին և ի պայծառութիւն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1954 թ., մայիս—հունիս, № 5—6)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

(Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ)

ՔԱՐՈԶ

(Խոսված 1954 թվականի սեպտեմբերի 12-ին Մայր Տաճարում, չորս աբեղաների ձեռնադրության կապակցությամբ)

«Ես եմ ճշմարիտ բաղ, ճշմարիտ բաղ
զանազան իւր ցնել ի վերայ ոչխարաց»:
(ՅՈՎՀ., Ժ 11)

Իրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, Ս. Էջմիածինը ցնծության ու բերկրանքի մեջ է, որովհետև Մայր Աթոռի միաբանության շարքերն են ընդունվում չորս երիտասարդ միաբաններ, որոնք ավարտել են Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը։ Նորընծաները՝ Տ. Տ. Պարգև, Վահան, Եղիշե և Հայրիկ աբեղաները անքակտելի սիրով կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի և հայ հավատացյալ ժողովրդի հետ իրենց ծննդով, դաստիարակությամբ և հոգեբանությամբ։

Այս նվիրական պահին, իմ մտածումն ու զգացմունքը, խորը երախտագիտությամբ և անմոռաց վերհուշումով, դառնում են դեպի հանգուցյալ Վեհափառը, հոգելույս երջանկահիշատակ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը, որ 1945 թվականին, դժվարին պայմաններում, մեր հարազատ կառավարության բարեհաճ թույլտվությամբ, բացեց Հոգևոր Ճեմարանը, որը կյանքի էր կոչված Հայ Եկեղեցուն տալու քրիստոնեական ոգով, հայեցի դաստիարակությամբ պատրաստված ու զարգացած քահանաներ և կուսակրոն հոգևորականներ։ Հիրավի, Հոգևոր Ճեմարանի վերջին երկու տարվա շրջանավարտներն արդարացրին երանաշնորհ Վեհափառ Հայրապետի իղձերն ու ցանկությունները, արդարացրին Հոգևոր Ճեմարանի նպատակը։ Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությունն ստանալով, շրջանավարտներից շատերը ավագ տարկավագի կոչում ստացան։ Նորին Սրբությունը ամենաքնքուշ զգացմունքներով էր սիրում Իր սանիկներին. ինչպիսի՜ վառ հույսեր էր կապում նրանց զարգացման ու ապագայի հետ։ Ու տարկավագները արդարացրին իրենց անձին ու գործունեության հետ կապված հույսերը։ Նրանք փայլուն կերպով ավարտեցին Ճեմարանի լրիվ դասընթացը և նրանցից ոմանք, Վեհի բարեհաճ կարգադրությամբ, մեկնեցին Մոսկվա՝ ուսանելու Հոգևոր բարձրագույն Ճեմարանում։ Թեև տնագորույն մահը անակնկալորեն խորտակեց երջանկահիշատակ Հայրապետի երազը և նա չտեսավ Իր սիրասուն զավակների այս հոգեպարար հանդեսը, բայց ես համոզված եմ, որ Նրա մաքուր հոգին սավառնում է այս տոփիս Մայր Տաճարի հոյակապ կամարների տակ, ձեռնադրվածների և բոլորիս գլխին։ Գիտցե՛ք, սիրելի հավատացյալ եղբայրնե՛ր, որ Վեհափառի հոգին անմահ է ու կենդանի, միայն Նրա մարմինն է մեռել, իսկ Նրա հոգին մեզ հետ է, Իր սարկավագների մեջ է, Իր Սուրբ Եկեղեցու և ժողովրդի մեջ է։

Սիրելի նորընծանե՛ր, այսօր դուք Սրբություն Մեսրոպի օծմամբ նոր հոգի առաք ու նոր պարտականություններ ստանձնեցիք։ Այսօրվանից ձեզ վրա, որպես Փրկչի հետևորդների, ծանր, սակայն քաղցր լուծ է դրր-

վում՝ ամենուր քարոզել ավետարանական Հշմարտությունը, նախնյաց ոգով և հավատով, նախնյաց նախանձախնդրությամբ, միշտ պատրաստ գտնվելով ձեր կոչման ու պարտականության դիրքերում, հնազանդ այն ձայնին, որ ձեզ կկոչի ուր կարիք կա։ Գնացե՛ք ձեր կոչման ետևից, ձեր խանդավառ ու բոցաշունչ քարոզներով խոսեցե՛ք մեր նվիրական Հայրենիքի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Հայոց Հայրապետության մասին։ Ձեր քարոզները թող լինեն ձեր հայրենասիրական ու կրոնական համոզմունքների կենդանի արտահայտությունը՝ հագեցված Հշմարտության ոգով։ Եղե՛ք խաղաղության մունետիկներ։ Խաղաղության ձիթենին ու լուսե անմար ջահը ձեռքներիդ, մտե՛ք հայ հավատացյալ հոգիներն ու մեր սուրբ տաճարները, և լցված Ս. Հոգու նոր լիցքով, անմար հավատով, ձեր քարոզներով ոգեշնչեցե՛ք ու մխիթարե՛ք Հշմարիտ խոսքի կարոտ հայ հավատացյալներին։

Այս սուրբ ու նվիրական պահին, հիշեք սուրբգրական այն հուզիչ դեպքը, որը պատահեց Փրկչի համբառնալուց հետո։ Թոմա առաքյալը երկնային Տիրոջ կամքը կատարելով, Հոգեգալստյան տոնից հետո քարոզչական ցուպը ձեռքին, հասավ մինչև Հընդկաստան և ժամանակավորապես իր քարոզչական ասպարեզն ընտրեց Մադրաս քաղաքի արևմտյան մասը։ Նա բնակվեց մի քարանձավում, որի մուտքը այնքան նեղ էր ու ցած, որ մարդ դժվարությամբ էր մտնում։ Այս քարանձավը մենք ևս բախտ ունեցանք մտնել ու երկրպագել։ Քարոզչության վայրը ընտրեց մոտակա բլուրը, ուր, ըստ ավանդության, կանգնած քարոզել է և ունեցել ունկընդիրների հոծ բազմություն։

Արդ՝ սիրելի սանիկնե՛ր, Թոմման գնալով հեռավոր Հնդկաստան, հետևեց Քրիստոսին։ Այժմ դուք ևս, որպես Քրիստոսի հետևորդներ, համարձակ պիտի ելնեք քարոզելու։ Ձեր քարոզը պիտի տոգորված լինի հայրենասիրական վեհ զգացմունքներով, պիտի բացատրեք մեր սրբազան Հայրենիքի կուլտուրական և տնտեսական վերելքը, մեր հիասքանչ շենքերը, գործարաններն ու ֆաբրիկաները։ Ձեր ոգեշունչ քարոզներով, դուք աշխարհի զանազան կողմերում ժամանակավորապես ապաստանած հայության հայրենատենչ բեկորներին պիտի կապեք մեր սրբազան Հայրենիքի, հայության Սրբությունն Սրբոց Ս. Էջմիածնի ու Ս. Լուսավորչի Գահի հետ։ Ո՛ւր էլ որ լինեք, պարտականության և կոչման ձայնը ձեզ ո՛ւր էլ որ կանչի, միշտ հիշեցե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որը ծնավ, դաստիարակեց, սնուցեց ձեզ հոգևոր և բարոյապես։

Սիրե՛նք մեր հզոր Հայրենիքը այնպես, ինչպես սիրում էր բոլորիս հոգևոր ծնող ի Տեր հանգուցյալ երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։

Ուրեմն, սիրելի նորընծանե՛ր, օրհնելով ձեզ, մաղթում եմ ձեզ ուժ, կորով, նոր լիցք և քարոզչական ընդունակություն, Հարատևություն, քաջություն եմ մաղթում ձեզ ձեր նոր պաշտոնավարության սկզբին, ցանկանալով ձեզ հաջողություն ձեր գործունեության մեջ։

«Եվ դու քարոզեա՝ զբանն, հա՛ս ի վերայ ժամու և տարաժամու, յանդիմանեա՝, սաստեա՝, մխիթարեա՝ ամենայն երկայնմտությամբ և վարդապետութեամբ» (Բ Տիմոթ., Դ 2)։

Թո՛ղ մեր պապերի Աստվածը, Ս. Լուսավորչի, Ս. Սահակի, Նարեկացու, Շնորհալու, Տաթևացու Աստվածը դորավիգ լինի ձեզ և մեր սուրբ ու պաշտելի եկեղեցուն։

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո Հայաստանեայց անշարժ և անսասան պահեա ի յաւիտեան»։ Ամէն։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂԱՑԱՎ ՁՈՐՍ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՎ ՁԱՐԳԱՑԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 12-ը, Կիրակի, Խաչվերացի տոն։

Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի հուղարկավորության և թաղման փառաշուք բայց տխուր հանդիսակատարությունից (սույն թվականի մայիսի 27-ից) ի վեր, այսօր, առաջին հանդիսավոր և տրախառիթ արարողությունն էր, որ տեղի պիտի ունենար Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարների տակ— բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը կուսակրոն քահանա պիտի ձեռնադրեր ճեմարանավարտ չորս սարկավագներին՝ Քաջիկ սարկավագ Գեորգյանին, Անդրանիկ սարկավագ Գալամդարյանին, Հենրիկ սարկավագ Ավետիսյանին և Սարգիս սարկավագ Սարգսյանին։ Առաջին երեքը, արդեն մի քանի օր առաջ, ինքնաթիռով Երևան փին ժամանել Մոսկվայից, որտեղ աստվածաբանության և հայագիտության են հետևում երեք տարուց ի վեր։

Ինչպես միշտ, այդ օրը՝ սեպտեմբերի 12-ին, Էջմիածնի Մայր Տաճարը, ծարողական մեծ տուժ ունեցող մագնիսի նման, դեպի իրեն էր քաշում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ հարյուրավոր հավատացյալների, որոնց մի բոպե առաջ Մայր Տաճարում լինելու արտորանքը տեսա ես Հայտրանսի ավտոկայանների և դեպի Էջմիածին սուրացող մարդատար ավտոբուսների մեջ։ Դատելով բարձրաձայն խոսակցություններից, այն տպավորությունն եմ ունեցել, որ ամեն տեսի և տարիքի պատկանող այդ հավատացյալները, այդ օրը՝ Խաչվերացի տոնին, Ս. Էջմիածին էին գնում ո՛չ միայն ուրախանալու համար Հայ Ազգային Եկեղեցու երիտասարդ ու զարգացած հոգևորականներով ուժեղացման իրողությամբ, այլև հոգևոր լույս ստանալու Լուսավորչի մշտարծարծ վանքեղի լույսից, որ Մայր Տաճարի կենտրոնական բարձրակարկառ գմբեթի քառաթև խաչից բխելով տարածվում է աշխարհի չորս ծագերում ցրիվ ընկած հայրենակարոտ քրիստոնյա հայորդիների վրա։

Մայր Տաճարը լիքն է հավատացյալներով։ Նրանք երկյուղածությամբ և ջերմեռանդ ոգով հետևում են գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի մատուցած պատարագին և հետաքրքրությամբ սպասում, որպեսզի կատարվեր սարկավագների տրեղա ձեռնադրության արարողությունը։

Ահա բացվում է Մայր Տաճարի ձախակողմյան սրբազան դուռը, որտեղից դուրս եկած վարդապետ, քահանա և սարկավագ, խնկարձակ բուրվառով և վառված մոմերով, դեպի Ավագ սեղան են առաջնորդում հանդիսականորեն զգեստավորված բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսին, որ կատարելու է ձեռնադրությունն ու օծումը։ Խարտավիլակն է հոգեշնորհ Տ. Կոմիտաս արեղա Տեր-Ստեփանյանը։ Նրանց հետևում են չորս ընծայացուները, որոնք ծնկի են գալիս ձախակողմյան սանդուղքի վրա։

Արարողապետ սրբազանը նստում է Ավագ սեղանի աջակողմում գետեղված աթոռի վրա, իսկ ընծայացուները ծնկաչոք առաջանում և շարք են կազմում Նորին Սրբազնության առաջ։ Ավուր պատշաճի շարականներ, սաղմոսերգություններ և աղոթքներ

իրար են հաշորդում։ Եվ երբ որ արարողադիր արքեպիսկոպոսն արտասանեց երեսուն «Տէր, ողորմեաՀոնների հետևող «Տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենեցուն, փրկիչ և կեցուցիչ և նորոգող ազգի մարդկան...» աղոթքը, չորս Նվիրյալները, միշտ ծնկաչոք, դարձան դեպի ժողովուրդը։ Ձեռքները բաց և վեր բռնելով՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման։ Խարտոմիլակը երեք անգամ երգում է «Աստուածային և երկնատոր» շարականը, որին պատասխանում են դպիրները՝ «Արժանի են» երգելով։ Ապա Նվիրյալները դառնում են դեպի սրբազան արարողապետը, որ ձեռները խաչանման դնում է Նվիրյալների գլխի վրա ասելով. «Ես դնեմ զձեռս իմ ի վերայ տոցա, և զուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցին տոքա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ։ Հետո արտասանում է «Տէր Աստուած ամենակալ՝ ամենագութ՝ ամենախնամ...» աղոթքը՝ շեշտելով, թե «ընդ-ցին սոքա մշակք առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան, սերմանել զկենդանարար և զուղղափառ հաւատս Առաքելական Եկեղեցւոյ յամենայն լսողս...», և իր ձեռքով յուրաքանչյուր Նվիրյալի ձախ ուսի վրայից աջ ուսի վրա է բերում ուղարը՝ ասելով. «Առէք զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի լուծ նորա քաղցր է, և բեռն նորա փոքրոգին։

Քահանայական ձեռնադրության արարողությունը վերջացել է։ Նվիրյալները ոտքի են կանգնում և երկու առ երկու տեղ գրավում պատարագի սեղանի աջում և ձախում։ Դպիրները դաշնորեն երգում են «Սուրբ Աստուածը։ Պատարագիչ սրբազանի «Շնորհօք և մարդասիրութեամբ...» աղոթքից հետո նորընծաները նորից ծնկի են գալիս արարողապետ սրբազանի առաջ, այս անգամ քահանայական զգեստները ստանալու համար։ Այդ զգեստները սկուտեղի վրա բերվում են սարկավագների ձեռքով։ Արարողապետ սրբազանը երկար աղոթելուց հետո, Նվիրյալների ուսերին գցված սև փիլոնը փոխարինում է ծաղկազարդ շուրջառով, որպես «հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան նորակերտ, ի վայելչութիւն նորոգ և հոգևոր կենաց»։ Ապա նորընծաները ստանում են «իշխանութիւն ի Հոգւոյն Սրբոյ՝ կապելոյ և արձակելոյ» և գնում սեղանի ետև՝ զգեստավորվելու համար։ Իջնում է վարագույրը։ Երգվում է «Տէր հուրդ խորհինը։

Վարագույրը բացվելիս, սեղանի աջում երևում են չորս Նվիրյալները՝ հանդիսականորեն զգեստավորված։ Տեղի է ունենալու օծման արարողությունը։ Հոգեշնորհ Տեր Կոմիտաս աբեղան, դպիրների երգած «Կենդանարար Աստուածն» շարականի խազերի ներքո, բուրվառով ու մոմերով քերում է Սրբալույս Մեռոնը։ Արարողապետ սրբազանը, հուզված ձայնով երգելով «Առաքելոյ Աղամանդ» շարականը, հեղում է Մեռոնը ամանի մեջ և հետո մի առ մի օծում չորս Նվիրյալների ճակատը, աջ ծնոքն ու ձախ ձեռքը՝ միշտ երգելով «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի...»։ Այն ժամանակ միայն ներկա հավատացյալներն իմացան, որ Քաջիկ սարկավագը այնուհետև կոչվելու էր Տ. Պարգև աբեղա, Անդրանիկ սարկավագը՝ Տ. Վահան աբեղա, Սարգիս սարկավագը՝ Տ. Եղիշե աբեղա և Հենրիկ սարկավագը՝ Տ. Հայրիկ աբեղա։

Օծման արարողությունից հետո, բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը յուրահատուկ ճարտասանությամբ քարոզեց՝ «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացս» բնաբանով։ Սրբազանը բացատրեց երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի կապած հույսը Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին՝ Հայաստանյայց Եկեղեցու համար աստվածաբան, գիտնական, ժողովրդանվեր նոր վարդապետներ պատրաստելու գործում, Նրա ուրախությունը՝ Հոգևոր Ճեմարանի շրջանավարտների սարկավագ ձեռնադրվելը տեսնելով, Նրա հայրաբարով սերը՝ սարկավագների հանդեպ և երազը՝ մի օր նրանց տեսնելու որպես արժանավոր հոգևորականներ, հայ ժողովրդի, Հայրենիքի և Եկեղեցու ծառայության մեջ։ «Թեև անագորույն մահը անակնկալորեն խորտակեց երջանկահիշատակ Հայրապետի երազը և Նա լսեսավ Իր սիրասուն զավակների այս հոգեպարար հանդեսը, բայց ես համոզված եմ, որ Նրա մաքուր հոգին սավառնում է այս բոլոր Մայր Տաճարի հոյակապ կամարների տակ, ձեռնադրվածների և բոլորիս գլխին», — ասաց քարոզիչ սրբազանը և նորընծաներին ուղղեց հետևյալ պատգամը։ «Այսուհետև գնացեք և քարոզեցեք ճշմարտությունը։ Թող հավիտյանս անսասան մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Իսկ երեկոյան ժամերգության ընթացքին կատարվեց ձեռնադրված աբեղաների օրհնության կանոնը, ինչպես նաև վեղարների օրհնության և աբեղաներին հանձնման արարողությունը։ Հուզիչ էր այն պահը, երբ արարողապետ սրբազանը՝ «Հանցէ՝ Աստուած զհին մարդն գործովք իւրովք» ասելով, հանեց յուրաքանչյուր ձեռնադրյալի գլխի ջրոնը (գդակը) և հագցրեց վեղարը՝

ասելով. «Աստուած զգեցուցանէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ և ճշմարտութեամբ, և եղիցիս դու հպատակ և հնազանդ Եկեղեցւոյ, կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ և ի գիշերի. ամէն»։

Դեռևս այս առավոտ «հին մարդ» նկատված սարկավագները հիմա դառել էին «նոր մարդ» վեղարավոր, հոգեշնորհ աբեղաներ՝ ի փառս և ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ։

***

Նույն գիշեր, Մաղկյա դահլիճի մեջ, ուրախ ու շերմ մթնոլորտում, անց կացավ ի պատիվ նորընծա աբեղաներին տրված հացկերույթը՝ նախագահությամբ բարձրաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի։ Նախագահ սրբազանը մի անգամ ևս ողջունեց երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի հիշատակը և խրատեց նորընծաներին՝ լինել քաջ հովիվներ և ընթանալ այն ճանապարհով, որից ընթացել են Թադեոս և Բարթուղիմեոս առաքյալներից սկսյալ Հայ Եկեղեցու արժանընտիր հայրապետները։ Նորընծաների համար հաջողության մաղթանքներ արին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը։ Պատասխան ճառերով հանդես եկան նորընծա հոգեշնորհ Տ. Պարգև, Տ. Վահան, Տ. Եղիշե և Տ. Հայրիկ աբեղաները և անկեղծ ու սրտաբուխ բառերով կրկնեցին հայ ժողովրդին, Հայրենիքին ու Եկեղեցուն հավատարմորեն և հաստատակամ ծառայելու իրենց խոստումը։ Վերջում արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ, աբեղա, քահանա և սարկավագ միաձայն ու ներդաշնակ երգեցին՝

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա,
Զայնք ճնշեցին սանդարամետք անդնդոց։
Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցեղութեամբ հաւատացեալ արքային։
Եկայք, շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհիս։

ՀՈԳԵԾՆՈՐՀ ՊԵՐԳԵՎ ՍԲԵՂԵՍ ԳԵՈՐԳՅԱՆ

Պարոն աբեղա Գեորգյանը (Քաջիկ սարկավագ Գեորգյան) ծնվել է 1925 թվականին, պատմական Վայոց ձոր գավառի (այժմ Ազիզբեկովի շրջան) Եղեգիս գյուղում, գրագացու ընտանիքում։ Մեծողները՝ Հմայակ և Աստղիկ Գեորգյանները, լինելով բարեպաշտ և կրթասեր անձնավորություններ, ճիգ չեն խնայել իրենց երկու որդիներին լավագույն կրթություն և դաստիարակություն տալու։ Քաջիկն իր սկզբնական կրթությունն ստանում է Եղեգիս գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, այնուհետև, այդ դպրոցի 7-րդ դասարանն ավարտելուց հետո, տեղափոխվում է Երևան ու սովորում №26 կոմիսարներաի անվան դպրոցում։

1945 թվականին մեծագործ Հայրապետ Տերն Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի չանքերով և նախաձեռնությամբ բացվում է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որտեղ նույն տարին Քաջիկն ընդունվում է և սովորում վեց տարի՝ ավարտելով դասարանական և լսարանական բաժինները։

Ճեմարանում սովորելու տարիներին Քաջիկը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի Հայոց Եկեղեցու պատմությունն ու հայ եկեղեցական մատենագրությունը, և հաճախակի լսելով երջանկահիշատակ Հայրապետ Գեորգ Զ.ի՝ Հայոց Ազգային Եկեղեցու և նրա ուղղափառ դավանության մասին ասած իմաստալից քարոզները, սիրում է Հայ Եկեղեցին, նրա դավանությունը, նրա հայրենասեր, անձնազոհ և ականավոր զորձիչներին, ու որոշում է ծառայել այդ ազգանվեր հաստատությանը։ 1949 թվականին Քաջիկը կատարում է առաջին քայլը. նա սարկավագ է ձեռնադրվում։

Հոգելույս Հայրապետը, 1951 թվականին, Քաջիկ սարկավագին, աստվածաբանական գիտությունների մեջ մասնագիտանալու համար, երկու ընկերների հետ ուղարկում է Մոսկվայի Հոգևոր Ճեմարանը, որտեղ և նա մնում է երկու տարի։

Երջանկահիշատակ Հայրապետի սնեռուն նպատակն է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը օժտել երիտասարդ, կարող և կրթված միաբաններով, որոնք պետք է պահպանեին Մայր Աթոռի գոյությունը, վառ պահեին Հայոց Եկեղեցու դարավոր ավանդությունները, հայրապետահաստատ կարգն ու կանոնը, հայրենասիրությունը, ազգասիրությունը և հատուկ սերը՝ դեպի հայ ժողովրդի ստեղծած դարավոր մշակույթը։

1954 թվականի սեպտեմբեր ամսվա սկզբներին, Քաջիկ սարկավագը, դեռևս Մոսկվայում իր ուսումը չվերջացրած, Գերագույն Հոգևոր Խորհրդի հանձնարարությամբ գալիս է Մայր Աթոռ և նույն ամսի 12-ին ձեռնադրվում աբեղա՝ ուխտելով պատվով և հավատարմությամբ ծառայելու Հայ Եկեղեցուն, Ս. Էջմիածնին և Հայրենիքին։



ՀՈԳԵԾՆՈՐՀ ՎԱՀԱՆ ՍՐԲԵՂԻՆ ԳԱԼՍՄԴԱՐՅԱՆ

Վահան արբեղա Գալամդարյանը (Անդրանիկ սարկավագ Գալամդարյան), ծնվել է 1928 թվականի օգոստոսի 13-ին պատմական Անտիոքի մոտ, Միջերկրականի ափին՝ գեղեցիկ Գալատուրան գյուղում։ Նրա Հայրն ու մայրը բարեպաշտ մարդիկ են եղել և իրենց երեխային դաստիարակել եկեղեցասիրությամբ և աստվածասիրությամբ։

Փոքր հասակում Անդրանիկը կրում է կյանքի դառը հարվածը՝ զրկվում է իր սիրելի մորից. մայրը մահանում է 1936 թվականի օգոստոսի 21-ին։

Անդրանիկը նախնական կրթությունն ստանում է Գալատուրան գյուղի եկեղեցուն կից Մեսրոպյան ազգային ուսումնարանում, որի 7-րդ դասարանն ավարտելուց հետո, 1943 թվականին, դիմում է Անթիլիասի Դպրեվանքը՝ հոգևորական դառնալու հաստատ որոշումով։

1945 թվականին, Բեյրութում, Անդրանիկը տեղեկանում է, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը վերաբացվել է. նա երազում է լինել Հայրենիքում և ստվորել Մայր Աթոռի նորաբաց Ճեմարանում։

1946 թվականին Հայրենիք դառնալով, Անդրանիկին հաջողվում է ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որն ավարտում է 1950 թվականին։ Դեռևս Ճեմարանի Ա լսարանի ուսանող՝ նա գուն ցանկություն է ունենում սարկավագ ձեռնադրվելու, և ահա հոգեբույս Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ իր ցանկությունն իրականանում է։

1951—1952 ուսումնական տարում, հանգուցյալ երջանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետի կարգադրությամբ, Անդրանիկն ու իր երկու ընկերները մեկնում են Մոսկվայի Հոգևոր Ճեմարանը՝ ստվորելու և աստվածաբանական առարկաների մեջ խորանալու համար։

1954 թվականի սեպտեմբերի 12-ին, խաչվերացի տոնի օրը, Էջմիածնի Մայր Տաճարում, Անդրանիկը երեք ընկերների հետ ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռնադրությամբ։

ՀՈԳԵՇՆՈՐՀ ԵՂԻՇԵ ՍԲԵՂԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Եղիշե աբեղա Սարգսյանը (Սարգիս սարկավագ Սարգսյան) ծնվել է 1929 թվականի մայիսի 28-ին Էջմիածին քաղաքում։ Նրա ծնողները հրաշքով ազատվել են Վանի կոտորածներից և ապաստան գտել Սովետական Հայաստանում։ Սարգիսն իր սկզբնական կրթությունն ստացել է Էջմիածնի Միկոյանի անվան միջնակարգ դպրոցում։ Ավարտելով միջնակարգ դպրոցը, 1945 թվականին Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի ջանքով վերաբացված Հոգևոր Ճեմարանը առաջին դիմողներից մեկն է լինում Սարգիսը։ Տալով ընդունելության քննությունը համապատասխան առարկաներից, նա ընդունվում է Հոգևոր Ճեմարանի առաջին դասարանը։ Ճեմարանի Գ լսարանում եղած ժամանակ (1951 թ.), նա դիմում է ներկայացնում՝ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը ընդունվելու համար։ Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը միջնորդում է Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին՝ նրան կուսակրոն միաբանության շարքերն ընդունելու համար։ Հանգուցյալ Հայրապետը բարեհաճում է ընդունել նրա դիմումը և կարգադրում է Ներսիսյան Ճեմարանում տեղի է ունենում 1951 թվականի մարտ ամսի 10-ին, Գուրգեն և Հենրիկ սարկավագների հետ, Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապամտի տոնի օրը, Մայր Տաճարում։

Նույն տարվա դեկտեմբերին վերջացնելով ավարտական շարադրությունը և հաջողությամբ հանձնելով քննությունները, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, մի քանի ուրիշ սարկավագների հետ Սարգիսն ևս ուղարկվում է Մոսկվա՝ խորանալու աստվածաբանության մեջ։ Մոսկվայում սովորելը վերջացնելուց հետո, նա վերադառնում է Մայր Աթոռ և նշանակվում Հոգևոր Ճեմարանի վերակացու։

1954 թվականին Սարգիս սարկավագը դիմում է ներկայացնում Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ որպեսզի իրեն շնորհվի աբեղայի կոչում։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը ընդառաջում է Սարգիս սարկավագի դիմումին. երեք սարկավագների հետ, 1954 թվականի սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռքով նրան շնորհվում է կուսակրոն քահանայի կոչում։

ՀՈԳԵԾՆՈՐՀ ՀԱՅՐԻԿ ՕԲԵՂԸ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայրիկ աբեղա Ավետիսյանը (Հենրիկ սարկավագ Ավետիսյան) ծնվել է 1928 թվականին։ Նրա ծնողները գաղթել են Տաճկաստանից և իրենց միջնակարգ կրթությունն ստացել Երևանի Ամերիկյան որբանոցում։ Հենրիկի ծնողներն աշխատել են իրենց երեխաներին մանուկ հասակից գաստիարակել քրիստոնեության ոգով։ Հենրիկը միշտ էլ հափշտակությամբ էր լսում բարեպաշտ մոր հետաքրքիր պատմությունները Քրիստոսի, առաքյալների, Հայ Եկեղեցու մեծ հայրապետների կյանքի զանազան դրվագների վերաբերյալ։

Միջնակարգ կրթությունը Հենրիկն ստացել է ծննդավայրում (Աշտարակի շրջան, Ուջան գյուղ)։ Չնայած տնտեսական որոշ դժվարություններին՝ ծնողները ոչինչ չեն խնայել իրենց երեխաների կրթության համար։ 1948 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցը, Հենրիկն ընդունվում է Երևանի պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը (հոգեբանություն, տրամաբանություն և հայոց լեզու)։ 1950 թվականին վերջացնելով համալսարանի 2-րդ կուրսը, Հենրիկն ընդունվում է Նորաբաց Հոգևոր Ճեմարանը։ Հոգևորական լինելու սերը վաղուց զարթնել էր նրա երիտասարդ հոգում։ Եվ նա հնազանդ զնում էր իր կոչման ետևից։ 1951 թվականին Հենրիկը ձեռնադրվում է սարկավագ և իր կյանքը ընդմիշտ կապում Հայ Եկեղեցու հետ։ 1952 թվականին ավարտելով Հոգևոր Ճեմարանը, նա մեկնում է Մոսկվա՝ ռուսաց Հոգևոր Ճեմարանում լսելու աստվածաբանական առարկաներ ու տիրապետելու ռուսաց լեզվին։

1954 թվականի սեպտեմբերի 12-ին, Ս. Խաչվերացի տոնի օրը, Մայր Տաճարում, երեք ընկերների հետ, Հենրիկը ձեռնադրվում է կուսակրոն քահանա։

ԴՆԵԼ Ե. ՎՐԴ. ՃԵՐԵՃԵԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ՝

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Ս. Էջմիածնեն տրված հեռագիր մը 1954 մայիսի 6-ին կհաղորդեր, թե Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս ծանր հիվանդ է։ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս թութարեր լուրը իսկույն հաղորդեց Կիլիկիո թեմերուն և հրահանգեց նույն ամսու 9-ին, կիրակի օր, կատարել հանդիսավոր Հայրապետական մաղթանք՝ ի բժշկութիւն հիվանդ Հայրապետին։ Մինչ տրոշյալ օրը բազմահազար հայեր «Տէր ողորմեա» կերգեին բժշկությանը համար Ամենայն Հայոց Հայրապետին, անդին, Երևանի հիվանդանոցներեն մեկուն մեջ, նույն օրը, առավոտյան ժամը 7.40-ին, Այրարատյան նախամեծար Մայր Աթոռ. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Զորեքշյան հոգին կավանդեր առ Աստված։ Մահվան լուրը կդուժեր Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե տրված հեռագիրը 1954 մայիսի 9-ի։ Կիլիկիո Կաթողիկոսարանն ևս ստացավ նույն հեռագիրը, որուն ի պատասխան Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս ղրկեց հետևյալ հեռագիրը.

«Խորապես վշտացած ենք Վեհափառ Գեորգ Զ.ի մահվան առթիվ։ Ընդունեցեք մեր միաբանության և ժողովուրդի խորին ցավակցություններ։ Անմիջապես ճեռագրեցեք թաղման թվականը»։

Պատասխան հեռագիրը կհաղորդեր, թե օծման և թաղման կարգը պիտի կատարվի ընթացիկ ամսույս 23-ին, կիրակի օր, Ս. Էջմիածին։

Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս իսկույն բացառիկ նիստի հրավիրեց իր մոտ գտնվող Աթոռի եպիսկոպոսները և անոնց հետ խորհրդակցաբար տրոշեց պաշտոնական պատվիրակությամբ մը մասնակցիլ Երանաշնորհ Հայրապետի օծման և թաղման արարողությանը։

Պատվիրակությունը Թեյրութեն մեկնեցավ 1954 մայիսի 20-ին, Խաչդեի օդակայանեն, հինգշաբթի օր, կես դիշերին։ Հակառակ գիշերվան ուշ ժամուն, բազմահազար հայեր օդակայան եկած էին ողջերթի։ Պատվիրակությունը անձամբ կգլխավորեր Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս, որ անձնական մտերմություն հաստատած էր Երանաշնորհ Հայրապետին հետ, երբ 1941-ին Հայաստան գացած էր, որպես պատվիրակ Կիլիկիո Կաթողիկոսության, մասնակցելու համար Ամենայն Հայոց Հայրապետի կաթողիկոսական ընտրությանը։ Պատվիրակության մյուս անդամներն էին դերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյան, հոգեշնորհ Տ. Շավարշ վարդապետ Գուրտմեյան՝ կաթողիկոսական փոխանորդ Դամասկոսի հայոց, հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյան, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյան, տեարք Գեորգ Զաթալպաշյան, Վահե Վահյան, Սիմոն Սիմոնյան և Պողոս Անթոյան։ Կիլիկիո պատվիրակության հետ ճամբա ելավ նաև Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատվիրակությունը, որ կբաղկանար երկու վարդապետներե՝ հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան և հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ասլանյան։

Պատվիրակությունը Բելգրադին համար եկավ հոլանդական K. L. M. քառամեքենա օդանավով և Հռոմ հասավ առավոտյան ժամը 8.15-ին։ Երկու ժամ սպասեցինք Հռոմի մեջ։ Ապա համար եկանք դեպի Ժընև, ուր հասանք տեղական ժամով ժամը 12-ին։ Օդանավային ընկերության պաշտոնյաներեն մեկուն առաջնորդությամբ, մեզի պատեհություն տրվեցավ պտտիլ քաղաքին տեսարժան մեկ քանի կողմերը։ Հսկա օտորուս մը մեզ առաջնորդեց դեպի Ժընևի ներսի կողմերը։ Ժընև աշխարհի ամենեն հարուստ քաղաքներեն մեկն է, թերևս իր տեսակին մեջ մինակը, ուր ամենազգի պատվիրակություններ կուգան ու կերթան։ Ժամ մը պտտեցանք քաղաքին մեջ։ Տեսանք հին ու նոր Ժընևը, անցանք կառավարական շենքերու և Ազգերու Լիգայի պալատին առջևեն, ուրկե կըրնայինք դիտել Ֆրանսայի բլրոտ մեկ հողամասը՝ Ժընևի լիճի մյուս ափին։

Վերադարձանք օդակայան, ուր առինք կեսօրվան ճաշը և մեզի սեղանակից ունեցանք մեկ քանի Ժընևարնակ ազնիվ ազգայիններ, որոնց հետ ունեցանք ջերմիկ զրույց ազգային-եկեղեցական հարցերու շուրջ։ Անոնք խանդավառությամբ արտահայտվեցան, թե Ժընև երբևիցե այնքան վեղարավոր չէր տեսած, և թե շատ ուրախ պիտի ըլլային, եթե հաճախակի ըլլային նման այցելություններ։

K. L. M. օդանավը մեզ հասցուց մինչև Ժընև, ուրկե մեր ճամբան շարունակեցինք դվիցերիական բիմոտոր օդանավով մը։ Ժամը 4-ին ձգեցինք Ժընևը և մեկ ժամեն հասանք Ցյուրիխ, ուր տեսանք աշխարհի գեղեցկագույն օդակայաններեն մեկը։ Ցյուրիխ մնացինք երկու ժամ, ուրկե նույն օդանավով և տեղատարափ անձրևով ճամբա եկանք դեպի Վիեննա։ Վիեննա հասանք տեղական ժամով 8.30-ին։ Ընկերության օտոբուսով փոխադրվեցանք քաղաք, որ օդակայանեն բավական հեռու կգտնվեր։ Առաջնորդվեցանք հյուրանոց մը, ուր մեզի տրվեցավ ամեն դյուրություն գիշերը հանգիստ անցներու։ Առաջին գիշերն էր, որ մենք հանգիստ կուտայինք մեր խոնջած մարմիններուն՝ պատրաստելով դանոնք վաղվան հոգնություններուն։

Հաջորդ առավոտ, շաբաթ, 22 մայիսի 1954, ժամը 5.30-ին հյուրանոցեն ճամբա եկանք դեպի սովետական օդակայան, որ քաղաքեն մոտավորապես 40 կիլոմետր դուրս կգտնվի։ Պաշտոնական ձևակերպություններեն ետք բարձրացանք սովետական բիմոտոր օդանավ մը, որ ճամբա եկավ ժամը 6.30-ին և Կիև հասավ տեղական ժամով ժամը 12.30-ին։ Կիև առաջին սովետական քաղաքն էր, ուր կիջնեինք։ Անցագրերու ստուգումեն ետք հրավիրվեցանք օդակայանի մասնավոր մեկ հարկաբաժինը, ուր խնդրեցինք սովետական օդանավային ընկերությունեն, որ կարգադրություն ընե մեզ Կիևեն ուղղակի Երևան հասցնելու՝ կարենալ ներկա ըլլալու երանաշնորհ Հայրապետի օծման և թաղման արարողությանց, որոնք պիտի կատարվեին հաջորդ օր, կիրակի, 1954 մայիսի 23-ին, ըստ պաշտոնական հեռագրին։ Բարձրաստիճան սպան մեր խնդրանքը հասցուց իր մեծավորին, որ ընդառաջելով մեր փափագին, հեռաձայնային հաղորդակցության մեջ մտավ Էջմիածնի հետ, ուրկե պատասխանվեցավ, թե թաղումը հետաձգված է ամսու 27-ին, հինգշաբթի, Համբարձման տոնին։ Այլևս հարկ չկար, որ օդանավը իր տվորական ուղին փոխեր։

Կիև մեր մուտքը կզուգադիպեր պատմական դեպքի մը 300-ամյակին։ Ամբողջ սովետական հանրապետությունները մեծ շուքով կնշեին Ուկրաինիա և Ռուսիա միացման 300-ամյակը։ Օդակայանը դրոշակազարդված էր միութենական հանրապետություններու հակայական դրոշակներով և գինանշաններով։ Օդակայանի հսկա շենքին ճակատը կզարդարեին Սովետական Միության մեծ ղեկավարներու նկարները, որոնց մեջ կգտնվեր նաև հայազգի փոխ-վարչապետ Անաստաս Միկոյանի նկարը։ Հպարտությամբ դիտեցինք նաև ա՛յլ դրոշակներու շարքին հայկական դրոշը, որ կծածաներ հաղթական և վես, հայ արիներու թափված արյունովը բոստրացած։ Հո՛ն մանավանդ զգացինք, թե հայը արժեք մը կներկայացնե հսկայական տերության մը բազմամիլիոն ազգաբնակչության մեջ, հակառակ քանակով իր նվազության։

Այս խանդավառ մտածումով առաջնորդվեցանք օդակայանի ճաշարանը, ուր մեզի հրամցվեցավ ճոխ սեղան մը։ Ապա տեղական ժամով ժամը 3-ին բարձրացանք օդանավ՝ թռչելու համար դեպի Մոսկվա։ Հաղիվ օդանավ բարձրացած էինք, պատվիրակության պետին՝ բարձրաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոսին ներկայացվեցավ Մոսկվայեն ղեռ նոր ժամանած պատվիրակություն մը, որ Կրոնից նախարարության անունով, պաշտոն ուներ բարի գալուստ մաղթելու Սիրալիր ծանոթացումեն ետք, օդանավը թռիչք առավ դեպի Մոսկվա, ուր հասանք տեղական ժամով ժամը 5.40-ին։

Օդակայան դիմավորելու եկած էին Սովետական Միության Կրոնական պաշտամունքներու խորհուրդի նախագահ Պոլյանսկի,

նուն խորհուրդի ավագ աշխատակից Սմիռնով, արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյան և բարեշնորհ Անդրանիկ ավագ սարկավագ Գալամգարյան։ Դիմավորողներու խումբին խառնված էր նաև Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ դերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյան, որ նոր ժամանած էր Մոսկվա։ Աստնցմե իմացանք, թե մեզմե քիչ առաջ ժամանած են Հյուսիսային Ամերիկայի առաջնորդական տեղապահ դերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան և նախկին առաջնորդ դերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, որոնք մեկնած են Մոսկվայի ինացիոնալեն մեծ պանդոկը, իսկ Ռումանիո հայոց պատվիրակները՝ առաջնորդ դերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան և Ազգային խորհուրդի ատենապետ տիար զոկտ. Հակոբ Բամբուկջյան և տիար Վ. Դանիելյան եկած և անցած են դեպի Երևան, իրենց հետ ունենալով փարիզահայ գրող Տիար Լևոն Մեսրոպը։

Պաշտոնական ձեակերպություններե ետք առաջնորդվեցանք Մոսկվա, որ օդակայանեն մոտավորապես 40 կիլոմետր հեռու կգտնվեր, և իջևանեցանք ինացիոնալեն հյուրանոցը։

Կես գիշերեն ետք, ժամը 1.30-ին, ճամբա ելնելանք դեպի օդակայան, ուր ժամը ճիշտ 3-ին, կիրակի առավոտ, 1954 մայիսի 23-ին օդանավ առինք և թռանք դեպի Երևան։ Օդանավը, որ մեզ կտաներ դեպի Երևան, կկոչվեր «Երևան»։ Օդանավորդները հայ և ճամբորդներն ևս հայ էին, որոնք կթռչեին դեպի հայոց աշխարհը, Հայաստա՜ն։ «Երևան» օդանավը մեզ հասցուց Խարկով՝ տեղական ժամով ժամը 6-ին։ Անձրևի կաթիլներուն տակ օդանավեն վար իջանք այն հողին վրա, ուր ամենեն ահեղ ճակատամարտները մղվեցան Համաշխարհային երկրորդ պատերազմին։ Արդեն վերանորոգված է Խարկով, ուր մնացինք 30 վայրկյան։ Ռոստով հասանք տեղական ժամով 8.20-ին։ Ժամը 9-ին Ռոստովեն ճամբա ելանք դեպի Սուխումի, ուր հասանք երևանյան ժամով 12.45-ին, անցնելով Կովկասյան լեռներու վրայեն, Սև ծովի եզերքով։ Ճամբան տեսանք Սոչի, որ Սովետական Միության մեծագույն և գեղեցկագույն բուժավայրերեն մին է, տարածված Սև ծովի ափին, և ուր տվոր էր դալ և հանգչիլ նաև երանաշնորհ Հայրապետը՝ Գեորգ Զ.։

Սուխումիի մեջ բավական հայեր կան։ Օդակայանին մեջ ծանոթացա երկու հայերու հետ, որոնք լացին, երբ լսեցին Վեհափառ Հայրապետի մահը։

Սուխումիեն դեպի Երևան ճամբա ելանք երևանյան ժամով 1.15-ին, Սև ծովը ձգած մեր աջին։ Օդանավը միշտ կբարձրանա, որովհետև պիտի անցնի բարձրաբերձ կատարներու վրայեն։ 2.800 մետրի վրայեն դիտեցինք Թիֆլիս քաղաքը, որ փռված է ընդարձակ տարածության մը վրա, Քուռ գետի երկու եզերքներուն։ 3.000 մետր բարձրության վրայեն տեսանք Քուռ գետը մեր աջին, որ կմիանա Խրամի հետ։ Անոնց միացման կետին վրա նետված է կամուրջ մը, որ կմիացնե Վրաստանը Սովետական Հայաստանի։ Հայրենի սահմանեն ներս մտանք 3.000 մետրը բարձրության վրա, երևանյան ժամով ժամը 2.45-ին։ Սահմանագլուխը անցանք հատնկայս երգելով հայրենի հիմնը։ Ահա մեր աջին քառագագաթ Արագածը, իսկ ձախին՝ Գեղամա լեռները. քիչ մի անդին Սևանը, աշխարհի բարձրագույն լիճերեն մին, որուն մեջ կերևա կղզին՝ իր դույգ կաթողիկեներով և Գրողներու հանգստյան տունով։ Դիմացը է հայու փառքին ու զժբախտության, ցնծության և տրտմության բուռ վկան... Ա՜ՐԱ՜ՐԱ՜Տ, Բնության կպատճառե անարիական ցնցումներ, թերևս ի տես հարյուր նվիրականության՝ Սևանա լիճին, քառագագաթ Արագածին և Մեծ ու Փոքր Մասիսներուն։ Հազիվ կհասնինք Մաղկաձոր ու կդիտենք հանդիպակաց Արարատը, երբ մեր ոտքերուն տակ կտեսնենք քաղաք մը, որ Երևանն իսկ է։ Առաջին հայ տունին վրայեն անցանք երևանյան ժամով ժամը 3.20-ին և քանի մը վայրկյանեն իջանք Երևանի օդակայանը, ուր մեզ դիմավորելու եկած էին Ս. Էջմիածնի միաբանության կողմե Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Հակոբյան, հոգեշնորհ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյան, պրոֆ. Աշոտ Աբրահամյան, Ճեմարանի տեսուչ և Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ պարոն Մինաս Մինասյան և քանի մը սարկավագներ, Հայկական ՍՍՌ Մինիստրներու Սովետին կից Հայ Եկեղեցիի գործերու խորհուրդի նախագահ Հրաչյա Գրիգորյան, Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության կողմե տնօրենի տեղակալ պարոն Լ. Մանասերյան, «Սովետական Հայաստան» ամսագրի պատասխանատու խմբագիր պարոն Պատրիկ Սելյան (Հյուսիսային Ամերիկայեն ներգաղթած), պարոնայք Բարբոյան, Գասպարյան և Դավիթ Մովսիսյան։

Ս. Էջմիածնի անտանով բարի գալուստ մաղթեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան։ Պատվիրակության կողմե ցավակցական արտահայտություն ունեցավ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս։

Պատվիրակությունը առաջնորդվեցավ Երևանի «Մոսկվիչ» հյուրանոցը, որ կգտնվի Աբովյան փողոցի վրա։ Պատվիրակության ժամանման լուրը ռադիոյով հաղորդված ըլլալով, Երևանի հասարակությունը փութացած էր օդակայան և «Մոսկվիչ» հյուրանոց։ Մեզի տրվեցավ պաշտոնական ճաշ։ Սեղանի վրա արտասանվեցան ճառեր, նվիրված երանաշնորհ Հայրապետին, Ս. Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսությանց, Ս. Նրուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությանց, Սովետական Հայաստանի և անոր կառավարության։

Ճաշեն ետք պատվիրակությունը պաշտոնական գնացքով մեկնեցավ Ս. Էջմիածին, ուր դիմավորվեցավ Գերագույն Հոգևոր Խորհուրդի նախագահող անգամ բարձրապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի կողմե, շրջապատված Ս. Էջմիածնի մյուս անդամներով — գերաշնորհ Տ. Սարգեն եպիսկոպոս Թորոսյան, հոգեշնորհ Տ. Վարդան ծայրագույն վարդապետ Տեր-Սահակյան, հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյան, հոգեշնորհ Տ. Եզնիկ վարդապետ Ազնավորյան, հոգեշնորհ Կոմիտաս աբեղա Տեր-Ստեփանյան և քահանա հայրեր ու սարկավագներ։

Պաշտոնական բարի գալուստի ու ցավակցական արտահայտություններեն ետք պատվիրակությունը այցելեց Վեհի մարմնին, որ կհանդչեր Մաղկյա դահլիճին մեջ զետեղված փառաշուք դագաղի մը մեջ։ Պատվիրակությունը գիշերը վերադարձավ Երևան, «Մոսկվիչ» հյուրանոց, ուր մնաց մինչև իր մեկնումի օրը։

***

Պատվիրակությունը, որ երկար ճանապարհորդությենեն հոգնած էր, հաջորդ օրը ամբողջ (24 մայիսի 1954, երկուշաբթի) հանգիստ ըրավ։ Մոսկվիչ հյուրանոցը վերածված էր ուխտատեղիի մը, ուր ներգաղթող հայեր կուգային տեսակցելու պատվիրակության անդամներուն հետ, անոնցմե ստանալու համար խարիսխներ արտասահմանի իրենց հարազատներեն։

***

Պատվիրակությունը մայիսի 25-ին (1954), երեքշաբթի օր այցելեց Երևան քաղաքի գանազան վայրերը՝ առաջնորդությամբ հրիտասարդ ճարտարապետ Վարազդատ Հարությունյանի և ընկերակցությամբ Երևան քաղաքի դիմավոր ճարտարապետ Գրիգոր Աղաբաբյանի և ԱՕԿՍ-ի (Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերություն) պաշտոնյաներուն։ Առաջին շենքը, ուր այցելեցինք, Ճարտարապետներու տունն էր, որ հայկական ճարտարապետության գլուխ գործոց մըն էր։ Մանրթացանք Ճարտարապետներու տան տնօրենին հետ, որ կկոչվի Լ. Ներսիսյան։ Զեկուցում ըրավ ճարտարապետ Վարազդատ Հարությունյան։ Երևան քաղաքը պլանավորված է հանգուցյալ ակադեմիկոս Թամանյանի կողմե։ Պլանի իրագործումը կշարունակվի երիտասարդ ճարտարապետներու ձեռքով։ Արագորեն մրցարձրանան, ընդհանրապես չորս հարկի վրա, հայկական ոճով մեծ ու պզտիկ, սյունազարդ ու կամարակապ սիրուն շենքեր, քառասուն մետր յայնքով պողոտաներու երկայնքին, որոնք եզերված են կանաչազարդ ծառերով և էլեկտրական սյուներով, որոնց վրա տեսնվող են շորս-հինգ դոքներով էլեկտրական լամպեր, որոնց գիշերները կլուսավորեն Երևանը։ Այցելեցինք Ստալինի մոնումենտ-քանդակը, անցնելով Ղուկասյանի արդիով։ Հայկական բարձրությամբ այս հիշատակարանը կիշխե Երևանի երեք շորրորդին և պատրաստված է մեկէ ավելի ճարտարապետներու և ճարտարագետներու ձեռքով։ Նրբությամբ և վարդյակներու պեպպիտությամբ քանդակված են փոթոռական այս հիշատակարանի մանավանդ գրոնզե դուռն ու կամարները, որոնք սքանչացում կառթեն այցելուներու։ Ղուկասյանի զրուսաբդիի միջով իջանք քաղաք և այցելեցինք Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը, որ կգտնվի Օպերայի հսկայական և հայկական ոճով սքանչելի շենքին կից։ Մեր Օպերայի շենքը իր նմանը չունի ամբողջ աշխարհի մեջ։ Հսկայական երեք ջահեր կլուսավորեն մեծ դահլիճը, որ կահավորված է ամենեն արդիական կահ-կարասիքով։ Հոն հանդիպեցանք աշխարհահռչակ երգիչ և դերասան Պավել Լիսիցյանի, որ կպատրաստվեր մեկնիլ Թիֆլիս՝ տարու համար համերգային երեկո։ Անցանք Երևանի փակ շուկան, որուն նմանը չտեսանք նույնիսկ Մոսկվայի մեջ։ Հայկական ոճով հսկա դուռնե մը ներս մտնելով այցելեցինք Փակ շուկայի զանազան մասերը, ուր հայ վաճառորդներ կծախեին իրենց արտադրությունները պետական սակով։ Մաքրությունը տիրական էր ամենե մեջտեղ և գիները՝ մատչելի։ Փակ շուկայեն ուղղվեցանք դեպի Հաղթանակի կամուրջը, որ նետված է Զանգվի վրա։

Քիչ մը անդին, Զանգվի ձախ ափին տեսանք Ս՝անկական երկաթուղին իր կայարանով և դրոսավայրով, ուր մանուկներ խմբովին կուղան զբոսնելու։ Վայրաշարժ քշողները, կայարանապետն ու ճամբորդները բոլորն ալ մանուկներ են, որոնք այժմեն կատարին Հայրենիքին ծառայելու կերպերը։ Մանկական երկաթուղիեն անդին կտնամի Միջին Արևելքի մեծագույն կամուրջը, որ կմիացնե Երևանը Շահումյանի։ Ճարտարապետն է Գրիգոր Աղաբաբյան։ Կամուրջը յոթանասուն մետր բարձրության վրա հետված է Զանգվի ձորի վրա։ Զանգուն ձգելով մեր աչին՝ հառաջացանք դեպի Ստադիոն (մարզարան), անցնելով Երևանի հին թաղամասի մը մեջեն, որ կմնա որպես նմուշ հին Երևանեն։ Հազարավոր երկսեռ մարդիկներ յոգարաններու շուրջ շարված էին՝ յոգանք առնելու համար։ Դաշտը կարիլի չէ բաղդատել Լիբանանի կառավարական դաշտին հետ։ Դաշտին երեք չորրորդը կիսաբոլորակ եզերված է քարաշեն աթոռներով, ամփիթատրոնի նստարաններուն ձևով։ Ապա անցանք Համալսարանի նոր շենքին մոտով, որ փռված է ընդարձակ տարածության մը վրա։ Համալսարանի հին շենքը իր մեջ կհաշվե 18 ֆակուլտետ և քաղաքիվ պոլիտեխնիկ հաստատություններ։ Նոր շենքը պիտի ընձեռե ավելի լայն հնարավորություններ՝ ամենեն արդիական կառույցով և սարքավորումով։ Կեսորը անց վերադարձանք հյուրանոց՝ մեծապես խանդավառ մեր Հայրենիքին հակայական վերելքով։

Նույն օրը երիկոյան ժամը 4-ին, պատվիրակությունը մեկնեցավ դեպի Ս. Էջմիածին, երանաշնորհ Հայրապետի մարմինը Մաղկյա դահլիճեն Մայր Տաճարը փոխադրելու համար։ Քառասունե ավելի քահանաներ և քանանվեց վիճարավոր վարդապետ-եպիսկոպոսներ ներկա եղան հանդիսավոր այս թափորին։ Մարմինը փոխադրվեցավ ծիսական-կանոնական շարականներով, աղոթքներով, գիրքի և ավետարաններու ընթերցումներով։ Դագաղը ուսամարտ կտանեին վեղարավոր եկեղեցականներ։ Հավատացյալներու սովորաթիվ քաղաքություն մը փութացած էր Ս. Էջմիածին, համբուրելու համար Աջը երանաշնորհ Հայրապետին։ Հայ ոստիկաններու շոկատ մը կպահպաներ կարգը՝ շղթա կազմած վեհարանեն մինչև Մայր Տաճար։ Բազմությունը կուլար՝ զգալով թե առհավետ կտրսնցուցած է մեծ, հայրենանվեր և գործունյա Հովվապետ մը, մինչ Էջմիածնի զանգակները աղեկոտ և ընդհատ-ընդհատ կհնչեին՝ բաժնեկից ըլլալով սգավոր բազմության անհուն տրտմությանն։

Եկեղեցական դասը երանաշնորհ Հայրապետի մարմինը Մայր Տաճար փոխադրելե ետք մատույց երեկոյան ժամերգություն և կատարեց հանդիսավոր հոգեհանգիստ՝ նախագահությամբ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աշչապահյանի։ Սովորականեն ավելի տխուր կհնչեր «Ահեղ խորհուրդ քահանայիս» երգը, որու ընթացքին կուլար նաև «Վարպետը՝ Ալիտիք Խաչակյան, երանաշնորհ Հայրապետի մտերիմն ու գործակիցը։ Այս տխուր արարողության ներկա էր նաև Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ տիար Ս. Ի. Կամսարական, որուն սրտանվեր եկեղեցասիրությունն ու ծառայությունը արժանի են ամեն գնահատանքի։ Պատվիրակությունը ուշ ատեն վերադարձավ Երևան, հյուրանոց, պաշտոնական նույն դնացքով։

***

Պատվիրակությունը հաջորդ օր, 26 մայիսի 1954, շաբաթ-շաբաթի, այցելեց Երևանի էլեկտրամեքենաշինական ու ժամացույցի գործարանները։ Առաջինը կգտնվի Կանչուկի 3-րդ թաղամասին մեջ, իսկ երկրորդը՝ Նոր-Արաբկիր։ Էլեկտրամեքենաշինական գործարանը պատիվ կբերե Հայաստանի կառավարության՝ իր մեծության և անմրցելի արտադրություններուն պատճառով։ Տնօրենն է Գուրգեն Զոլագյան, իսկ գլխավոր ճարտարապետը՝ Աղասի Միրզոյան։ Կարտադրե էլեկտրական ամեն տեսակի գործիքներ, ինչպես նաև գեներատորներ, տրանսֆորմատորներ, տուրբիններ և այլ կարգի մեծ ու պզտիկ մեքենաներ, որոնք կապահովեն համայն Սովիտական Միության հանրապետություններուն մեջ։ Հազարավոր գործավորներ կաշխատին անոր մեջ, որոնցմե շատեր վգերակատարեն իրենց տարեկան աշխատանքը։

Ժամացույցի գործարանին տնօրենն է Արշակ Հարությունյան, իսկ գլխավոր ճարտարապետը՝ Էլկանա Հարությունյան։ Գործարանը քանի մը տարիներու կյանք ունի և արդեն կարտադրե տարեկան մեկ միլիոն սեղանի ժամացույցներ։ Առաջադրված է շուտով բանալ ժամացույցի գործարան մը, որ արտադրե ձեռքի ժամացույցներ, որոնք կարենան մրցել զվիցերիական ժամացույցներու հետ։

Զույգ գործարաններուն մեջ ևս կաշխատին ներգաղթող հայեր, որոնցմե շատերուն

անունները կարդացինք պատվո տախտակներուն վրա։

Մայիսի 27-ին, հինգշաբթի օր, Համբարձման առնին, տեղի ունեցավ եբանաշնորհ Հայրապետի ծծումն ու թաղումը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ։ Ներկա էին պետական և կրոնական բարձրաստիճան ներկայացուցիչներ։ Հասարակությունը հավաստիացվեցավ, թե հարյուր հազարեն պակաս չէր։ (Օծման և թաղման նկարագրությունը տրված է «Հասկ»-ի 5—6 համարում, պարոն Սիմոն Սիմոնյանի հոդվածում.— խմբ. «Էջմիածին» ամսագրի)։

***

1954 մայիսի 28-ին, ուրբաթ օր, պատվիրակությունը ուղևորվեցավ դեպի Սևան, Քանաքեռի ճամբայով։ Ճամբուն վրա հանդիպեցավ Արզնիի բուժավայրը, որուն բժիշկն է Սուրեն Անդրեասյան և բժշկուհին՝ Գոհար Բաղալյան։ Բուժավայրին մեջ տեսանք հայրենասիրներ և օտարներ, որոնք եկած էին արձակուրդի իրենց օրերը հոն անցնելու, կազդուրվելու և կամ բուժվելու համար։ Անոնք հոգածու խնամք կվայելեն տեղվոյն բժշկական խումբեն և ստորադաս պաշտոնյաներեն։ Բուժավայրը օժտված է բժշկական ամեն տեսակ սարքավորումներով. իսկ հրաշք կկատարե բուժավայրի հանգային շուրը։ Պատվիրակությունը այցելեց բոլոր հարկարաժինները և իր աջանչացումը հայտնեց բժշկական կազմին։ Բուժավայրը շրջապատված է կանաչազարդ պարտեզ-պուրակով մը, որուն մեջ բուժավայրի բնակիչները մեն կուգան կամ կհանդըստանան։ Բուժավայրի ստորոտով կհոսի Հրազդան գետը։

Հաջորդ և գլխավոր մեր այցելությունը վայրն էր Սևանա լիճը, Սևանա կղզին և Սևանգէոը (Սևանի ջրաէլեկտրակայանը)։ Սևանգէսի տնօրենն է Թաթուլ Մարտիկյան, որ առաջնորդեց մեզ և տվավ անհրաժեշտ բացատրություններ։ Ջրաէլեկտրակայանը կաշխատի Սևանի ջուրով, որ 125 մետր բարձրությունեն նետվելով կդարձնե վիթխարի մեծությամբ տուրբիններ, և ապա անցնելով անջրդի դաշտերու մեջեն՝ կոտոռդ ընդարձակ տարածությամբ հողեր։ Սևանգէսը Հայաստանի մեծագույն փառքերեն մեկն է։

Կանցնինք Սևանա կղզին, որ այլևս վերածված է թերակղզիի։ Սևանգէսի սպառած ջուրը երևան բերած է պարանոցը, որուն վրայեն մեզ փոխադրող ինքնաշարժները շատ հեշտությամբ անցան։ Այժմ մենք կը դիմենք բնակիչներեն ենք և կբարձրանանք բլուրը, որուն գագաթին վրա կառուցված են հայկական զույգ կաթողիկեներ։ Մոտակա գյուղի բնակիչներու հոգեկան պահանջները փոհացում տալու համար՝ կառարեցինք կարճ ժամերգություն մը։ Օդը ամպոտ էր և անձրևի վախ կար. այդ պատճառով չկրցանք այցելել Գրողներու հանգստյան տունը, որ կառուցված էր բլուրին ստորոտը։ Սևանա ափին։ Պատվիրակությունն ճաշ տրվեցավ Սևանի հյուրանոցին մեջ, ուր ներկա էին նաև ռեստորանի հյուրանոցի վարիչ պարոն Սաթյան, Կրոնական գործերու խորհուրդի նախագահներ՝ պարոններ Պոլյանսկի և Հրաչյա Գրիգորյան և ա՛յլ պետական անձնավորություններ։ Սեղանի գլխավոր դարձն էր իշխանաձուկը։ Բաժակներ պարպվեցան Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի բարգավաճման համար։ Ուշ երեկոյին պատվիրակությունը հասավ Երևան։

***

Մայիսի 29-ին (1954), շաբաթ օր, երեկոյան ժամը 8.30-ին պատվիրակությունը ներկա եղավ Երգի և պարի անսամբլի ելույթին, որ տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին մեջ, որուն շինությունը վերջացած է 1953-ին, և որ ունի 1.400 աթոռ։ Սրահը ծայրեծայր լեցուն էր երաժշտասեր հասարակությամբ։

***

Մայիսի 30-ին (1954), կիրակի երեկոն հատկացված էր ասմունքի վարպետ տաղանդավոր Սուրեն Քոչարյանին, որ ճանչցված է որպես Հայաստանի «Հուշի մարդ», որովհետև 31 գիրքեր ամբողջությամբ կրնա գոց արտասանել՝ առանց հուշարարի։ Երեկույթը սկսավ ժամը 8.40-ին և Սուրեն Քոչար երկուք ու կես ժամվան մեջ արտասանեց Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»ն։ Սուրեն Քոչար արժանի է խորագույն հիացմունքի։

***

1954 մայիսի 31-ին, երկուշաբթի օր, արշավանք կազմակերպված էր դեպի Կարմիր բլուր, առաջնորդությամբ Զոհրապ Գասապյանի, որ ներգաղթած է Բուլղարիայեն։ Կարմիր բլուր վերջերս ենթարկվեցավ պեղումներու, ուր երևան բերվեցան ուրարտական հնություններ, անվնաս կոթող մը և պարիսպներու մնացորդներ, որոնք իրենց հնագիտական առարկաներով և արձանագրություններով նոր լույս կսփռեն հարց պատմության վրա։ Պեղումներուն վարիչն է ռուսազգի Պիոտրովսկի, որ միաժամանակ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է։ Կարմիր բլուր կգտնվի Հրազդան գետի ձախ ափին։

Նույն օրը, կեսօրե ետք, ժամը 1.30-ին, պատվիրակությունը առաջնորդվեցավ դեպի Պետական մատենադարան (Ձեռագրատուն), որուն վարիչն է Շուշանիկ Նաղարյան, և որ կգտնվի երկրորդ հարկի վրա, ուր կպահվին 11.000 մեր ձեռագրերը, մինչև առաստաղը հասնող երկաթե դարաններու մեջ, անեղծ և անաղարտ։ Մասնավոր ապակեդարանները մեջ ցուցադրված էին ավետարաններ, ճաշոցներ, հայրամավուրքներ և ա՛յլ ձեռագրեր, ըստ նրոպի դասավորված։ Կան առանձին աշխատանոցներ գիտնականներու և համալսարանական ուսանողներու համար, պատշաճ կահավորումով։

Մատենադարանի համար շինված է նոր և չքնաղ շենք մը, որ լրանալու մոտ է և ուր ի մոտո պիտի փոխադրվին բոլոր ձեռագիրները։

Նույն օր, կեսօրե ետք ժամը 4-ին, պատվիրակությունը այցելություն տվավ Հայկական ՍՍՌ Գիտություններու ակադեմիան, որուն անունով դիմավորվեցավ փոխ-նախագահ Մ. Ներսիսյանի կողմե։ Նախագահը՝ Վիկտոր Համբարձումյան, կգտնվիր Մոսկվա։ Ներկա էին Հայկական Գիտություններու ակադեմիայի իսկական և թղթակից անդամներեն շատեր։ Փախանարձ ծանոթացումե ետք ղեկույց փոխ-նախագահը՝ պատմակաը ընելով Հայկական ակադեմիայի հաստատման և զարգացման։ Ակադեմիան ունի հինգ բաժանմունքներ և ամեն մեկ բաժանում՝ մեկե ավելի ինստիտուտներ, իրենց տնօրեններով։ Ակադեմիան այժմ ունի 26 իսկական և 18 թղթակից-անդամներ։ Ունի իրեն հատուկ տպարան, որ անցյալ տարի տպած է 150 մեծ ու փոքր գիրքեր։ Պետական թանգարանը, բացի Պատկերասրահեն, կհամարվի Ակադեմիայի հիմնարկ. իսկ Մատենադարանը՝ առանձին հիմնարկ, ուր սակայն ակադեմիկոսներ կերթան աշխատանքներ կատարելու։

Մեծ հաճույք մը եղավ պատվիրակության անդամներուն համար ծանոթանալ Հայկական Գիտություններու ակադեմիայի անդամներուն հետ, որոնցմե ոմանք հյուրեր ունեցան իրենց ճաշերու մասին։

Հայկական Գիտություններու ակադեմիան իրականացումն է դարերու մեր երազին և ամեն հայ իրավունք ունի հպարտանալու անով, որովհետև անոր մաս կկազմեն համաշխարհային չափանիշով արժեքավոր ակադեմիկոսներ։

***

1954 հունիսի 1-ին, երեքշաբթի օր, ժամը 11.20-ին, պատվիրակությունը մեկնեցավ դեպի Դվինի ավերակները՝ առաջնորդությամբ Կարո Ղաֆադարյանի, որ ղեկավարն է Դվինի պեղումներուն, և որ առանձին գիրք հրատարակած է պեղումներու արդյունքի մասին։ Գիրքը արդեն սպառած է։ Պատվիրակությունը ուշի-ուշով հետևեցավ մեծ դիտնական-պատմաբանի մոտ երկու ժամ տևող բացատրություններուն Դվինի ավերակներու մասին։ Պահ մը մենք զմեզ զգացինք ներկայությանը հայրենասեր և հոետոր Հովհաննես մեծ հայրապետին, որ համերաշխություն կքարոզեր 5-րդ դարու տիստապահ և ուրացող նախարարներու միջև՝ երբ կպատեկենք Դվինի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի ավերակներուն մեջ։ Հավատացյալ ժողովուրդը այժմ խաչքարի մը առջև իր մոմը կվառե ու խունկը կծխե հաղորդվելու համար իր նախնիքներուն մաքուր հավատքով և սիրով։

Դվինի ավերակներեն բաժնվելով ուղղվեցանք դեպի Աթարբեկյան կոլտնտեսությունը, որ կգտնվի Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղին մեջ։ Դվինեն ոչ շատ հեռու Գյուղը նախապես կոչված է Քյուրդքենդ։ Նորաշեն կոչված է 1924-ին, Վանեն գաղթական հայերու կողմե։ Կոլտնտեսությունը կազմված է 1928-ին՝ 18 կոլտնտեսականներու միացումով։ Այժմ գյուղը իր մեջ կհաշվե 370 տուն, որոնց բոլորն ալ մաս կկազմեն կոլտնտեսության։ Արորի և դուքանի տեղը բռնած է տրակտորը։ Կոլտնտեսության հիմնական զբաղումը այգեգործությունն է, որուն տրամադրված է 252 հեկտար հող։ Կան ուրիշ տնտեսություններ ևս։ Կոլտնտեսությունը այժմ բանկի մեջ ունի 3.900.000 ռուբլի, որ գոյացած է 10—15 տարիներու ընթացքին։ Կոլտնտեսությունը կհաշվե 600 աշխատողներ, որոնցմե 450-ը միայն կաշխատի օրական։ Իւրաքանչյուր կոլտնտեսական կստանա օրական 13 ռուբլի և 23 կարեկ, 700 գրամ դինի, 60 գրամ վոտկա (օղի), մեկ ու կես կիրո ցորեն և 300 գրամ կաթ։ Ամեն մեկ ընտանիք տնամերձ ունի 1.200—1.800 քառակուսի մետր հող, մեկ կով, տասը մայր տչխար, մեկ գոմեշ, մեկ ձի և էշ մը։ Ընտանիքը ինք կմշակե և ի՛նք կուտե։ Կոլտնտեսության նախագահն է Օգսեն Նշանի Մինասյան, որ մեզի տվավ վերոհիշյալ տեղեկությունները՝ իր դրասենյակին մեջ։ Կոլտնտեսությունը ունի իր դպրոցն ու նորակերտ ակումբը, ուր առաջնորդվեցանք նախագահի ընկերակցությամբ։ Դպրոցը կոչված է Ավետիք Իսահակյանի անվամբ։ Տնօրենն է Վաղարշ Գրիգորյան։ Դպրոցը ունի լաբորատորիայի ճոխ բաժին՝ գիտական փորձերու համար։ Այցելեցինք տեղացի և Պարսկաստանեն

ներգաղթած կոլտնտեսականներու տոմարը, ուր հավասարապես մեզի հրամցվեցավ գինի և խորտիկ։ Տեղացիի և ներգաղթողի միջև տարբերություն գոյություն չունի։

Կոլտնտեսության նախագահի տան մեջ տրվեցավ ճոխ սեղան, որուն շուրջ բոլորվեցանք մոտ 70 հոգի, որոնց առջև դրված ուտեստեղենի առատությունը անտեսանելի կդարձներ սեղանի ծածկոցը։ Սեղանի վրա ուրախությունը իր գագաթնակետին հասավ, երբ կոլտնտեսության դհոլ-զուռնան և դուդուկը սկսան նվագել փոխնիփոխ Կոմիտասին ու ժողովրդական գեղջուկ երգերեն կտորներ։ Հաղիվ կարելի եղավ համոզել նախագահը, որ մենք պետք է որ մեկնինք, մինչ ան՝ Հայաստանի գյուղական սովորության համաձայն, կուզեր մեզ նվաղագույնը... երեք օր հյուր պահել իրեն մոտ։

Նույն օրը, երեկոյան ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ Արշակ Բ օպերային՝ Պետական օպերայի շենքին մեջ։ Երաժշտություն՝ Զուխաջյանի, և հրաշալի դեկոր։

***

Հունիսի 2-ին (1954), չորեքշաբթի օր, կեսօրեն առաջ ժամը 11—2.30-ին, հանդիպում մը կարգադրված էր Հայաստանի գրողներուն հետ։ Հանդիպումը Գրողներու միության նախագահին՝ Ավետիք Իսահակյանի փափագին վրա տեղի ունեցավ իր նորակառույց տանը մեջ, ուր ամեն ինչ ընտիր ճաշակով հարդարված էր։ Ներկա էին Վարպետը, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Արազի, Սիրաս, Գուրգեն Բորյան, Գեորգ Էմին, Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Քոչար, Վահան Գրիգորյան, Շաքե Վարազյան, Հակոբ Արամյան, ԱՕԿՍ-ի պաշտոնյաներեն տնօրենի տեղակալ Լ. Մանասերյան, Պատրիկ Սելյան, Մանվել Բարլոյան և Դավիթ Մովսիսյան։ Հրաչյա Քոչար նոր վերադարձած էր Մոսկվայեն, ուր կպատրաստվեր մեկնիլ նորեն՝ զբաղելու համար իր «Մեծ տան զավակներ» վեպին ռուսերենի թարգմանության գործով։

Փոխադարձ ծանոթացումե ետք՝ Հայաստանի գրողներեն ելույթներ ունեցան Վարպետը, Դերենիկ Դեմիրճյան, Սիլվա Կապուտիկյան, Գեորգ Էմին և Գուրգեն Բորյան, որ հայ Գրողներու Միության քարտուղարն է, իսկ պատվիրակության անդամներեն՝ Տիրան արքեպիսկոպոս, Վազգեն եպիսկոպոս, Շահե վարդապետ և Վահե Վահյան։

Հոն իմացանք, թե Դերենիկ Դեմիրճյան լրացուցած է Մեսրոպ Մաշտոցի կյանքը պատկերող պատմական իր նոր վեպը և այժմ կզբաղի անոր վերամշակումի գործով։

Շատ խանդավառ մթնոլորտի մը մեջ բաժնվեցանք իրարմե՝ մաղթելով, որ նման հանդիպումներ ավելի հաճախաղեպ ըլլան և ավելի լայն շրջանակի մը մեջ։

***

Հունիսի 3-ին (1954), հինգշաբթի օր, յոթնօր թաղման երանաշնորհ Հայրապետին։ Պատարագ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ, Ավագ տեղանի վրա։ Պատարագիչն էր Ռումանահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան, որ և քարոզեց «Հայր մերոյի պահուն՝ վեր առնելով գերը Ս. Էջմիածնի և թվելով արժանիքները երանաշնորհ Հայրապետին։ Պատարագը երգվեցավ Եկմալյան երկսեռ քառաձայն՝ դեկավարությամբ Ներգաղթող Հրանտ Գեորգյանի։ 100 հոգինոց երգչախումբը կազմված էր ընդհանրապես Ներգաղթողներեն։ Տաճարեն ներս և դուրս հավատացյալներու բազմությունը կհորդեր։

Պատարագեն ետք յոթնօրի կարդ երանաշնորհ Հայրապետի հողակույտին առջև, որ կիլնա հայրենասեր դուրգ հայրապետներու՝ Աշտարակեցիի և Խրիմյանի գերեզմաններուն միջև։

Հավարտ կրոնական արարողություններուն, տեղի ունեցավ խորհրդակցական հավաքույթ մը Ս. Էջմիածնի Հայրապետանոցի Սաղկյա դահլիճին մեջ՝ նախագահությամբ բարձրապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի։ Ներկա էին պատվիրակությունների կրոնական և աշխարհական անդամները՝ գրեթե բոլորը։ Հավաքույթին նպատակն էր «Էջմիածին» ամսագրին բովանդակության և ծավալումի մասին թելադրանքներ լսել արտասահմանի պատվիրակությանց կողմեն։ Եղան շինիչ թելադրություններ և հանձնառություններ պատվիրակությանց կողմեն։

Նույն օր, երեկոյան ժամը 8—11, պատվիրակությունը ներկա եղավ Արամ Խաչատրյանի Գայանե բալետին, Պետական օպերայի շենքին մեջ։ Հայաստանի ժողովուրդը այդ երեկո փաստեց, թե ոչ միայն առավելաբար կքաջալերե ազգային ոգիով տոգորված օպերաները և տրամաները, այլև հասած է արվեստի ըմբռնման բարձրագույն կետին։

(Շարունակելի)

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1954 թ., մայիս—հունիս, № 5—6)



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿԱՖԱՑԵՑՈՒ ՉԱՓԱԾՈ ՏՈՄԱՐԸ

§ 1.

Հայկական ձեռագրերում մեզ ծանոթ չափածո տոմարների մեջ ուշադրության արժանի է Վարդան Կաֆայեցու տոմարը, որը մեկնություն է «ՊատՃէն տոմարին Հայոցդ» և գործնական խորհուրդներ է պարունակում իր ժամանակին ընդունված և կանոնված տոմարական հաշվումների համար։

Վարդան Կաֆայեցին հայ մատենագրության մեջ քիչ հայտնի հեղինակներից է։ Նա, որքան մեզ հայտնի է, հայագիտության մեջ հիշվել է միայն իր մի տաղի կապակցությամբ՝ «Տաղ ի վերայ վարդի», որը հրատարակվել է նախ «Արարատ» ամսագրի մեջ 1893 թվականին (էջ 423—427), իսկ 1896 թվականին արտատպվել բանասեր Կ. Կոստանյանի «Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ» ժողովածուի երրորդ հատորում (էջ 11—12)։ Սակայն հրատարակիչները զարմանալիորեն լռությամբ են անցել հեղինակի անձնավորության, նրա ապրած ժամանակի և ունեցած այլ աշխատությունների հարցի վրայով։

Ձեռագրերում մեզ են հասել Վարդան Կաֆայեցու ընդօրինակած կամ ընդօրինակել տված մի շարք ձեռագրերի հիշատակարանները, որոնց մեջ որոշ տեղեկություններ կան նրա անձնավորության մասին։ Սակայն Կաֆայեցու մասին արժեքավոր տեղեկություններ մենք գտնում ենք նրա չափածո մի ընդարձակ հիշատակարանում, որն ընդօրինակված է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2.706 ձեռագիր Աստվածաշնչում։ Հիշատակարանն ունի հետևյալ վերնագիրը. «Շարադրեցաւ բանս ըստ անուանց տառից Վարդանայ եպիսկոպոսէ»։

Փորձենք այդ հիշատակարանի և մեզ ծանոթ այլ նյութերի վրա վերականգնել Վարդան Կաֆայեցու կյանքի և գործունեության կարևոր թվականները և իրադարձությունները։

§ 2.

Վարդան Կաֆայեցին ծնվել է Ղրիմի Կաֆա քաղաքում 1615 թվականին։ Այդ մասին ինքը հետևյալն է գրում.

«Ի թուականիս Հայոց հազարերորդի
Եւ է վաթսուն և չորս թիւ ասեյորդի,
Իմ ընծայման աւուրս ի յայսմ ամի,
Եւ տանուտէրն տարոյն էր Եկատորի»։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2706, թ. 673ա)։

Կաֆայեցու հոր անունն է եղել Եռովք, իսկ մորը՝ Աննա։ Այդ մեզ հայտնի է մի շարք հիշատակարաններից։

Վեց տարեկան հասակից Վարդանն սկըսում է սովորել տեղի ծխատեր Ներսես քահանայի մոտ, որի հոգևոր որդին է համարում իրեն.

«...Ուր ամ այլ ընթերցայ առ ոտրն ծերի,
Ներսէս անուն աւրհնեալ սուրբ քահանայի...
Եւ ես եղէ իւրեան հոգևոր որդի...»
(Նույն էջում).

Ներսես քահանայի մոտ իր ուսումը ավարտելուց հետո, Կաֆայեցին ջանասիրությամբ շարունակում է ուսումնասիրել հին մատենագրությունը և խորանում նրա մեջ.

«Ճանկացայ ընդ ուսումն հետևել գրրի,
Վեշտասան տարեկան ի չափ հասակի,
Աւր աւուր ընթեռնուլ բան Հոմերոսի,
Առաւել զօրութեամբ ըստանալ բարի»
(Նույն էջում).

1635 թվականին երիտասարդ Վարդանը հոր հետ ճանապարհվում է Կոստանդնուպոլիս, հավանական է առևտրական նպատակով, բայց այստեղ դժբախտություն է պատահում նրան— հայրը հիվանդանում է և մահանում։ Վարդանը հարկադրված է լինում մի տարի մնալ Կոստանդնուպոլսում, հոր վրա տապանաքար է քաշել տալիս և ապա վերադառնում Կաֆա։ Սակայն Կաֆայում նա նոր դժբախտության է հանդիպում— մայրը նրան ամուսնացնում է, բայց յոթ-ութը ամիս չանցած կինը հիվանդանում է և մահանում։ Այդ մասին նա գրում է.

«...Դարձայ Կաֆա քաղաք մօրըս գընացի,
Աւրհնեալ խրղճուկ մարիկս ուրախացուցի,
Որ զիս ամուսնացոյց ի մէջ աշխարհի,
Եւ ութ ամսեան վերայ մեռէ ես այրի,
Արգարուկ ամուսինս իւր հոգոյն տուփ»
(Նույն էջում).

Վարդանը այս դեպքից հետո թողնում է իր հայրենի Կաֆան և գնում Սուրխաթ՝ շարունակելու իր թերի կրթությունը։ Նա այստեղ աշակերտում է Զաքարիա աբեղայի մոտ՝ ուսումնասիրելով տոմարը և այլ գիտություններ .

«Եւ աբեղայ անուն Տէր Զաքարիայի,
Աշակերտել նմա տումարականի,
Գանձի գունեն որ կայ զամէն դաս առի,
Եւ զիւր աւրհնեալ հոգոյն Աստուած
տղորմի։
(Նույն էջում)։

Հինգ տարի Սուրխաթում մնալուց հետո, Վարդանը վերադառնում է իր հայրենի Կաֆա քաղաքը և աշակերտում խաչատուր եպիսկոպոսին, որն իր ժամանակի աչքի ընկնող և մատենագրության մեջ պատրաստված հոգևորականներից է եղել։ Նա այստեղ քահանա է ձեռնադրվում խաչատուր եպիսկոպոսի կողմից և քահանայագործում մինչև իր ուսուցչի մահը՝ 1646 թվականը։

Այնուհետև Վարդան Կաֆայեցուն մենք գտնում ենք Ս. Աննայի վանքում՝ վանահոր պաշտոնով։ Նա այստեղ մնում է տասներկու տարի՝ 1646 թվականից մինչև 1658 թվականը.

«Որ ըզկրնի տրա՝ տասներկու տարի
Միաբանակ մընացի վանք Սուրբ Աննայի,
Երկու հովու ջաղացք ես բանեցուցի,
Եւ Աստուած շինողաց հոգւոյն ողորմի»։
(Թ. 674բ)։

1659 թվականին զրիմեցի մի խումբ հավատացյալների հետ Վարդանը ուխտի է գնացել Երուսաղեմ և այդ ճանապարհին դրել իր նշանավոր բանաստեղծությունը՝ «Տաղ ի վերայ վարդի», որի մասին խոսելիք առջևում։ Նշված տաղում Վարդան Կաֆայեցին իր ուխտագնացության մասին հետևյալն է գրել.

«Սա[2] յարմարեալ թուականիս մեծ հայուն,
Հազար հարիւր, ութերորդ աւելորդոյն
(1659 թ.).
Ճանապարհին Երուսաղէմա[յ] դալուն,
Աբեղայի ծոյլ Վարդան ասուանելոյն»։
(Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռագիր № 1636, թ. 108բ)։

Վարդանը Երուսաղեմի ուխտից վերադառնում է նորից Կաֆա և շարունակում իր պաշտոնավարությունը նախկին Ս. Աննայի վանքում՝ զբաղվելով միաժամանակ հայկական գրչությամբ՝ ընդօրինակելով ձեռագրեր.

«Քաղաքավարութեամբ սիրով գրէի,
Գեղեցիկ մագաղաթ՝ գիրք կատարէի...»
(Հայկական ՍՍՌ պետական Մատենադարանի ձեռագիր № 2706, թ. 674բ)։

Իր երկարամյա աշխատանքով Վարդան Կաֆայեցին մեծ հեղինակություն է ստեղծում տեղի հայկական համայնքի շրջանում, որը և համախոսական է կազմում և 1680 թվականին ուղարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսի մոտ՝ եպիսկոպոսական կոչում շնորհելու ու հոգևոր առաջնորդ նշանակելու Ղրիմի հայության։

Ժամանակակից կաթողիկոսը՝ Հակոբ Ջուղայեցին այդ թվականին գտնվում է Կոստանդնուպոլսում։ (Ջուղայեցին Էջմիածնի

1. Այսինքն՝ Սիմեոն վարդապետից հետո։
2. Նկատի ունի վարդի մասին իր գրած տաղը։

1678 թվականի նշանավոր ժողովից հետո, Իսրայել Օրու և այլ ընկերների հետ միասին, եկել էր Կոստանդնուպոլիս՝ այնտեղից անցնելու Արևմտյան Եվրոպա՝ Հայաստանի ազատագրության գործին օգնություն խնդրելու նպատակով, որը, ինչպես հայտնի է, չհաջողվեց և կաթողիկոսն այստեղ էլ մահացավ։ Վարդան Կաֆայեցին իր համախոսականով ահա Կոստանդնուպոլսում ներկայանում է Հակոբ կաթողիկոսին և վեց ամիս նրա մոտ մնալուց հետո ձեռնադրվում է եպիսկոպոս և վերադառնում Կաֆա՝ կաթողիկոսի կողմից նշանակվելով Ղրիմի հողևոր առաջնորդ։

Վարդան Կաֆայեցին այդ պաշտոնում մնում է երկար ժամանակ, մինչև իր մահը, որը տեղի է ունեցել 1712 թվականին։ Մահացման նույն տարին, Վարդան Կաֆայեցուն պատկանող մի Աստվածաշնչի լուսանցքում Ստեփան «նորահաս վարդապետը» թողել է հետևյալ ուշագրավ հիշատակագրությունը. «Զայս Վրդանէսս՝ Տէր Վարդան եղև, մինչև հարիւր տարի ապրեցաւ, ՌՃԿԱ.ին (1712 թ.) մեռաւ, Աստուած ողորմիս (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2706, թ. 254ա)։ Ստեփանոս Գրիչը Վաբդան Կաֆայեցու կյանքի տևողության հարցում անշուշտ սխալ է կատարել— մեզ հայտնի է, որ Վարդանը ծնվել է 1615 թվականին և մահացել 1712 թվականին, ուրեմն նրա տարիքը եղել է հարյուրից քիչ պակաս՝ 97 տարի։

§ 3.

Վարդան Կաֆայեցին իր այս երկարատև կյանքում ընդօրինակել է շատ ձեռագրեր, որոնց գլուխ գործոցը Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2706 Աստվածաշունչն է, որի վրա նա աշխատել է տասնյակ տարիներ և ավարտել Վարդան քահանայի աջակցությամբ։

Վարդան Կաֆայեցին գրել է մի շարք տաղեր, որոնք առանձին արժեք չունեն և, գլխավորապես, նվիրված են Ղրիմի հայկական այս կամ այն վանքի կառուցմանը կամ նորոգմանը և անարվեստ են։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում հայտնի են Վարդան Կաֆայեցու հետևյալ տաղերը.

ա) «Սուրբ Աստուածածնի վանից նորոգման, ասացեալ Վարդան եպիսկոպոսէ Կաֆայեցւոյ»։—

Վերստին կազմեցաւ սուրբ եկեղեցի,
Գեղեցիկ և բոլոր գումբէթաձևի...»

(№ 3504՝ թ. 229բ—230բ, № 1636՝ թ. 109ա—111բ, № 3119՝ թ. 191ա—բ)։

բ) «Վարդան եպիսկոպոս Կաֆայեցւոյ ասացեալ։—

Զմեղսամակարդ հոգիս [յ]ոռի,
Եւ զպարտական բիւր քանքարի...»

(№ 1636՝ թ. 139բ—140ա, № 3504՝ թ. 176բ, № 3860՝ թ. 170ա—174ա)։

գ) «Ղրումու Սուրբ Խաչ վանուցն, Վարդան եպիսկոպոսէ ասացեալ։—

Վարդապետն Յիսուս, Աստուածն համայնի,
Եւ տայ խնդրողաց շնորհարաշխ հոգի...»

(№ 1636՝ թ. 117բ—119ա, № 3119՝ թ. 226բ—227ա, № 7193՝ թ. 152բ—154բ)։

դ) Առանց խորագրի։—

«Վարդան եպիսկոպոս ծառայ Քրիստոսի,
Պատմեմ ձեր սիրելեացդ եղբարք իմ բաշխի.
Աւերութեան վանք Սուրբ Աննայի,
Արնչափ աւեր կնցաւ քառասուն տարի...»

(№ 3504՝ թ. 230բ—231բ)։

ե) «Վասն աւերման Սուրբ Աննայի վանիցն և վերստին նորոգման, ասացեալ Վարդան վարդապետէ։—

Վարդան եպիսկոպոս ծառայ Քրիստոսի,
Պատմեմ ձեր սիրելեացդ եղբարք իմ բարի...»

(№ 1636՝ թ. 111բ—115բ, № 3119՝ թ. 192ա—193ա)։

զ) Առանց խորագրի։—

«Վերստին կազմեալ սուրբ եկեղեցի,
Յովակիմ անուն վանք Սուրբ Աննայի...»

(№ 1636՝ թ. 114ա—115բ, № 3119՝ թ. 193ա—բ, № 3504՝ թ. 228բ—229ա)։

է) «Նորին Վարդան եպիսկոպոսէ ասացեալ, Սուրբ Օգսէնտ եկեղեցւոյ։—

Վերստին կազմեցաւ սուրբ եկեղեցի,
Կամարաձև հաստատեալ և խաչ կամարի...»

(№ 1636՝ թ. 115բ—117ա, № 3119՝ թ. 193ա—194ա, № 3504՝ թ. 229ա—բ)։

ը) «Տաղ ի վերայ վարդի, ասացեալ Վարդան Պարոն Հէրի։—

Վարդն է բացուեր առաւօտուն գոյնզգոյն,
Հոտն բուրէր անմահութեան զօրն ի բուն...»

(№ 1636՝ թ. 106բ—108բ, № 3504՝ թ. 182բ—183ա)։

թ) «Աստենութիւն ի վերայ Կաֆայու Վարդան Կաֆայեցոյ։—

Աստուած և Տէր ամենակալ,
Զպաղատանս մեր ընկալ...»

(№ 8504՝ թ. 125բ—130բ)։

§ 4.

Վարդան Կաֆայեցու չափածո ստեղծագործությունների շարքում ամենից արժեքավորը նրա տոմարն է, որի վրա ուզում ենք մի քիչ երկար կանգ առնել։

Վարդան Կաֆայեցին իր այդ տոմարը գրել է 1676 թվականին Կաֆայի աթոռանիստ Ս. Աստվածածին վանքում։ Այդ մասին նա իր վերև հիշված չափածո հիշատակարանում հայտնում է.

«Հազար հարիւր թուականի,
Քսան և հինգ յարաբարդի,
Առ ոտրն Սուրբ Աստուածածնի,
Որ է յաթոռ առաջնորդիս»։

Ուշադրության արժանի է, որ ներկա տոմարի գրելու նպատակը երիտասարդներին տոմարական արվեստը ուսուցանելն է եղել.

«Վարդան ծառայ Հաւր Աստուծոյ...
Խորհուրդ արար շարադրելոյ...
Այլ և ջանիւ ոտք հանելոյ
Դիւրեաւ մանկանց ուսանելոյ»։

Պետք է ենթադրել, որ չափածո այս տոմարը պարտադրում էին աշակերտներին ծայրից ծայր անգիր անելու համար, որը սովորելու դեպքում աշակերտը յուրացնում էր տոմարական հաշիվների հիմնական սկզբունքները և կարողանում ազատ հաշվումներ անել։

Վարդան Կաֆայեցու ներկա տոմարի նյութը, հիմնականում, «Պատճէն տումարին Հայոցն» է հանդիսացել։ Այդ դժվար չէ տեսնել ներքև բերված փոքրիկ համեմատությունից.

Համեմատություն

«Դարձեալ կալ զմեծ թուականն
և զշրջան ՇԼԲ ի բաց
երթ, որ մնայ՝ փոքր թուա-
կանն է Սարկաւագինս։

«Ամսամուտ այսպէս արա. կալ
թիւ մի և զկրկնակ ամսոյն և
զնթներեակ տարոյն, երթ է է՝
թիւ մի մնայ՝ կրկնակ է, թէ
Բ՝ երկուշաբթի և որ ի կարգինս։

«Մնունդ լուսնի այսպէս արա.
կալ հանապազ Զ կամ Լ զվերա-
գիրն, և զկիսակ նորին ամսոյն
ի բաց երթ, որ մնայ՝ այնքան
աւուրս ամսոյն է ծնունդն լուսնիս։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1971, թ. 1ա—2բ)։

«Ոն կալ զմեծ թուական Հայու,
Շրջան որքան որ յասելու,
Երթ հինգ հարիւր երսուն երկու,
Մընայ փոքր թուականն տարուս։

«Ամսամտին կալցես թիւ մին,
Զեռնեակ տարոյն, զկրկնակ ամսին,
Եօթն եօթն երթաս, որ վրէարին,
Թէ մին մընայ՝ է կիրակին,
Եւ թէ երկու՝ երկուշաբթին։

«Մնունդ լուսնոյ առնես տարոյն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Զվերագիրն, երթ զկիսակ ամսոյն,
Մընայ՝ ծնունդ է այնքան ամսոյնս։

(Վարդան Կաֆայեցու չափածո տոմարից)։

§ 5.

Վարդան Կաֆայեցու չափածո տոմարը համեմատելով «Պատճէն տոմարին Հայոցն» հետ, պարզվում է, որ Կաֆայեցու օգտված «Պատճէն տոմարինը» ուշ շրջանի խմբագրված այն տեքստերից է, որոնց մեջ մտել էր եղանակի փոփոխության ախթարական ընդմիջարկությունը։ Բերենք փոքրիկ համեմատություն.

Համեմատություն

«Ինկ ես ի գերագոյն հասեալ
ի ժամադիտակն սաստկագոյն
ջերմութիւն ունի զկողմն հիւսիսոյ,
մանաւանդ ի ԿԴ ամէն ի վեր։

«Ցարևն ժամագիտակ կիտի,
Եւ սաստիկ ջերմութիւն լինի,
Եւ մանաւանդ կողմըն հիւսիսի,
Վաթսուն և չորս ամ այսպիսի։

Յայսմ ամի ծովի նուազութիւն,
յաղբերաց բոլորութիւն,
հիւսիսային կողմանց ծովք
խոնարհին՝ դնալով յՈվկիանոս։

Եւ չերմութենէն դաշտք դատարկանան
ի մարդկանէ և չերինս լինի
շինութիւն բնակութեան, մինչ զի
մրդարերութեան այգիկք տնկին...»։

(Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 6017, թ. 9բ։

Վայրի ծովի նուազութիւն,
եւ յաղբերաց յոլովութիւն,
Հիւսիսոյ կողմանց ծովք պակասութիւն,
Յովկիանոս բռատութիւն։

Ջերմութենէն դաշտք դատարկին,
Լերինք բնականք շինութիւնք լինին,
Յետոյ մինչև այդիք տընկին,
եւ պրտղարեր յատոքանին։

(Վարդան Կաֆայեցու չափածո տոմարից)։

§ 6.

Վարդան Կաֆայեցու ներկա տոմարական տեսքում նկատվում է Ղուկաս Կեղեցու չափածո տոմարի ազդեցությունը. Կեղեցու որոշ քառյակները նա պատրաստի ձևով վերցրել և դրել է իր տոմարի մեջ։ Դժվար չէ այդ մասին համոզվել՝ բերելով միայն երկու քառյակի համեմատությունը.

Համեմատություն

«Ամենունդ լուսնի առնես տարոյն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Զվերադիր երթ զկիսակ ամսոյն,
Որ մընայ՝ ծնունդ է յայնքան ամսոյն։

Ասուրց լուսնի կալ զոր ամսին,
Զկիսակ նորին զթիւ վերադրին,
Եւ եռասուն որչափ լինին,
Զգնա՝ մընայ ասուրք լուսնինն։

(Ղուկաս Կեղեցի, տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1952 թ., № 6, էջ 62)։

«Ամենունդ լուսնի առնես տարոյն,
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն,
Զվերադիրն, երթ զկիսակ ամսոյն,
Մընայ՝ ծնունդ է այնքան ամսոյն։

Ասուրք լուսնի կալ զոր ամսին,
Զկիսակ նորին զթիւ վերադրին,
Եւ երեսուն որչափ լինի,
Զրգեա՝ մընայ ասուրք լուսնինն։

(Վարդան Կաֆայեցու չափածո տոմարից)։

Վարդան Կաֆայեցու 164 քառյակներից, մեր հաշվով, մոտ 20-ը վերցված է Ղուկաս Կեղեցուց։

Ի դեպ, Վարդան Կաֆայեցու մի հիշատակագրությունից երևում է, որ Ղուկաս Կեղեցին իր ժամանակի հեղինակավոր տոմարագետն է համարվել։ Տոմարական մի սխալի կապակցությամբ Վարդան Կաֆայեցին անգամ մեջբերում է արել Կեղեցու տոմարի վերջին երկու քառյակները՝ «Եւ բուն տոմար Հայոց ազգի...» և «Պարտ էր պակաս գալ ի կարգի...» (Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2706, թ. 474բ)։

§ 7.

Հրատարակության հանձնվող Վարդան Կաֆայեցու տոմարական ներկա տեքստը, իհարկե, ինչ-որ բացառիկ արժեք ունեցող մի երկ չէ։ Սակայն եթե նկատի ունենանք, որ Վարդան Կաֆայեցու ներկա չափածո տոմարը տոմարագիտության ձեռնարկ է հանդիսացել և նրա մեջ շարադրված են տոմարական գրեթե բոլոր հաշվումները հանրամատչելի ձևով, ապա նրա արժեքը դիտության պատմության համար անժխտելի է դառնում։

Վարդան Կաֆայեցու չափածո տոմարի երկու ընդօրինակություններն են մեզ հայտնի Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրերում՝ № 3504 (թ. 207բ—213ա), որը հեղինակի ինքնագիրն է և գրված է 1676—1692 թվականների ընթացքում և № 3860 (թ. 170ա—174ա), որը 18-րդ դարի գրչություն ունի։ Մենք օգտվել ենք ինքնագիր ձեռագրից։

Տեքստում կատարված են ուղղագրական աննշան շտկումներ, նշելով, իհարկե, այդ մասին ծանոթության մեջ։

(Շարունակելի)

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճնագիտ)

ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաղարծինի վանքի նշանավոր հուշարձանների խումբը գտնվում է Դիլիջան կուրորտային քաղաքից մոտավորապես 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, անտառի խորքում, երկու ձորակներով եզերվող փոքր հարթակի վրա՝ շրջապատված անտառապատ բարձր լեռներով։ Ճանապարհը, անցնելով Երևան—Թբիլիսի գլխավոր ուղուց՝ Դիլիջան քաղաքից 8 կիլոմետր հեռու, թեքվում է դեպի ձախ և Հաղարծին վտակի ափով, անտառի միջով ոլորապտույտ գնում է հուշարձանը։ Վանքի հյուսիսային կողմում բարձրանում է խարսնաքար գագաթը՝ ժայռոտ եզրերով, իսկ դրանից քիչ վերև, Աղստև խոշոր լեռնաշղթայից սկիզբ է առնում մի այլ, համեմատաբար ցածր լեռնաշղթա, որը ձգվելով դեպի արևելք, վերջանում է Աղստև գետի հովտում։ Այդ լեռնաշղթայի գագաթներից նշանավոր են Գիժ սարը և Սպիտակ աղբյուրը, որոնց՝ դեպի հուշարձանների խումբը նայող կողմը բարձր ժայռոտ քարափների ձևով է ու կաթնագեղեցիկ դույնի։

Հուշարձանների խումբը բաղկացած է հինգ նկեղեցիներից, երկու դավթից, սեղանատնից, երկու մատուռներից, արքայական դամբարանից և մի քանի խաչքար-մահարձաններից։

Թե ե՞րբ է հիմնադրվել Հաղարծինի վանքը, ստույգ հայտնի չէ, պատմական աղբյուրներն էլ շատ աղոտ տեղեկություններ են պարունակում այդ վանքի մասին։ 13-րդ դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Գոշ Մխիթարի կողմից 1191 թվականին նոր Գետիկ վանքում կառուցված եկեղեցու օծման հանդեսին մասնակցում էր նաև Հաղարծինի վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնեցի վարդապետը։ Գանձակեցին միաժամանակ ավելացնում է, որ մինչև Տարոնեցու Հաղարծինի վանքին առաջնորդ դառնալը, վանքը գտնվում էր լքված ու խամրած վիճակում և որ Տարոնեցին շենացրեց ու պայծառացրեց վանքը։

Այդ Խաչատուր վարդապետ Տարոնեցին էր, որ Հայաստան բերեց ձայնագրության խազերը — նոտաները — և մշակեց ու զարդացրեց այն։ Միաժամանակ նա ձեռնհուրդ խորհրդի նշանավոր շարականի հեղինակն է։

Գանձակեցու վերը նշված վկայությունից պարզ է դառնում, որ Հաղարծինի վանքը գոյություն է ունեցել 1191 թվականից դեռ շատ առաջ։ Սակայն ո՞րն է այն շենքը, որն ամենից առաջ է կառուցված, կամ ե՞րբ է կառուցվել դրանցից յուրաքանչյուրը. այդ բանը ճշտելու համար մեզ նյութ կարող են հանդիսանալ վերջին տարիներում կատարված հնագիտական մանրազնին հետազոտությունները։

1. Գրիգոր Եկեղեցի.— Գտնվում է գավթի արևելյան կողմում, կից, բարձր դիրքով, ար բարձրանում են երեք աստիճան ունեցող քարե բարձր սանդուղքով։ Կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, ճարտարապետական ձևերը բնորոշ են 10—11-րդ դարերին։ Կենտրոնագմբեթ կառուցվածք է, արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով, Արևելյան անկյունում ունի մի-մի խորան։ Խաչթևի միացման անկյուններից ձգվող որմնասյուները միանում են կամարներով, ի-

ՀԱՂԱՐՍԻՆ ՎԱՆՔ.— Ընդհանուր տեսարան հյուսիս-արևմուտքից։

րենց վրա կրելով ութակող թմբուկ և սրածայր փեղար ունեցող գմբեթը։ Ցուրաքանչյուր խաչթևից, ինչպես և գմբեթի թմբուկի գլխավոր շորս կողերի մեջ բացվում են մեկական փոքր, կամարակապ լուսամուտներ։ Նման մեկական փոքր լուսամուտներ էլ բացվում են արևելյան խորանների արևելյան պատից։

Ամբողջ շենքը շարված է դեղնագույն, ծակոտկավոր փափուկ քարից, կրաշաղախով, արտաքին երեսապատ քարերը մաքուր տաշված են, իսկ ներսի երեսապատ քարերը կիսատաշ ձևով են։

Հուշարձանը վերանորոգել են Խաչատուր վարդապետը և Ստեփանոսը, 1284 թվականին (արձանագրություն № 40) և տփխիսեցի Զեթաղանց մահտեսի Սուլխան ու Զալ եղբայրներն իրենց գավակներով և ֆահրապատեցի խոջա Գուլին իր որդու հետ 1681 թվականին (արձանագրություն № 8), ինչպես և Հուշարձանների պահպանության կոմիտեն 1950 թվականին։

2. Դավիթ.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան կողմում, կից։ Բանասիրական գրականության մեջ ընդունված է այդ գավթի կառուցումը վերագրել Իվանե աթաբակին, իր եղբայր Զաքարեի մահից հետո և նրա հիշատակին, այսինքն 1213—1297 թվականների ժամանակաշրջանին։ Նման համոզմանը հիմք է ծառայել գավթի արևմտյան դռան շրջանակի վրա եղած ընդարձակ արձանագրությունը (արձանագրություն № 12)։ Սակայն այդ խնդրով զբաղվողները աչքաթող են արել այդ նույն գավթի վրա եղած մի այլ արձանագրություն, որի համաձայն տմն Գրիգոր, Խաչատուր վարդապետի առաջնորդության ժամանակ, իսկ վերջինս անկասկած Խաչատուր վարդապետ Տարոնացին է, 1181 թվականին իր սեփական հողաբաժինը նվիրում է Ս. Գրիգոր եկեղեցուն (արձանագրություն № 49)։

Այդ արձանագրությունից որոշակի երևվում է, որ գավիթը կառուցվել է մինչև 1181 թվականը, հետևապես Զաքարեի կենդանության ժամանակ։ Բացի այդ, գավթի արևմտյան դռան շրջանակի վրայի վերը նշված արձանագրության մեջ պարզ ասվում է, որ գավիթը կառուցեց Զաքարե սպասալարը և ո՛չ թե Իվանեն, ինչպես այդ ենթադրվում է։ Այդ բոլորը որոշակի կերպով ցույց են տալիս, որ գավիթը կառուցված պետք է լինի 12-րդ դարի վերջին քառորդում։

Գավթի վրա եղած մի ուրիշ արձանագրություն նույնպես հաստատում է, որ գավիթը կառուցված է մինչև 1213 թվականը (արձանագրություն № 20)։ Այդ արձանագրությունը հավաստում է, որ Սմբատի որդի Խաչը 1206 թվականին իրեն պատկանող Քանաքեռ գյուղում, Սկանդարենց հողը գնել և նվիրել է Հաղարծինի վանքին։

Սրա հատակագիծը համարյա քառակուսի է, ներսում ունի չորս քարե սյուներ, որոնց բներն ու խարիսխները և խոյակները ամբողջական մեծ քարերից են և տարբեր ձևերով մշակված։ Պատերը ներսից ունեն երկուական կիսասյուներ, որոնց բները, խարիսխները ու խոյակները նույնպես ամբողջական քարերից են և զանազան ձևերով մշակված։ Սյուները և կիսասյուները միանում են կամարներով, կազմելով թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ անցքով՝ երդիկով։

Գլխավոր մուտքն արևմտյան կողմից է՝ զանազան որմնասյունավոր շրջանակով և ճակատակալ կամարաքարով, որոնք պատած են ընդարձակ արձանագրություններով։ Մի ուրիշ, փոքրիկ դուռ էլ բացվում է արևելյան պատի հարավային ծայրից, որն այժմ շարված, փակված է։

Բացի գլխավոր մուտքի, սյուների ու կիսասյուների զարդաքանդակներից, հուշարձանի առաստաղի անկյուններում եղած քառակուսաձև հարթ տարածությունները պատած են երկրաչափական տարբեր ձևերի նուրբ մշակված զարդաքանդակներով, մարդկանց, թռչունների և կենդանիների հարթաքանդակներով։

Հուշարձանը շարված է դեղնագույն ծակոտկավոր մաքուր տաշած քարերով, կրաշաղախով։ Գլխավոր մուտքի և նրա վերևի լուսամուտի շրջակա քարերը կապտավուն բազալտից են. պատերի որոշ տեղերում նույնպես օգտագործված են կապտավուն բազալտի քարեր։ Սալահատակված է, հատակում կան մի քանի գերեզմաններ՝ կապտագույն բազալտե հարթ տապանաքարերով։ Արևելյան պատի տակ, եկեղեցու դռան երկու կողքերին կառուցված են խաչքար-մահարձաններ, որոնց միայն պատվանդանները մնում։ Մի մահարձանի խաչքարը վայր է ընկած ու շարդված, որի ստորին մասն է մնում։ Վրայի խոշոր տառերով փորագրված արձանագրության մնացորդներից իմացվում է, որ մահարձանը պատկանում է Արտավազդ և Օտա ամուսիններին (արձանագրություն № 58)։ Տանիքը նույնպես պատած է սալաքարերով։

Նկատվում են մի շարք վերանորոգումների հետքեր. վերջին անգամ վերանորոգված ու բարեկարգված է Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1951 թվականին։

3. Կարուղիկե եկեղեցի.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմում, կից։ Համաձայն դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության (արձանագրություն № 61), եկեղեցին կառուցել է Հարբի որդի Խաչը 1194 թվականին։ Միանեф բազիլիկ ձևով կառուցված փոքրիկ շենք է, թաղակապ ծածկով։ Միակ դուռն արևմտյան կողմից է՝ գլանաձև կիսասյունավոր շրջանակով ու կիսակլոր ճակատակալ քարով։ Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով։ Սալահատակված է եղել, տանիքը պատած է եղել սալաքարերով, որոնք բոլորն էլ քայքայվել ու թափվել են։ Կատարված է վերանորոգում Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1951 թվականին։

4. Ս. Ստեփանոս եկեղեցի.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան կողմում, առանձին։ Կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, միայն ճարտարապետական ձևերը ենթադրել են տալիս, որ նա պետք է կառուցված լինի 11—12-րդ դարերում։ Գմբեթավոր, փոքրիկ, զնդեցիկ շենք է, արտաքուստ ուղղանկյուն, ներքնից խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևում կառուցված է ցածրիկ բեմ, որի երկու կողմերում կան փոքրիկ խորաններ։ Արևմտյան անկյուններում խորանների փոխարեն գտնվում են խորը խորշեր՝ թաղակապ տանիքով։

Պարզ որմնասյուները միանում են կամարներով, իրենց վրա կրելով փոքրիկ գմբեթը՝ կլոր թմբուկով և սրածայր վեղարով։ Պատերի մեջ, արտաքուստ կան երկուական եռանկյունաձև խորշեր՝ կամարակապ դուռթով՝ ճառագայթաձև քանդակներով։

Միակ դուռն արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով, որի առջևում ունեցել է սրահ. սրահից պահպանվել են եկեղե-

ցու պատին կից սրմաները՝ գլանաձև բներով, խարիսխներով ու խոյակներով և դրանցից ձգվող կամարի ծայրերը։ Պատերի և գրմբեթի մեջ բացվում են կամարակապ փոքր լուսամուտներ՝ քանդակազարդ պսակներով։ Հարավային պատի վրա փորված է արևի գեղեցիկ ժամացույց և կից արձանագրություն։ Առանձին քարերի վրա նկատվում են կառուցող վարպետների նշանները՝ Ա, Ս, Մ, Թ, Կ տառերի ձևով։

Շարված է սրբատաշ ամուր քարերով, կրաշաղախով. տանիքը պատած է սալաքարերով։ Նկատելի են վերանորոգումների հետքեր — մի վերանորոգումը կատարված է 1651 թվականին (արձանագրություն № 68)։

5. Աստվածածին եկեղեցի.— Գտնվում է Կաթուղիկե և Ստեփանոս եկեղեցիների հյուսիսային կողմում։ Այդ հուշարձանի կառուցման ժամանակի նկատմամբ խոշոր տարաձայնություններ կան ուսումնասիրողների միջև։ Բանն այն է, որ հուշարձանի հարավային դռան ճակատակալ քարի վրա, ձախ անկյունում փորագրված է՝ Ի ՉԼ (1281 թ.), իսկ աջ կողմի անկյունում՝ ԹՎ.ՇԻ (1071 թ.)։ Լենինգրադի գիտնականներից Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին այդ փորագրությունը կարդում է հետևյալ ձևով. «Ի ՉԼ թվիս շինեցաւ»։ Տոկարսկին միաժամանակ հիմնվում է հուշարձանի ճարտարապետական ձևերի վրա, պնդելով, որ դրանք հատուկ են 13-րդ դարին։

Մեր կատարած մանրազնին ուսումնասիրությունները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1071 թվականին և զգալի վերանորոգումների է ենթարկվել 1281 թվականին։ Այդ դեպքում նկատվում է, որ դռան ճակատակալ քարի վրա ձախ անկյունում փորագրված «Ի ՉԼ» սկզբնական շրջանում գոյություն չի ունեցել, այլ միայն եղել է աջ անկյան փորագրված «ԹՎ.ՇԻ»-ն, որը և վերաբերել է հուշարձանի կառուցմանը։ Հետագայում, այսինքն նրա վերանորոգման ժամանակ, որը պետք է տեղի ունեցած լինի 1281 թվականին, ավելացվել է այդ ճակատակալ քարի ձախ անկյան ազատ մասում։

Մի տրիշ հանգամանք ևս հաստատում է, որ այդ հուշարձանը կառուցված է եղել մինչև 1281 թվականը. դա հետևյալն է — այդ նույն հուշարձանի հարավային դռան շրջա-



ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ.— Ս. Գրիգոր եկեղեցու գավիթը հյուսիս-արևմուտքից։

նակի արտաքին շերտի վրա եղած մի արձանագրության մեջ խոսվում է սեղանատան կառուցման մասին՝ հետևյալ ձևով. «... [ԿԱՄԱԻՆ] ԱՆ [ԱՄԵՆԱԿԱ]ՂԻՆ ՄԻԱԲԱՆՔՍ ՉՏԷՐ ՑՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ ԸՍՏ ԿԱՐԻ ՄԵՐՈՒՄ ՍՊԱՍԱՒՈՐԵՑԱՔ [ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ] ԵՒ ՄԵԾԱՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՇԻՆ[ԵՑԱՔ ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ ՏՐԱՊԵ]ԶՆ ԵՒ ԱՆՂ [ԲԱԶՈ]ՒՄ ԱՐԴԻՒՆՍ ԵՒ ՍՈՒՐԲ ԵՂԲԱՐՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ» և այլն (արձանագրություն № 1)[1].

Չնայած արձանագրությունը լրիվ չի պահպանվել, մանավանդ նրա սկզբի մասը, որ կարող էր լինել տարեթիվը, բայց և այնպես հիմնական մասը պահպանվել է, որի համաձայն Հովհաննես և Սարգիս միաբանները կառուցել են Տրապեզը — սեղանատունը և այլ արդյունքներ տվել վանքին։

Սեղանատան հարավային դռան շրջանակի վրա եղած 1248 թվականը կրող մի այլ արձանագրություն, որը նույնպես պատկանում է Հովհաննես վարդապետին և որ նա դրսմով օժանդակում է սեղանատան շինությանը (արձանագրություն № 11), ինքնին վկայում է, որ սեղանատունը կառուցված է եղել մինչև 1248 թվականը։ Իսկ դա իր հերթին հաստատում է, որ Աստվածածին եկեղեցին գոյություն է ունեցել մինչ այդ 1248 թվականը, որի վրա արձանագրվել է սեղանատան կառուցման մասին։ Հետևապես այն պնդումը, թե Աստվածածին եկեղեցին հիմնադրված է 1281 թվականին, միանգամայն զուրկ է հիմքից։

Անկասկած է, որ եկեղեցու կառուցման և ճարտարապետական առանձին ձևեր հատուկ են 13-րդ դարին, սակայն չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, որ այդ առանձնահատկությունները գալիս են դեռ 11-րդ դարից. մանավանդ, որ տվյալ դեպքում առավել բնորոշ ձևերն ավելի դերակշռում են քան թե 13-րդ դարին հատուկ ձևերը։

Որ Աստվածածին եկեղեցին հիմնադրված պետք է լինի 1071 թվականին և վերակառուցված 1281 թվականին, այդ մասին վկայում են նաև ստորև բերված մի շարք այլ փաստեր.

ա. Հուշարձանը կառուցված է երկու տեսակ հանքաքարից՝ կապտագույն բազալտից և դեղնագույն կրաքարից. պատերի ստորին մասերը շարված են ամբողջապես բազալտ քարերով, իսկ վերևի մասերում դրանք առանձին-առանձին են և թվով շատ քիչ։ Արձանագրությունները բացառապես բազալտ քարերի վրա են։ Դրանից երևում է, որ հուշարձանը քանդվելուց հետո նրա ստորին մասերը պահպանվել են անվնաս։

բ. Հյուսիսային պատի վրա, արտաքուստ, պատի կեսի բարձրության հավասար նկատվում է կարմրագանգ հավելված, իսկ հարավային պատի վրա, դռան կողքերին պահպանվել են կալունակներ, որը հաստատում է այդ դռան առջևում հնում սրահի գոյությունը, որպիսին քանդվել է եկեղեցու փլման ժամանակ։

գ. Արևելյան պատի մեջ բացվող զույգ լուսամուտի շրջապատ շարվածքի արտաքին և ներքին երեսապատ շերտերը տարբեր չափերով ու ձևով են. տարբեր է նաև քարերի մշակման տեխնիկան։ Դրանից պարզ երևում է, որ արտաքին շերտը հետագայում ավելացված պետք է լինի և իր կատարման ձևով զիջում է ներսի շերտի կատարման ձևին։

դ. Հուշարձանի արևմտյան դռան շրջանակը երկու կողմերից, հավասար բարձրությամբ, շարված է. դա հետևանք է այն բանի, որ կից կառուցվող գավթի կիսասյուների կամարը, որը պետք է հանդիսանար եկեղեցու արևմտյան պատի որմնակամարը, պետք է անցներ այդ շարված տեղերով։ Հետևապես, մինչև հիշյալ գավթի կառուցումը գոյություն ուներ Աստվածածին եկեղեցին։ Եթե վերջինիս կառուցումը վերագրվի 1281 թվականին, ապա տվյալ ժամանակի քաղաքական դրությունը հազիվ թե ներեր այնպիսի կառուցումների ձեռնարկմանը, ինչպիսին Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, կից գտնվող խոշոր գավիթն է։

ե. Արևելյան ճակատում գրված մի բարձրաքանդակ պատկերում է երկու վեղարավոր կրոնավորների, որոնք իրենց ձեռքում քոնել են եկեղեցու կաղապարը։ Այդ կաղապարն իր ձևով չի նմանում Հաղարծինի վանքում եղած և ոչ մի եկեղեցու ձևին. նա հիշեցնում է Ամբերդի, Մարմաշենի և այլ եկեղեցիներին, որոնք անվիճելիորեն պատկանում են 11-րդ դարի առաջին կեսին։

զ. Ս. Գրիգոր եկեղեցու գավթի վրա եղած մեծ թիվ կազմող արձանագրություններից միայն մեկի մեջ է հիշվում Աստվածածին եկեղեցու անունը (արձանագրություն № 13), ըստ որի Գագը և Աշոտը Սարկավագ վարդապետի առաջնորդության ժամանակ, իրենց հոգեպահուստը (դրամ) տալիս են Աստվածածնի շինության համար։ Կատարված ուսումնասիրություններից պարզվում է, որ Սարկավագ վարդապետը Հաղարծին վանքի առաջնորդ է դառել Հովհաննես Արմանեցուց

1. Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը և բառամասերը վերականգնված են մեր վերծանությամբ։

հետո՝ 13-րդ դարի երկրորդ կիսում, որի ժամանակ, հավանաբար, տեղի ունեցած լինի Աստվածածին եկեղեցու հիմնական վերանորոգումը։

Աստվածածին եկեղեցին գմբեթավոր մեծ շենք է, հատակագիծն արտաքուստ երկարաձիգ ուղղանկյուն է, ներսից խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան կողմում ունի կիսակլոր մեծ աբսիդ՝ բարձր բեմով, ուր բարձրանում են ծայրերում եղած քարե աստիճաններով։ Բեմի երկու կողմերում կան երկհարկանի խորաններ, ստորին հարկի խորանները բացվում են դեպի արևմուտք՝ կողմերի խաչթևերի մեջ, իսկ վերի խորանների դռները՝ աբսիդի մեջ, իրար դիմաց, ուր բարձրանում են քարե աստիճաններով։ Մեկական խորաններ էլ կան արևմտյան անկյուններում։

Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միանում են կամարներով, իրենց վրա կրելով կլոր թմբուկ և սրածայր վեզար ունեցող գմբեթը։ Երկու գլխավոր մուտքերը բացվում են հարավային և արևմտյան կողմերից, վերջինիս կից կառուցված գավթի մեջ։ Հարավային մուտքը շրջանակավոր է և գեղեցիկ քանդակազարդված։ Ցուրտքանչյուր խաչթևից բացվում է մեկական կամարակապ երկար ու նեղ լուսամուտ. արևելյան պատի լուսամուտը զույգ է, որոնք իրարից անջատվում են բազմանիստ քուն ունեցող սյոնով։ Նման մեկական լուսամուտ էլ բացվում է գմբեթի թմբուկի գլխավոր չորս կողերի մեջ և խորաններում, բոլորն էլ ունեն զանազան ձևերով մշակված պսակներ. արևելյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ, արտաքուստ կան երկուական եռանկյունաձև փոքր խորշեր՝ կամարակապ գագաթնե-

ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ.— Արևի ժամացույց և արձանագրություն Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի վրա։

րի խաչթևերի մեջ, իսկ վերի խորանների դռները՝ աբսիդի մեջ, իրար դիմաց, ուր բարձրանում են քարե աստիճաններով։ Մեկական խորաններ էլ կան արևմտյան անկյուններում։

Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միանում են կամարներով, իրենց վրա կրելով կլոր թմբուկ և սրածայր վեզար ունեցող գմբեթը։ Երկու գլխավոր մուտքերը բացվում են հարավային և արևմտյան կողմերից, վերջինիս կից կառուցված գավթի մեջ։ Հարավային մուտքը շրջանակավոր է և գեղեցիկ քանդակազարդված։ Ցուրտքանչյուր խաչթևից բացվում է մեկական կամարակապ երկար ու նեղ լուսամուտ. արևելյան պատի լուսամուտը զույգ է, որոնք իրարից անջատվում են բազմանիստ քուն ունեցող սյոնով։ Նման մեկական լուսամուտ էլ բացվում է գմբեթի թմբուկի գլխավոր չորս կողերի մեջ և խորաններում, բոլորն էլ ունեն զանազան ձևերով մշակված պսակներ. արևելյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ, արտաքուստ կան երկուական եռանկյունաձև փոքր խորշեր՝ կամարակապ գագաթնե-

Գմբեթը զարդարված է 16 զույգ գլանաձև բներ ունեցող կիսասյուներով, որոնք միա-

նում են որմնակամարներով և ունեն խարիսխներ ու խոյակներ։ Խարիսխները մշակված են տարբեր ձևերով և պատած են զանազան ձևերով մշակված զարդաքանդակներով, որոնք նստած են երկրաչափական քանդակներով զարդարված մի շերտի վրա, որը շրջանաձև գոտկում է գմբեթի թմբուկը։ Առանձին որմնակամարների մեջ կան տարբեր ձևերով մշակված բարձրաքանդակ զարդաքանդակներ՝ ոմանք երկուական, ոմանք մեկական հատ։

Հիմնական վերանորոգման է ենթարկվել 1281 և մասնակի վերանորոգման՝ 1681, 1951 թվականներին և այլն։

6. Գավիթ.— Գտնվում է Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, կից, ամբողջապես ավերակ վիճակում. պահպանվել են արևմտյան և հյուսիսային պատերի առանձին մասերը։ Պատերի կանգուն մնացած մասերի վրա պահպանված երկուական կիսասյուները և տեղում թափված բեկորները որոշակի կերպով ցույց են տալիս, որ նա կառուցված է եղել այնտեղ եղած մյուս գավթի նմանությամբ. այսինքն՝ ներսում ունեցել է չորս սյուներ, որոնք կիսասյուների հետ միացել են կամարներով, կազմելով թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ անցք-երդիկով։ Այդ գավիթը նույնպես հիմնականում շարված է եղել դեղնագույն ծակոտկավոր կրաքարից, որի քանդված մասերը, ինչպես և կանգուն մնացած մասերը քանդել և օգտագործել են Աստվածածին եկեղեցու 1681 թվականին կատարված վերանորոգումների վրա։ Թե ե՞րբ է կառուցվել այդ հուշարձանը—ստույգ հայտնի չէ։ սակայն հավանական է թվում, որ նա կառուցված լինի 12-րդ դարի վերջերին և ավերված լինի մոնղոլական արշավանքների ժամանակ՝ 14—15-րդ դարերում։

7. Սեղանատուն.— Գտնվում է հուշարձանների խմբի հյուսիս-արևմտյան անկյունում, առանձին։ Հայ արվեստի նշանավոր կոթողներից է և եզակի տեղ է գրավում ճարտարապետական կառուցվածքների շարքում։ Սովորաբար ընդունված է նրա կառուցումը վերագրել 1248 թվականին, ելնելով նրա հարավային դռան շրջանակի վրա եղած արձանագրությունից (արձանագրություն № 11)։ Սակայն այդ արձանագրության ուշադիր ընթերցումից դժվար չէ համոզվել, որ դա վերաբերում է սեղանատան բարօրության համար դրամական օգնությանը, մինչդեռ, ինչպես ցույց տվեցինք վերևում, սեղանատան կառուցման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի շրջանակի վրա (արձանագրություն № 1)։ Անվիճելի է, որ սեղանատունը պետք է կառուցված լինի 13-րդ դարի 2-րդ քառորդում, Հովհաննես Արմանեցու առաջնորդության ժամանակ և նրա միջոցով։

Սա երկարաձիգ, ուղղանկյուն հատակաձև ունեցող ընդարձակ մի սրահ է, թաղակապ ծածկով։ Ներսում, կենտրոնական մասում ունի երկու սյուներ՝ կարճ բներով և հարթ խարիսխներով ու խոյակներով։ Արևելյան և արևմտյան պատերը ներսից ունեն երկուական կիսասյուներ, իսկ հարավային և հյուսիսային պատերը՝ չորսական կիսասյուներ՝ նույն ձևի խարիսխներով ու խոյակներով։ Սյուները և կիսասյուները միանում են խաչաձևող կամարներով, որոնք ծածկի առանձին մասերում առաջացնում են երկու մեծ բացվածքներ՝ երկթեքի ձևով, գավիթների նմանությամբ։ Միաժամանակ սյուներից դեպի կողերի պատերը ձգվող կամարների ծայրերը հենվում են այդ պատերի մեջ դրված կալունակների վրա։ Բացի այդ, արևելյան և արևմտյան պատերի կիսասյուները միանում են որմնակամարներով, այդ պատերի վրա առաջացնելով երեքական մեծ խորշեր։

Ներսից, պատերին կից, նրանց ամբողջ երկարությամբ շարված է մի աստիճան բարձրությամբ քար՝ նստարանի նմանությամբ, ուր, հավանաբար, նստելիս են եղել վանքի միաբանության անդամները ճաշելիս։

Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, պատի կենտրոնի խորշի ամբողջ լայնությամբ, մի ուրիշ դուռ էլ բացվում է հարավային պատի արևմտյան ծայրից, նույնպես մեծ։ Շարված է եղել մաքուր տաշված կրաքարով, կրաշաղախով. սալահատակված է եղել, տանիքը պատած է եղել սալաքարերով, որոնք բոլորն էլ թափվել են։ Հատակն այժմ սալած է անմշակ մանր քարերով, իսկ տանիքը պատած է կղմինդրով։ Փոխված է պատերի երեսապատ քարերի մի զգալի մասը։ վերանորոգումները վերաբերում են 1651, 1681, 1939, 1953 թվականներին։

8. Վանքի միաբանության բնակելի շենքերը գտնվում են հուշարձանների խմբի համարյա չորս կողմը, ցրիվ եկած, բոլորն էլ ավերակ վիճակում։ Դրանք շարված են զանազան հանքաքարերի տարբեր մեծությամբ կիսատաշ ու անտաշ քարերով, մի քանիսը կրաշաղախով, իսկ մեծ մասամբ ցեխով։ Պատկանում են 17-րդ և 19-րդ դարերին, որոնք արվեստի տեսակետից ոչ մի արժեք չեն ներկայացնում։

9. Արքայական դամբարան.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու գավթի հարավային կողմում, կից։ Մատուռի ձևով մի շենք է եղել,

ներսում երեք գերեզմաններ՝ հարթ ձևով մշակված տապանաքարերով։ Հյուսիսային եզրի գերեզմանը, որի տապանաքարը կապտագույն բազալտից է, պատկանում է Սրմ-յատ թագավորին, դրա կողքի գերեզմանը, որի տապանաքարը նույնպես կապտագույն բազալտից է, պատկանում է Գագիկ թագավորին. իսկ ամենահարավային եզրի գերեզմանը, որի տապանաքարը կրաքարից է ու զարդված է մանր կտորների, հայտնի չէ, թե ում գերեզմանն է, որովհետև տապանագրությունը մաշվել-ջնջվել է։ Այդտեղ թաղված թագավորները հավանաբար Նոր-Թլուրի Կորիկյան թագավորները լինեն։ Մատուռն ամբողջապես քանդել են 19-րդ դարի վերջերին և քարն օգտագործել մյուս հուշարձանների վերանորոգման վրա. պահպանվել են արևելյան և արևմտյան պատերի հետքերը, ինչպես

ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ.— Ս. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից։

և գավթի պատի վրա մատուռի կցված մասի կրաշաղախի հետքերը (արձանագրություն № № 59, 60)։

10. Հաղարծինի վանքին պատկանող ō-րդ եկեղեցին գտնվում է հուշարձանների հիմնական խմբից մոտ 200 մետր դեպի արևելք, ձորի եզրին։ Փոքրիկ եկեղեցի է, հատակա-

գիծն ուղղանկյուն է, ծածկը թաղակապ, արևելյան կողմից ունի փոքր աբսիդ՝ ցածրիկ բեմով, որի երկու կողքերին կան խորաններ։ Դուռն արևմտյան կողմից է, որը բացվում է եկեղեցու անբաժան մասը կազմող փոքրիկ սրահի մեջ. ունի գլանաձև կիսասյուներով շրջանակ և կիսակլոր ճակատակալ քար։

Սրահը նույնպես փոքր է, ուղանկյուն հատակագծով, ծածկը թաղակապ. հյուսիսային կողմում ունի փոքր խորան. դուռն արևմտյան կողմից է։ Եկեղեցու ու սրահի պատերի մեջ օգտագործված են 12—13-րդ դարերին պատկանող խաչքարերի քանդակազարդ բեկորներ։

11. Երկու մատուռները գտնվում են հուշարձանների հիմնական խմբից դեպի արևելք, վերը նշված եկեղեցու մոտ, ժայռոտ բարձունքների վրա։ Սովորական ձևի մատուռներ են, հավանաբար կառուցված 13—14-րդ դարերում. պատերի մեջ օգտագործված են քանդակազարդ խաչքարերի բեկորներ և ուրիշ շենքի տանիքի սալաքարեր։

12. Գերեզմանոցը տարածվում է հուշարձանների հիմնական խմբի և դրանից արևելք գտնվող եկեղեցու ու մատուռների շրջ-

ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ.— Ս. Աստվածածին եկեղեցու հարավային շքամուտքը։

ջակայքում, ուր, բացի սովորական գերեզմանաքարերից, կան նաև բազմաթիվ խաչքար-մահարձաններ, որոնք բոլորն էլ շքեղ քանդակազարդված են և վերաբերում են 12—13-րդ դարերին։

Թե ե՞րբ է լքվել ու ամայացել Հաղարծինի վանքը, ստույգ հայտնի չէ։ Կատարված տեղագրական հետազոտությունները և հնագիտական ուսումնասիրությունները չեն հայտնաբերել 14-րդ դարից հետո որևէ հուշարձան։ Այդ հանգամանքը հավանական է դարձնում, որ վանքը քայքայվել ու անմարդաբնակ է դարձել 14-րդ դարի վերջերին կամ 15-րդ դարի սկզբներին՝ մոնղոլ-թաթարական արշավանքների հետևանքով։

Հուշարձանների վրա եղած որոշ արձանագրություններից իմացվում է, որ վանքը վերահաստատվել է 17-րդ դարի կեսերին— կատարվել են մի շարք վերանորոգման աշխատանքներ։ Սակայն վանքի այդ վերականգնումն էլ երկար չի տևում— հյուսիսային լեռնցիների կողմից 18-րդ դարում կատարվող հարձակումները նորից ամայացնում են վանքը։

Գարեգին արքեպիսկոպոս Սմբատյանը 1862 թվականին այցելելով Հաղարծինի վանքի հուշարձանները, տեղեկացնում է[1], որ վանքը գտնվում էր լքված ու ամայի վիճակում, հուշարձանները վեր էին ածված անասունների փարախի և լիքն էին աղբով, շրջակայքը պատած էր անանցանելի մացառուտներով, տանիքներին բուսած էին թփեր, վանքը միաժամանակ դարձել էր ավազակների որջ, որի հետևանքով նրանք իրենց հետ վերցրել էին գինված պահակներ։ Բայց, անկախ դրանից և վերահաս հորդառատ անձրևից ու կարկուտից, նրանք ավազակների ահից ընդամենը կես ժամի չափ են մնում հուշարձաններում և արագ ձիավարելով թողնում գնում են, թրջված ու մրսած հասնելով Դիլիջան։

Սմբատյանը տեղեկացնում է նաև, որ Էջմիածնի վանքի միաբան Պողոս վարդապետը 1865—1895 թվականներին վանահայր է լինում Հաղարծինում։ Այդ ժամանակամիջոցում է, որ նա քանդում է արքայական դամբարանի շենքը և քարերն օգտագործում այլ շինարարության համար։ 1895 թվականից հետո վանքը վերջնականապես լքվում է և դադարում կրոնական կենտրոն լինելուց։

Սովետական իշխանության տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել Հաղարծինի հուշարձաններում, նրանց վերանորոգման, մաքրման ու բարեկարգման ուղղությամբ։

Նախ և առաջ հուշարձանների խումբը լորս հեկտար հողաբաժնով անջատված է որպես հնագիտական անձեռնմխելի վայր։ Հատուկ ճանապարհ է կառուցված մինչև հուշարձանը, ուր ավտոմեքենաները ուղիղ մտնում են հուշարձանների սահմանները. դա մեծ չափով հեշտացրել է հուշարձանների վերանորոգման համար շինանյութերի փոխադրումը։ Ամբողջ հնագիտական անձեռնմխելի տարածությունը բարեկարգված է և տնկված են 500-ից ավելի զանազան պտղատու ծառեր։ Վերանորոգված ու մաքրված են բոլոր հուշարձանները, ըստ որի վերականգնված են նրանց քանդված մասերը, լրացրած են թափված երեսապատ քարերն ու ճիվերը, տանիքները պատած են թիթեղով կամ կղմինդրով։

Հուշարձանն այցելող տուրիստների համար կառուցված է հատուկ շենք՝ կահավորությամբ, որի մեծ սենյակներից մեկում ցուցադրված են Հաղարծինի և շրջակա մյուս հուշարձանների վերաբերյալ լուսանկարներ, գծագրեր, տեքստեր և այլն։

Ավելորդ չէր լինի նշել, ինչպես այդ հայտնի է, որ Հաղարծին վանքի մասին, որպես կրոնական կենտրոնի և որպես հայ ժողովրդի ազգային կուլտուրայի կարևոր ու արժեքավոր ճառագայթաբանական հուշարձան, ուսումնասիրություններ են գրել տարբեր շատ բանասեր-տեղագիրներ և գիտնականներ[2] կարդացված և հրատարակված են նրա որոշ արձանագրությունները։

Սակայն այդ աշխատությունները կարծես թե առավելապես նկարագրական ու տեղագրական բնույթ, ընթերցված արձանագրությունները թերի են, ունեն բազմաթիվ անճշտություններ ու վրիպումներ։

Առավել աչքի են ընկնում ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կողմից հավաքված Հաղարծինի վիմական արձանագրությունները, որոնք, դժբախտաբար, մինչ այժմ չեն հրատարակված։ Դրան պետք է ավելացնել, որ տվյալ հոդվածը մեր՝ այդ բնագավառում երկար տարիների աշխատանքի և կատարած բազմաթիվ հետազոտությունների արդյունքն է, որը նույնպես լրիվ չափով չի տալիս այդ կարևոր հուշարձանի պատմությունը։

(Շարունակելի)

1. Գարեգին արքեպիսկոպոս Սմբատյան, «Տեղագրութիւն Գեղարքունի ծովազարդ գաւառի», Էջմիածին, 1895 թ., էջ 179—185։

2. Սարգիս վարդապետ Ջալալյան, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Տփխիս, 1842 թ.— Մակար եպիսկոպոս Բարխուդարեան, «Արցախ», Բաքու, 1895 թ.— Գարեգին արքեպիսկոպոս Սմբատյան, «Տեղագրութիւն Գեղարքունի ծովազարդ գաւառի», Էջմիածին, 1895 թ.— «Ազգագրական հանդես», գիրք XVI, և այլն։

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԳՈՂԻԿ

8-ՐԴ ԴԱՐ

(էջեր հնագույն հայ երաժշտության պատմությունից)

Հայ հնագույն երաժշտական արվեստի փայլուն և պայծառ դեմքերից մեկն է Գրիգոր քահանա Գողիկը, որ ապրել է և ստեղծագործել 8-րդ դարի առաջին կիսում։

Ինքն ականավոր երաժշտագետներ Կոմիտաս կաթողիկոսը, Անանիա Շիրակացին և Սահակ Զորափորեցին իրենց արժեքավոր ստեղծագործություններով առանձին փայլ են տվել 7-րդ դարի երաժշտական արվեստին, ապա 8-րդ դարում Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր քահանա Գողիկը և երաժշտուհի Սահակդուխտը (Սյունեցու քույրը) հանդիսացել են ժամանակաշրջանի երաժշտական դպրոցի զարգացնողները։ Այնուհետև, 11-րդ դարում, երաժշտական արվեստի դրոշն իրենց ձեռքում բարձր են պահել Գրիգոր Մագիստրոսը և Գրիգոր Վկայասերը։

12-րդ դարում հայ երաժշտությունն անում է ավելի նշանակալից որոնումներ և ձևակերպումներ։ Դարաշրջանի հայարտությունն են կազմում լավագույն երաժշտագետներ՝ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին և Խաչատուր Տարոնեցին։

Միջնադարի հայ երաժշտության վերելքի պատկերը տեսնում ենք նաև 13-րդ դարում, որի պարծանքն են կազմում Գրիգոր Սկևռացին, Վարդան վարդապետը, Հակոբ Կլայեցին, Հովհաննես Պլուզը, Հովսեփը և ուրիշներ, որոնք իրենց ժամանակի երաժշտական դպրոցի զարգացման խնդրում գնահատելի դեր են կատարել։

«13-րդ դարում Արևելյան Հայաստանում, — գրում է Գարեգին Ա. Կաթողիկոսն իր «Այրից կամ Գեղարդա վանք» խորագրով ելույթում,— ծաղկել է սկսում հոգևոր երգերի, տաղերի և գանձերի գրականությունը. Վարդան (ոչ Բարձրբերդցին, ինչպես կարծում է Ամատունին), Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Մկրտիչ, Հովհաննես Երզնկացի, Կիրակոս Երզնկացի և այլն ձգում են այդ գանձանակի մեջ իրենց արժեքավոր և անարժեք լումաները. Հովհաննես Գառնեցին ևս յուր բաժինն ունի այդտեղ... Տարաբախտաբար մեր գրականության այդ մասը հարկավոր ուշադրության չէ արժանացած և տակավին մթության մեջ է... «Յիսուս միածին» սկսվածքով շարականի տնագրությամբ տաճերն են «Յովհաննէս Գառնեցի»։

Նշանակալից է և այն, որ միջնադարի լավագույն երաժշտագետներից ոմանք՝ Գրիգոր Մերենցը, Խաչատուր Կեչառեցին, Խաչատուր Տարոնեցին, Հովհաննես Պլուզը և ուրիշներ, իրենց կերտած երաժշտական նոր ձևավորումներով, խազերի գյուտով և մանր ուսումնքների[1] տարածումով հայ երաժշտական արվեստն է՛լ ավելի զարգացնում և հաստատում են կատարելության։

Ահա հնագույն շրջանի այդ վաստակավոր արվեստագետների շարքում ունի իր ուրույն էջն Այրիվանքի և հետագայում Գեղարդա

1. Եկեղեցական երգերի եղանակների և խազերի ուսումնք։

վանքի միաբան Գրիգոր քահանա Գոգիկը[1], որի կյանքի և ստեղծագործության պատմությունը կազմում է հայ երաժշտական արվեստի ուշագրավ և արժեքավոր էջերից մեկը։ Նա, տոգորված ու ներշնչված արվեստի անսահման սիրով, ո՛չ միայն աշխատում է հայ երաժշտության ծաղկման համար, այլև իր ամբողջ էությամբ նվիրվում է երաժշտական նոր գպրոցի ձևակերպման և զարգացման վեհ գործին։

Նրա երաժշտական արվեստի հատկանշական գծերից մեկն աշխարհիկ բովանդակությունն է։ Նա մեկն է իր դարաշրջանի այն լավագույն երաշտագետներից, որ խորապես գիտակցում է ժողովրդական երաժշտության վեհությունն ու հմայքը։ Գտնում է, որ պետք է երգեր հորինել նաև ժողովրդական արվեստով։ Եվ նա հավատարիմ մնալով ժողովրդական երգի ու ոճի առանձնահատկություններին, կերտում է գեղարվեստական «գաղթականի» երգեր։ Թերևս այդ երևույթով էլ պիտի բացատրել, որ նրա երաժշտությունը դեռևս ստեղծագործական վաղ շրջանից աչքի է ընկնում ո՛չ միայն իր հստակությամբ, զգացմունքի անկեղծությամբ ու նրբությամբ, այլև ժողովրդական արվեստի երանգավորումներով։

Ի՞նչ են ներկայացնում, սակայն, Գրիգոր Գոգիկի կյանքի պատմության էջերը։

Հայաստանի պատմական և վաճառաշահ քաղաքի՝ Դվինի, ժողովրդի հպարտությունն է կազմում երաժշտագետը, որտեղ և ստանում է իր նախնական կրթությունը։

Վաստակավոր երաժշտագետի կյանքի մասին սեղմ, բայց թանկագին տեղեկություններ կարդում ենք 13-րդ դարի նշանավոր հեղինակ Մխիթար Այրիվանեցու պատմական և գրական արժեք ունեցող «Ստեփանոս Սյունեցու վկայաբանությունը» խորագրով երկում, ուր ընդգծված են այսպիսի ուշագրավ տողեր. «Եւ էր ընկեր սորա (Ստեփանոս Սյունեցու) ի նմին քաղաքի (Դվինում)՝ քահն. ոմն Գրիգոր անուն ի սբ. ուխտէն Այրիվանաց, որ է հիմնարկեալ ի սբրոյն Գրիգորէ (Լուսավորիչ), 'ի գլուխ ձորոյն գեղաքաղաքին Գառնոյ։

Ահա այս երկու արվեստագետները—Ստեփանոս Սյունեցին և Գրիգոր քահանա Գոգիկը, ուսման սիրով տոգորված, Դվինից անցնում են Աթենք, որ հանդիսանում էր իր ժամանակի գիտության, ուսման և երաժշտական արվեստի ձևակերպման ու զարգացման լավագույն մի կենտրոնը, ուր և իշխում էին դարաշրջանի գրականության և արվեստի ուղղությունները։ Աթենքի լուսավոր միջավայրում էլ ուսումնատենչ ուսանողներն առանձին հաճույքով լսում են համալսարանի դասախոսությունները՝ փիլիսոփայություն, կրոնագիտություն, պատմություն, երաժշտություն և է՛լ ավելի խորանում ուսման ու գիտության մեջ։ Այնտեղ նրանք ուսան զամենայն սահմանս փիլիսոփայութեան իմաստնոց արտաքնոց և քաջատեղեակ եղեն աստուածոնչ մեկնչացս։

Նրանք Աթենքում զբաղվում են նաև գրականությամբ. հունարենից հայերեն են թարգմանում «Եռեռթէոսի տարրական աստուածաբանութեանցն» և Նյուսացու «Վասն բնութեան մարդոյ և կազմութեան կարգ» աշխատությունները։

Սակայն մի հանգամանք, որ ավելի նշանակալից է, երկու առաջադեմ և ուշիմ ուսանողներն Աթենքի համալսարանում փայլում են ո՛չ միայն իրենց աշխատասիրությամբ ու ընդունակություններով, այլև մշակում են իրենց մեջ թաքնված երաժշտական փայլուն ձիրքերը։ Մխիթար Այրիվանեցու վկայությամբ[2], նրանք համալսարանում հանդիսանում են «յառաջադէմք ի գիտութիւն գրոց և յարուեստս երաժշտականութեանս։

Մեծ հաջողությամբ նրանք վերջացնում են Աթենքի համալսարանի փիլիսոփայության, կրոնագիտության, գեղարվեստի լրիվ դասընթացը և զինված երաժշտական արվեստի բարձր իմացությամբ, Աթենքից վերադառնում են Հայաստան։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանը, «ի խաղաց, ի բարբարոսաց և ի յունաց՝ ասպատակության հետևանքով ծանր օրեր էր ապրում։

Նշենք, որ Գրիգոր Գոգիկն իր գործունեության վայր է ընտրում Այրիվանքը, ինչպես այդ ցույց են տալիս Մխիթար Այրիվանեցու հետևյալ տողերը. «Իսկ ընկեր սորա Գրիգոր քահ. մականուն կոչեցեալ Գոգիկ, գնացեալ ի տեղիսն իւր Այրիվանսս։

Պատմական վանքի միաբան Գրիգոր Գոգիկը տարիների անխոնջ աշխատանքով հանդիսանում է հայ երաժշտական մշակույթի լավագույն մի ներկայացուցիչը. վանականի պարտականություններին զուգընթաց՝ նա իր ընդհանուր հմտությունը և մասնագիտական գեղեցիկ հատկանիշները նվիրում է ստեղծագործական աշխատանքների։

1. Հ. Ղևոնդ Ալիշանը գտնում է, որ երաժշտագետն ապրել է մեհաստանեորդ դարում։ Սակայն Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանն այդ տեսակետն անհիմն է համարում։

2. Մխիթար Այրիվանեցու մատենագրական արժեքավոր գործը «Ժամանակագրությունն» է, որ լույս տեսավ 1860 թվականին Մոսկվայում։ Ունի նաև բազմաթիվ գծեր։

Այրիվանքումն էլ նա հանդես է գալիս Երաժշտական ասպարեզ և երգեր է սահմանում տերունական ու սրբերի տոներին։ Սակայն, երաժշտագետի կյանքի պատմության համար ավելի կարևոր նշանակություն ունի այն, որ նա վանքի առաջադեմ միաբանների և ժամանակի գեղարվեստասեր հայ հասարակության կողմից ճանաչվում է և գնահատվում ո՛չ միայն իր հորինած եկեղեցական-հոգևոր երգերով, այլ իր կերտած երաժշտական «քաղցրավանկ» եղանակներով։

Այդ երգերի մշակումները, որոնք բնորոշում են նրա երաժշտական արվեստի լեզուն և զարգացման գիծը, հանդիսանում են երաժշտագետի ստեղծագործական ժամանակի էական հատկանիշները։ Այդ նոր եղանակներն էլ ընդգծում են, որ Գոգիկն առաջին արվեստագետներից մեկն է, որն իր ձեռքում բարձր է պահել 8-րդ դարի ռեալիստական երաժշտության դրոշը։ Այդ տեսակետից նա իր արժանավոր տեղն ունի պատմաշրջանի նոր եղանակների՝ աշխարհիկ երաժշտական արվեստի, ստեղծագործական որոնումների բնագավառում։

Սակայն ընդգծենք և այն, որ նրա երաժշտական այդ նոր նվաճումները, «քաղցրավանկ» եղանակները, դուր չեն գալիս դարաշրջանի պահպանողական հոգևոր դասի մշակներին։ Ահա՛ այդ մասին Մխիթար Այրիվանեցու վկայությունը. «Բայց յաղագս քաղցրավանկ եղանակի նորա տնկեցաւ ի նա ախտ ամբարտաւանութեան»։

Գոգիկի երաժշտական նոր եղանակները ծանր և քացասական տպավորություն են թողնում նաև Այրիվանքը հյուր եկած Ստեփանոս եպիսկոպոսի հոգու վրա, որից երաժշտագետը նույնիսկ հանդիմանություն է ստանում։ Այդ հանգամանքը խորապես հուզում է Գոգիկի հոգեկան աշխարհը։ Այդ օրից էլ նա խոր թախիծով թողնում է վանքը և առանձնանում Այրիվանքի այրերից մեկի մեջ, ուր իր կյանքի վերջին շրջանն անց է կացնում ճգնությամբ։ Այնտեղ, քարայրի պատերի ներսում, նա ամփոփվում է ինքն իր մեջ և, հեռու վանքի միաբաններից, իր աշակերտներից ու ժողովրդից, իր «քաղցրավանկ» երգերն է երգում իր համար, մինչև իր կյանքի դժբախտ վերջալույսը։ Այդ հանգամանքն են հաստատում Մխիթար Այրիվանեցու հետևյալ պարզ, բայց հուզիչ տողերը. «Իսկ յետ քաղում ժամանակաց, շինեցաւ այր ընակութեան նորա խորան փառացն Աստուծոյ և սեղան պատարագիս։ Ահա նման տխուր վախճան է ունենում 8-րդ դարի առաջին կիսում ապրող և ստեղծագործող վաստակավոր երաժշտագետը։ Ճիշտ է, որ նա հանում արվեստի խոր լոությամբ տանում է ամեն տեսակ հալածանք և տարբեր վերաբերմունք, սակայն մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում «քաղցրավանկ» երաժշտության սկզբունքներին։ Անժխտելի է և այն, որ նա իր նոր երգերի որոնումներով ճանապարհ է հարթում հայ աշխարհիկ-ժողովրդական երաժշտության արվեստի համար, որի լավագույն հիմնադիրներից մեկն է հանդիսանում։ Նրա այդ դերն արժանի է առանձին ուշադրության։

Այժմ մի հանգամանք պարզ է, որ 8-րդ դարի առաջին կեսի հայ երաժշտության զարգացման խնդրում Գրիգոր քահանա Գրոգիկը նշանակալից դեր է կատարել և իր ստեղծագործություններով նա հնագույն հայ երաժշտական արվեստի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։

ՊԱՐԳԵՎ ԱԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը 18-րդ դարի հայ ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկն է։ Նա քսան տարի շարունակ ճիգ ու ջանք չի խնայել աջակցելու հայ ժողովրդի ազատագրության՝ թոթափելու պարսկա-թյուրքական արյունոտ լուծը։ Նա արել է նմանապես հնարավորը՝ ամրապնդելու հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը։

Մեր նյութից դուրս է այստեղ խոսել հայ ազատագրական շարժման գործում Հովսեփ արքեպիսկոպոսի կատարած դերի մասին ընդհանրապես։

Ներկա հոդվածով մենք նպատակ ունենք լուսաբանել Հովսեփ արքեպիսկոպոս Արղության գործունեությունը տպագրության ասպարեզում, որը, վերջին հաշվով, դարձյալ կապված է եղել հայ ազատագրական շարժման հետ, քանի որ նա իր այդ ձեռնարկով նպատակ է ունեցել զարթեցնել հայերի մեջ ազգային ինքնագիտակցության գաղափարը և մտավոր սնունդ մատակարարել ժողովրդական լայն շրջաններին։

Հովսեփ արքեպիսկոպոսը շատ լավ զգում էր, որ հայ ժողովրդի ազատագրության գործի համար մեծ նշանակություն ունեն հայ պատմիչների թողած հարուստ ժառանգության հրատարակումն ու ընթերցումը. նա իր մի նամակում գրում է. «... Ազգն մեր ծարափ են ընթեռնլոյ պատմագիրսն, իսկ դրա համար անհրաժեշտ էր հիմնել տպարան։

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, հետևելով իր մեծ ու եռանդուն ուսուցչին՝ Սիմեոն Երևանցուն, դեռ շատ վաղ ցանկանում է Ռուսաստանի հյուսիսային շրջաններում, ի դեն ամեն զոհողության, ապարան բաց անել։ Այս կապակցությամբ նա հրկար տարիներ թանակցություններ էր վարում Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ՝ Ամստերդամի հայ տպարանը ձեռք բերելու համար, որը սակայն, ի վերջո, անհաջողության է մատնվում[1]։ Արղության արքեպիսկոպոսը մինչև Ռուսաստանում հայկական առաջին տպարանի հաստատումը, ստիպված է լինում զոհանալ Եվրոպայում գործող հայ մշակներին տպագրական գործեր միայն հանձնարարելով։ Այդպես, 1780 թվականին Լոնդոնում Արղության ցանկությամբ հրատարակվում է «Դաւանութիւն հաւատոյ ընդեղեցոյ Հայաստանեայց» գիրքը, «թարգմանութիւն ի հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յովհաննիսէ Սկրոտերեանց», որը պարունակում է նաև Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմք» լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն թարգմանության հետ միասին և որը լույս է տեսնում Գրիգոր Խալդարյանի տպարանից։

Ռուսաստանում հայերեն լեզվով առաջին տպարանը հիմնում է դարձյալ վերոհիշյալ ջուղայեցի խոջամալի որդի խոջա Գրիգոր Խալդարյանը 1781 թվականին[2]։

---

1. Գյուտ ավագ քահանա Ազանյան, «Դիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1911 թ., գիրք Թ, էջ 487 (ձեռագրությունը)։

2. Տպարանի հիմնադիր Գրիգոր Խալդարյանը չպիտի շփոթել նրա պապի հայր Գրիգոր Խալդարյանի հետ, որը հիշված է 1713 թվականին Ամստերդամում

Հայ տպագրության այդ չարքաշ մշակի մասին կենսագրական քիչ տեղեկություններ կան։ Գրիգոր Խալդարյանի ու նրա հիմնադրած տպարանի մասին կցկտուր տեղեկություններ ենք գտնում 1783 թվականին Պետերբուրգում հրատարակված «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից» գրքի հիշատակարանում։ «Վասն հարկաւորութեան իմիք ելեալ յերկրէն Հնդկաց գնացի յերկիրն Անգլիացւոց և ի մեծ քաղաքն Լոնդոն,— գրում է Խալդարյանը,— և մնացի իբր ամս տասն. և ի միջոցի սոյն տասնեքի ամացս անդադար որոնէի գտանել զարհեստաւոր մի, զի փորագրեալ տայցէր ինձ զտառս հայկականս. որք թէպէտ բազումք կային, բայց ոչ կամէին շինել և տալ ինձ զպոզպատեալ տառսն, և ոչ զմայր տառիցն, այլ միայն զկաղապարեալսն, յաղագս որոյ տակաւին մնացի ի նոյն տենչմանս անկատար, բայց լցուցիչն ամենայն կարօտութեանց՝ ելից և զիմ բաղմամեայ փափագ սրտիս առաքելով առ ի յանակնկալ ժամու զար[Հ]եստաւոր ոմն անգլիացի, զոր նկեալ և իմացեալ զներարմադրեալ խորհուրդ սրտիս, յանձն էառ շինել և տալ ինձ զայն, զոր խնդրէի. և իմ հաճեալ բանից նորին պատուէր եւոու փորագրել զերիս տեսակ գիրս. զորքան վարձս խնդրեաց, զայն և խոստացայ տալ անխնայօրէն։ Եւ ի յաւարտելն նորին զտառսն, հարկ եղև մեզ վերստին դառնալ յերկիրն Ռուսստաց, ի կայսերանիստ և աստուածապահ մայրաքաղաքն Սանկտպետերբուրգ։

Հիշատակարանից երևում է, որ Գրիգոր Խալդարյանը, նախքան իր տպարանի Լոնդոնից տեղափոխելը, եղել է Ռուսաստանում, ուսումնասիրել է հայկական տպարան այնտեղ հիմնելու հնարավորությունը և նոր միայն փոխադրվել է Պետերբուրգ։ Գրիգոր Խալդարյանը, բացի Արղության արքեպիսկոպոսի ցանկությամբ տպած վերահիշյալ գրքից, Լոնդոնում այլ գրքեր չկարողացավ հրատարակել, միայն Ռուսաստանում, բարեկամական միջավայրում և հայկական մեծ գաղութների առկայության պայմաններում, նա հնարավորություն ստացավ իր լուսավորական օգտաշատ գործը մեծ թափով ծավալելու։

Պետերբուրգում տպարան հիմնադրելու առաջին օրերից, Գրիգոր Խալդարյանը արժանանում է ռուսահայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղության աջակցությանը։ Արղությանը թեմի գործերով եկել էր մայրաքաղաք ու վայելում էր կայսրուհու և արքունիքի համակրանքն ու հովանավորությունը։ Սրբազանը քաջալերում է Խալդարյանի ձեռնարկը՝ խոստանալով աջակցել նրան՝ գրքեր հանձնարարելով տպելու։ «Տնեսեալ զնորակազմ տիպս մեր, կարի տուրախ եղև (Հովսեփ արքեպիսկոպոսը— Պ. Ա. Գ.),— պատմում է հիշատակագիրը,— և հրամայեաց տպել զփոքր տետրակն այբուբենից, զոր և տպեցի ծախիւք իմոք, և խոստացաւ ևս ընձեռել մեզ զգրեանս զանազանս առ ի տարելոյ։

1781 թվականին այբբենարանը տպելուց հետո, Խալդարյանը նկատում է, որ իր տառերի տեսակները քիչ են, ուստի և Լոնդոնից հրավիրում է իր ծանոթ փորագրիչ վարպետին և նոր տառեր փորագրել տալիս։ Հովսեփ արքեպիսկոպոսն օգնում է Խալդարյանին թե՛ բարոյապես և թե՛ նյութապես։

Եվ այսպես, Պետերբուրգում սկսվում են հայերեն գրքերի տպագրական առաջին աշխատանքները։

1783 թվականին տպարանատերը, իր անձնական ծախքով, հրատարակում է ժամագիրք՝ «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից» խորագրով։ Սա բավականին հաջող տպագրական մի գործ է։ Գիրքն ունի 9,5×14,5 սմ. մեծություն, բաղկացած է 577 միապսակ էջերից, յուրաքանչյուր էջում 25 տող։ Տառերը պարզ են, դյուրընթեռնելի և գեղեցիկ շարված։ Գրքում, բացի գլխատառերից, որոնք հայկական մանրանկարչությունից վերցված թռչնագրեր են, մնացած

տպագրված «Հայելի Աստուածաշունչ» գրքի հիշատակարանում։ «...Դարձեալ յիշեցէք ի Տէր,— կարդում ենք ամենեղ,— զազնուամեծար աղէն խոյայ Գրիգորն և զանդրանիկ որդին Յովհաննէսն ի Տէր հանգուցեալսն։

Արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանը, իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ, բերելով այդ հատվածը (էջ 168), կասկածանքով է վերաբերվում հիշատակարանում հիշված Գրիգոր անվանը՝ թե «Արդյոք պապը չի՞ եղել այս Խալդարյան Գրիգորի»։ Որ իսկապես խոսքը Գրիգորը Խալդարյան Գրիգորի պապի հոլրն է եղել, այդ պարզ երևում է 1783 թվականին հրատարակված «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից» գրքի հիշատակարանից, ուր ասված է. «Հայցեմ աստուծոյ ի ջերմեռանդ վայելողացդ գրքոյս, զի թիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զհայրն իմ զՅուղաբեցի Խալդարեանց Խոջամալն... զպապն իմ զՀովսեպ Յովհաննէսն և զհայրս պապուն իմոյ զիսոջայ Գրիգորն»։

1. Խալդարյանի տպարանն ունեցել է ինն տեսակ հայերեն և երկու տեսակ ռուսերեն գրեր, ինչպես նաև բազմաթիվ պատկերներ (կլիշեներ) (տե՛ս Գյուտ ավագ քահանա Աղանյանի «Դիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1911 թ., գիրք Բ, էջ 14)։

զարդարանքները՝ խորանները, լուսանցազարդերը և Հին ու Նոր Կտակարանից տեսարաններ պատկերացնող նկարները, ռուսական ոճով են՝ վերցված ժամանակի ռուսական հրատարակություններից։ Գիրքն ունի հիշատակարան, որտեղ շարադրված է տպարանի հիմնադրման մանրամասն պատմությունը։

Մեկ ու կես տարվա ընդմիջումից հետո, 1785 թվականին, տպարանը լույս է ընծայում «Պատմութիւն Սուրբ Գրոց»ը։ Գրքի տիտղոսաթերթում նշված է. «Արարեալ համառօտ հարցմամբք և պատասխանեաք, յաղագս դեռահասակ մանկանց։ Թարգմանեալ ի ռուսատաց լեզուէ ի հայ բարբառ ի պարոն Յարութիւնէ Դաւթեան ջուղայեցւոյ։ Եւ տպագրեալ հրամանաւ Տեառն Յովսէփայ սրբազան արհի եպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսատաց... Յամի Տեառն 1785։ Իսկ ի Թուին Հայոց ՌՄԼԴ։ Ասխիւք և տպիւք պարոն Գրիգորի։ Ի Սանկտպետերբուրգ Կրկին հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանցն։» Գրքում տեղավորված է նաև իրավաբանական բովանդակությամբ մի տեքստ, որը վերնագրված է՝ «Առ ի ընլոյ զպարապ տեղիս՝ եղաք բան ինչ յաղագս իրաւանց։ Թարգմանեալ ի յանդլիացւոց լեզուէ ի հայ բարբառ ի պարոն Գրիգորէ Խալդարեանց կոչեցելոյ։» Գիրքը բաղկացած է 68 էջերից և ունի 10×16 սմ. մեծություն։

Նույն 1785 թվականին Խալդարյանը լույս է ընծայում նաև Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի»։ Դա՝ այդ գրքի 8-րդ տպագրությունն էր. առաջին անգամ լույս էր տեսել Վենետիկում 1643 թվականին։

Արղությանը եպիսկոպոսը միշտ իր նամակներում ցուցմունքներ էր տալիս Գրիգոր Խալդարյանին, օգնում էր գրքերի տպագրության անթերի լինելու գործին, ոգևորում էր տպարանի անխոնջ աշխատողին, ուղղում էր թույլ տված սխալները, աշխատում էր տպագրված գրքերի տաքածման գործով՝ կապ պահելով Կոստանդնուպոլսի և Հնդկաստանի գրասեր հայերի հետ, մյուս կողմից, նա երկար որոնումներ էր կատարում վանքերի մատենադարաններում և զանազան անձերի մոտ ու տպագրության համար պատրաստում մինչ այդ անտիպ մնացած բազմաթիվ ձեռագրեր։

Արղությանի այս շրջանի գործունեության մասին հարուստ նյութեր են պարունակվում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում պահպանվող և Արղությանի ձեռքով իսկ գրի առնված թղթակցություններին մի քանի մատյաններում։

1786 թվականի հոկտեմբերի 18-ին Արղության արքեպիսկոպոսը Նոր-Նախիջևանից գրում է Գրիգոր Խալդարյանին, որ նրանից ստացել է 18 հատ ժամագիրք, 50 հատ «Յիսուս Որդի» գրքից և 250 հատ Սուրբ Գրոց պատմություն և այլն։ «Եւ... ամբողջ առաքեցի ի Ստանպոլ, կէս գրեանցն տեղոյ իշխանաց ընծայեցի գրով իմով, իսկ կէսն գրեցի շոտով ի Բասրայն— ի Հնդիկս առաքեալ, նմանապէս ընծայեալ իշխանացն ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

1785 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Պատմութիւն Սուրբ Գրոց»ի տիտղոսաթերթը։

դիմաց իմոյ։» Նույն նամակում տեղեկացնում է, որ Թիֆլիսի աննպաստ դեպքերի հետևանքով, գրքերի վաճառման գործը անհաջողության է մատնվել. Արղությանն այդ մասին գրում էր. «Մինչև այժմ առնող ոչ գոյ... Զի իւրաքանչիւր ոք զինքենէ խորհի թէ զերծանելոց իցէ արդեօք ի վերայ յարուցեալ թշնամտին, որք արդէն ի տուր և ի գերութիւն մղեն զնոսա։ Ապա Արղությանը անդրադառնում է Ներսես Շնորհալու «Յի-

սուս Որդիս գրքում տեղ գտած տպագրական վրիպակներին. «... Գիտացեալ իցեմ ի Յիսուս Որդւոյն ի տպագրութիւն բաւական սխալանք ունի, բայց ներելիք վասն միայնութեանդ, և քանի ոտանաւոր խրատ առաքեցի առ քեզ դնել ի վերին Յիսուս Որդւոյ, դու ոչ եղեր...»[1]:

1786 թվականին Խալդարյանի տպագրատունը հրատարակում է չորս գիրք՝ «Աստուածաղերս», «Ճաշոց», «Աւետարան» և


ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ
ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐՔ.
Հարդարեալ Գիտնական և խստակրօն սուրբ Վարդապետին Եղիշէի.
Աշակերտի Սրբոց Թարգմանչացն մերոց Իսահակայ և Մեսրոպայ.
Ի ԱՄՍԱԿՏՊԵՏՈՒՄԻՆ.
Յորոմանէ յատրանոցն պէն Գրիգորի.
Ի Տէրն 1787. Իսկ ի Քրիստոսէ Հայոց ՌՃԼԶ.

1787 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Եղիշէ պատմագիրք»ի տիտղոսաթերթը:

«Վէմ գայթակղութեան (այսինքն՝ սկիզբն և պատճառ պատառման երկուց եկեղեցեացն Արևելյականի և Արևմտականի), շարադրեցեալ յԻրիայ Մենիադէսէ եպիսկոպոսէ...», իսկ հաջորդ տարին՝ երկու գիրք՝ «Եղիշէ» և «Կարճառոտ ժամագիրք»:

Եղիշեի հրատարակությունը նշանակալից երևույթ էր հայ տպագրության պատմության մեջ, քանի որ 1764 թվականի Կոստանդնուպոլսի հրատարակությունից հետո՝ այդ գրքի երկրորդ տպագրությունն էր։ Գիրքն ունի 9×14,5 սմ. մեծություն և բաղկացած է 413 էջերից։ Եղիշեի տիտղոսաթերթում նշված է. «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք։ Շարադրեալ գիտնական և խստակրօն սուրբ վարդապետին Եղիշէի, աշակերտի Սրբոց Թարգմանչացն մերոց Իսահակայ և Մեսրոպայ և այլն, ամենեքեանք և մասնաւորապէս և ազնուաւորեալ Մանիչարեանց Աստուածատրեան ազնիւ պարոն Մարգարին։ Ցամի Տեառն 1787։ Իսկ ի թուին Հայոց ՌՃԼԶ» և այլն։ Գրքի առաջաբանը վերնագրված է հետևյալ կերպ. «Առ ընթերցող տուր մատենիս. նախերգանք արարեալ ուրումն քանասերի Պետրոսեան Ստեփաննոսի Ակնեցւոյ» (էջ 3—12)։ Գրքի հիշատակարանում խոսվում է գլխավոր մեկենաս Մանիչարյանցի և նրա մերձավորների մասին, հիշատակվում է նաև «երջանկազարդ պարոն Յոհաննէսն՝ որ և է հարիւրապետ ի մէջ զօրացն Ռուսաց...»։ Հիշատակագիրը հետևյալ ձևով է բնութագրում Մանիչարյանցի առատաձեռնությունը. «... Զի բարեհամբաւ և խոհեմազարդ աղնուականս ըստ մեծի սիրոյն, զոր ունի առ ազգս իւր և ըստ գրատէր գարուց իւրոց՝ որ միշտ գաղձալ լինել յազգի իւրում այնք գարիք, որք գտանին ի զանազան ազգս, որոց գարեացն մի է և այս փոքրիկ գրքոյկս՝ արդեամբք և ծախիւք իւրովք հաճեցաւ ի լոյս ածել զսա ի վայելումն հայկազուն բանասէր ընթերցողաց։ Որ և սիրավառ բաղձանօք հետևի զայլ ևս քան զայս մեծածախ՝ ազգաշահ և հոգեշահ գրեանս տպեցուցանել տեառնապարգև գոյիւք իւրովք, ի յիշատակ ինքեան և իւրայնոցն։

Ապա տպագրողը ներողություն է խնդրում գրքում եղած վրիպակների համար. «Բայց տեսէ ուր ուրեք գտանիցի ի սմա սխալանս ինչ, առ այնս ներել աղաչեմ, քանզի այն ոչ է լեալ ի կամաց, այլ ի վրիպմանէ աչաց, որովհետև չիք անսխալ բայց միայն Աստուած, որ և օրհնեալ է յաւիտեանս ամէնս։

Արդուության արքեպիսկոպոսը մի կողմից տպագրված գրքերը ուղարկելով արտասահման, մյուս կողմից էլ ձեռնամուխ էր լինում նոր գրքերի տպագրման գործին։ Արդուությանը, Գրիգոր Խալդարյանին գրած մի նամակում գրում է, որ «Աղայ Մինասն հաճեցաւ թարգմանութիւն Մովսէսի Խորենացւոյն, և տպումն հայերէն և ռուսերէն իւր խարջովն

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 34ա—բ։

որ և ինքն գրեաց քեզ...»[1]։ Բայց Խորենացու պատմությունը լույս չտեսավ, մեզ անհայտ եղող պատճառների հետևանքով։ Արղությանը դարձյալ իր մի նամակում նշում է, որ Գրիգոր Խալդարյանին ուղարկել է նրա խնդրած «Ծիփրեմ խուրիոն, նաև «Պետրոս Թագատրի համառօտ պատմութիւնը, որ «Պարոն Ցարութիւն Դաւթեան Թարգմանեաց ի բարբառ մեր, ըստ խնդրոյ Թարեան աղայի որդւոյն, և ի մէջը սրբագրեցաւ որքան և կարեցաք վերահասու լինելու։ Արղությանը հանձնարարում է «Տպել զվեց (600) հատ, երկու հարիւր հայերէն և ռուսերէն, իսկ չորս հարիւրն միայն հայերէն, որ արտաքոյ վիճակն իցէ գնալոյ...»[2]։ Վերոհիշյալ գրքերի տպման մասին էլ տեղեկություն չունենք. հավանաբար նյութական աննպաստ դրությունն է պատճառ դարձել, որ այդ կարևոր գրքերը, հակառակ Արղությանի և Խալդարյանի մեծ ցանկությանը, չեն հանձնվել տպագրության։

Հակառակ Արղության արքեպիսկոպոսի և Գրիգոր Խալդարյանի գերմարդկային ջանքերի, տպարանը ընկնում է պարտքի տակ։ Արղությանը այլևս ի վիճակի չէ օգնելու. նա նկարագրելով Հովհաննես Լազարյանին իր անձուկ վիճակի մասին, գրում է, որ ապրում է ծառապեալ կենաց, քաղցածնացեալ... այս չէ իրաւունք, մինչև ե՞րբ պարտիւք ապրեմ...»։ Գրիգոր Խալդարյանին դրած նամակում նա գրում է. «Եթէ ես ունիցէի ինչ, սրտագէտն Աստուած գիտէ, որ ես զքեզ այլոց ապաստան չէի թողու, բայց ի ժողովրդենէ հատեալ կայ մուտ մեր և երեք տարի է ոչինչ չտան, մնացեալ եմ ողորմելի։ Նամակի շարունակության մեջ ասվում է, որ եթե կաթողիկոսը և ժողովուրդը ցանկանան, և ինքը Կոստանդնուպոլիս դնա, ավելի օգտակար կլինի տպարանի գործին[3]։

Արղության արքեպիսկոպոսը աշխատում է տպարանը դուրս հանել այս վիճակից. անընդհատ նամակներ է գրում Ռուսաստանի, Կոստանդնուպոլսի և Հնդկաստանի հայերին ու ազդեցություն խնդրում։ Նա ցանկանում է, որ իր մոտ լինի սիրելի Խալդարյանը. «Ո՞հ, քէ լինէիր ինձ մերձ գոնեա բոլոր մխիթարութիւն իմ դնելոց էի ի տպարանդ և դովաւ բաւական մխիթարութիւն ընկալնելոց էի վշտացեալ սրտի իմոյ...»[4]։

«Որպես դու նմանապէս և ես սիրահարեալ եմ ի տպարանդ այդ, և ցանկամ յառաջացման դորին և յաջողութեան քոյ...»[5],— այսպես էր գրում Արղությանը Խալդարյանին։ Ու նրանք մխիթարում էին մեկը մյուսին. նրանք նույնացել էին իրենց վտամ գաղափարներով ու նույն կարիքավոր վիճակով։ Արտասահմանից ստացված նամակները



1788 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Շափիղ լեզուագիտութեան» գրքի տիտղոսաթերթը։

խրախուսում էին նրանց։ Արղությանը գրում էր Խալդարյանին, որ «... Ի Պօլսոյ մեծ և փոքր գրեն մեզ ամենայնքն և տեղւոյդ գրեանցն խնդրենք»։

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը 1786 թվականի դեկտեմբերի 20-ին Գրիգոր

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր N 2949, թ. 6ա։
2. Նույն տեղում, թ. 27ա։
3. Նույն տեղում, թ. 26ա—բ։
4. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր N 2949, թ. 27բ։
5. Նույն տեղում, թ. 31ա։
6. Նույն տեղում, թ. 30բ։

Խալդարյանին գրում է այն մասին, որ ինքը գրել է բոլոր ազգին մինչև Հնդկաստան և կհուսա, որ նրանք կօգնեն։ Մի այլ նամակում, խորհուրդ է տալիս նրա տպագրած գրքերը Հնդկաստան ուղարկել՝ այնտեղ վաճառելու համար. «ԵԹԷ շնորհիւ Աստուծոյ մտցեն ի Հնդիկս տպագրեալքն մեր, տպարանիս մեծ օգուտ է լինելոց ըստ հասարակ գրելոյն իմոյ առ նոսա, մանաւանդ Շամիր աղալէնս»[1]։

1788/9 թվականին, Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած Ներսես Մեծարենցի «Հնդնաբերականի» տիտղոսաթերթը։

Հետագայում Արղությանը Պետերբուրգի հայկական տպարանը ծանր վիճակից դուրս բերելու համար առաջարկում է Խալդարյանին՝ տպարանը տեղափոխել Նոր-Նախիջևան։ Նա խոստանում էր Խալդարյանի ընտանիքին Նոր-Նախիջևանում ձրի բնակարան տալ և նյութական անհրաժեշտ պայմաններ ստեղծել։ Նրա կարծիքով, նախ որ՝ Նոր-Նախիջևանը զուտ հայկական կենտրոն էր և անհրաժեշտ էր մի տպարանի գոյությունը, իսկ երկրորդ, որ այդտեղից ավելի հեշտ էր տպված գրքերը Կոստանդնուպոլիս և Հնդկաստան ուղարկելը։ Իր նամակում նա հայտնում է դարձյալ, որ տպագրած գրքերից «ընծայ առաքեցի ի Պոլիս և ի Հնդիկս բարեկամաց մերոց վասն սիրահար առնելոյ նոցա նոր տպարանիդ, որում ամենեքեանք հաւանեալ են և սպասեն նորանոր գրեանց ստանալոյ»[2]։

Ստանալով Հովսեփ արքեպիսկոպոսի հրավեր նամակները, Խալդարյանը պատրաստվում է տեղափոխվելու Նոր-Նախիջևան, բայց հիվանդանում է և վախճանվում՝ թողնելով տպարանի վրա 12.000 ռուբլու պարտք։ Նա մահանում է այն ժամանակ, երբ դեռևս Եղիշեի տպագրությունը չէր ավարտված։ Այդ երևում է Եղիշեի վերջին էջից, որտեղ գրված է հետևյալը. «Ի վաղճանի յարտնի լիցի բարեպաշտ ընթերցողացդ, պատմագիրքս այս, մինչ ոչ էր ի կատար հասեալ տպելն, տէր և գործատար տպարանիս նախ յիշեալ հեզահոգի պարոն Գրիգոր Խալդարեանն Ջուղայեցի հանգեաւ առ Քրիստոս յամի Տեառն 1787 ի օգոստոսի ութն, որոյ հոգեծին սիրելի որդի և ձեռնատու աշակերտ, քարեբարոյ պարոն Մկրտումն, քաջաշան աշխատութեամբ ի հոգս տարեալ ըստ հեղինակին, աւարտ հասոյց, որոյ Տէր տացէ կարողութիւն և յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Ամէն»։

Խիստ ծանր է եղել այն ժամանակվա պայմաններում տպարան կազմակերպելը և մանավանդ հրատարակված գրքերի վաճառքից տպագրության ծախսերը ծածկելը։ Իրավացի էր Խալդարյանը, երբ իր հրատարակած գրքերից մեկի հիշատակարանում գանգատվում էր ասելով. «Առ այս (տպարան հիմնելու համար— Գ. Ա. Գ.) թէ որքան աշխատանս և ծախս արարաք՝ այն ամենայն ստուգապէս փորձողացն է յայտնի։ Սակայն այս բոլորը չէ. հայրենասեր և անխոնջ Խալդարյանը ոչ միայն իր ողջ հարստությունն է ներդնում հայերեն գրքեր հրատարակելու գործում, այլև հաճախ միայնակ է կատարում ամբողջ տպագրության գործը։

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը Կրեմենչուկից 1787 թվականի սեպտեմբերի 10-ին Պետերբուրգի հայ բնակիչ պարոն Փիլիպոսին գրած իր նամակում դառն կսկծով ողբում էր մահը անխոնջ ու անձնվեր աշխատող հայրենասեր մշակին՝ Գրիգոր

1. «Փորձ», Տփխիս, 1881 թ., № 2, էջ 23։

2. «Փորձ», Տփխիս, 1881 թ., № 2, էջ 23։

Խալդարյանի, Արղությանը իր այդ նամակում գրում է, որ բոթալի լուրը ստացել է. «...Եղաք կիսակենդան շնչալքաղ և հոգէսպառ, յաղագս յանկարծ փոխեցման մեր պատուական ազիզ չան աղայ Գրիգորին, օրահաս անկեալ որպէս որդէմեռ հայր. կսկծմամբ մեծաւ մօրմօքիմ, և զաղիողորմ արտասուս միաւորեմ ընդ ձերդ դառնորակ արտասուաց և լամ զկորուստ անձին բարեկամին իմոյ և ասեմ. Ա՛յ երանելի, զիա՞րդ խափանեցար զառաջադրութիւն մեր, զիա՞րդ անկատար թողեր զփափագ սրտի իմոյ և գնացեր առ Քրիստոս. ո՞վ ակնուցու զհոգի քո, ո՞վ զանձն գնել կարեաք ի վերայ ազգին, ո՞վ բոլոր կեանս իւր ծախիցէ ի պատիւ նորայ. ո՞վ արդեաք սիրահար լիցի իբրև զքեզ, որ ի բոլոր կեանս իւր նախադաս համարիցէ զշահաւէտութիւն բորոր ազգին քան զանձին իւրոյ հանգստութիւն։ Այժմ առ քեզ ձայնեմ, ո՛վ ազիզ բարեկամ, ո՛վ աշխատաւոր և վրդոտալի անձն. արի՛ ի նախիջևան, լի՛ց զփափագ իմ, արբո՛յ զպասեք իմ, յագեցո՛յ զքաղցս իմ, զոր ունէի առ գործարանդ այդ՝ քև հաստատեալս և ապա հանգի՛ր ի տառապանաց քոց և ի յերկանց։ Արդ, դեռ չես ճաշակեալ ինչ զվայելչութիւն տաժանեալ գործոցդ, այլ հանապազ զդեմերմունս ընդ զանազան հոգոց, խառնեալ յարաժամ տանեանօք մաշեալս։ Տո՛ւր ինձ ճաշակ ի քաղցր վաստակոցդ, որում հանդ աղականեմ և ապա դու ճաշակեա՛յ զվճիռն հասարակաց, ո՞հ, որ անժամանակ ածեր ինձ սուգ անդէպ ժամու, խափանեցեր զիմս առաջադրութիւն. և անդէն արարեր զիս և զրաղձանս իմ...»[1]։

Արղության արքեպիսկոպոսի համար շատ ծանր կորուստ էր նվիրված աշխատող իր սիրելի Գրիգոր Խալդարյանի մահը, բայց նա հարվածների տակ կքողը չէր։ Հայ ժողովրդի ազատագրման համար Արղությանի մշակած ծրագրերում մեծ տեղ էր գրավում ժողովրդի լուսավորության հարցը, և սրանից հետո էլ մենք տեսնում ենք, թե նա ինչպիսի մեծ եռանդով ու ամբողջ ոգով մաքառում է՝ կանգուն պահելու այդ տպարանը։

Սահակ վարդապետին իր գրած նամակում Արղությանը, ողբալով Խալդարյանի կորուստը, նաև գրում էր, որ «Բերկրութիւն հոգւոյս Եղեալ էի ի տպարանս մեր, թէպէտ զզանազան ցաւս կրէի և զվնասս...»։ Նկատի ունենալով հանգուցյալի թողած մեծ պարտքը, նույն նամակում Արղությանը խորհում է պարտքը հատուցելու միջոցների մասին և ապա ասում. «Մեծ ամօթ է մեզ հոգեկից եղբայր, [որ] այսպիսի տպարանն ի ձեռաց թողումք...»[2]։ Գրում է, որ նա էլ օգնի աշխատանքներին։

Խալդարյանը վախճանվելուց հետո, Վենետիկի Մխիթարյանները, որ վաղուց աչք ունեին նրա տպարանի վրա, փորձում են վճարել 3.000 թուման պարտքը և ձեռք բերել տպարանը։ Սակայն Արղությանը երբ իմանում է այդ, անմիջապես Թադեոս վարդապետին ուղարկում է Պետերբուրգ՝ տպարանը պահելու, մինչև ինքը կկարողանա դրամ ճարի[3]։

Ներսես Շնորհալի
(Աստանանված Պետերբուրգում Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Ընդհանրական»-ից)

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 49բ—50ա։

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 49բ։

3. Կոստանդնուպոլսեցի Թադեոս վարդապետ Մարությանը, որ իրեն համարում է Զաքարիա պատրիարքի աշակերտ, Ռուսաստան էր եկել Արղությանի հրավերով և նշանակվել Ս. Խաչ վանքի վանահայր ու վանքում բացված դպրոցի դեկավար։ Հետագայում նա դառնում է սրբազանի անձնական քարտուղարը և նրա բոլոր ձեռնարկումների լավագույն ալակիցը։ Ունեցել է հայկաբանի համբավ։ 1801 թվականին Հովսեփ արքեպիսկոպոսի հետ էջմիածին գնալիս, Թադեոս վարդապետը ճանապարհին հիվանդանում է և վախճանվում Դզլարում։

«Իմ հոգսն այժմ վասն պարտուցն է»,— գրում է Արղությանը աղա Փիլիպոսին։ Նա նամակներ է գրում թե՛ Ռուսաստանի և թե՛ արտասահմանի հայ գաղութներին և աջակցություն է խնդրում։ Մոսկվայի հայերին գրած իր նամակում Արղությանը պարզ կերպով ցույց է տալիս, որ տպարանը պարտքերից ազատելուց և աշխատանքի անցնելուց հետո, նրա շահով Նոր-Նախիջևանում դպրոց է բաց անելու, որ տպարանն ու դրպ-

Ներսես Շնորհալի Արոռի վրա բազմած
(Առանձնված Պետերբուրգում Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Ընդհանրականից»)

րոցը, լուսավորության այդ երկու օջախները անքակտելի կերպով կապված են իրար։ Արղության արքեպիսկոպոսը իր այդ նամակում ասում էր. «... Զի ոչ դպրատունս առանց տպագրատան զհաստատութիւն կարէ առնել, և ոչ տպագրատունս առանց դպրատան՝ զմշտնջենաւորութիւն, ապա հարկաւոր է զերկուսն ի միասին յառաջացուցանել և երկոցունց ի միասին թեւակցութեամբ՝ զերկոսին ևս կառավարել, և այնու զեղջիւր իմաստութեան և իշխանութեան հայկազանցս ներ աստուածախնամ տէրութեանս այսմիկ բարձրացուցանել»[1]։

Այս շրջանում հատկապես ծանր է եղել Արղության արքեպիսկոպոսի դրությունը. մի կողմից նա պարտքերի տակ ծանրաբեռնված է, իսկ մյուս կողմից իր առողջական դրությունն էլ խիստ վատթարացած։ Ինչպես ինքն է գրում՝ նա տառապում է «քարի ցաւից և ամերձ է ի գերեզմանի»։ Տպարանը պարտքերից ազատելու համար իր թափած երկարատև ջանքերը մաշեցնում են նրա հոգին. «Ի պատճառ այդմ տպարանի իմ կեանքս մաշեցաւ և մաշեալ լինելոց է,— գրում է Արղությանը։ Նա իրեն նմանեցնում է Գրիգոր Շղթայակրին, գիտե, որ միայն իրեն է վիճակված հատուցելու այդ պարտքը, ու նա մինչև վերջ չի ընկճվում։ 1788 թվականի նոյեմբերի 1-ին Թադեոս վարդապետին հետևյալ ոգևորիչ տողերն է գրում. «... Սակս տպարանի առման և մեր լինելոյն լեր անվրդով. զի որպէս և քեզ խօսք եմ տուեալ, եթէ յումեքէ օգնութիւն ևս ոչ գտանիցի այժմ, երկաթ ի պարանոցս ձգեալ մուրալոց էի վասն նորա, ուր մնաց, որ աղնիւ ժողովուրդ իմ, յայտնի և աստ օգնել և ձեռնտու լինել խոստանան»[2]։

Մոսկվայի հայ ազգաբնակչությունը ցանկանում է վճարել ամբողջ պարտքը, այն պայմանով, որ տպարանը փոխանակ Նոր-Նախիջևան հաստատվելու, փոխադրվի Մոսկվա։ Ինչպես ասացինք, Արղությանը հետևյալ կերպ էր պատճառաբանում տպարանի Նոր-Նախիջևան փոխադրելու իր ցանկությունը. «ա) «... Նախ վասն բազմութեան նոցա (այսինքն Նոր-Նախիջևանի հայերը ի նկատի ունի։— Պ. Ա. Գ.) և զուտ հայոց ազգ գոլոյն անխառն այլոց ի մէջ, որք ցայսիտեան տեսել յուսամ. բ) «Վասն մերձ գոլոյն՝ Գոլսոյ, Անատոլու և Ռումելու, ուր տպեալ գրեանք պարտին գոլ...»[3]։

Արղությանի նպատակը պարզ էր. անհրաժեշտ էր տպարանի շահով դպրոց պահել Նոր-Նախիջևանում, որպեսզի տգիտությունից ազատվի հայ ժողովուրդը։ Հետևաբար, նա ոչնչով չէր կարող գիջել իր ազգօգուտ և միանգամայն ճիշտ եղող ծրագրից. «Ահա թե ինչո՞ւ այդ նպատակի իրագործման համար նա կանգ չէր առնում նույնիսկ իր անձնական զարդեղենները վաճառելուց. այդ կապակ-

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2948, թ. 58բ։
2. Նույն տեղում, թ. 86ա։
3. Նույն տեղում, թ. 96ա։

ցությամբ նա գրում է. «Եթե Մոսկովին ժողովուրդքն չկամեն մասնակցել... ինձ Աստուած ողորմելոց է, ամօթով չեմ մնալոյ. մէկ մատնիս ծախեցի, միւսքն ես ծախեցիցս»[1]։

Սխալ պետք է համարել այն կարծիքները, որ իբր Արղությանին հաջողվել է շուտով հաստատելու տպարանի պարտքը. դեռևս 1790 թվականի օգոստոսի 26-ին Նախիջևանում տպված «Ողբք և հառաչանք» գրքույկում հիշվում են նորանոր նվիրատուների անունները, նշելով, որ «օգնութիւն արարին պարտուցն տպարանին»։ Բայց այս բոլորը չէին խանգարում, որ Խալդարյանի տպարանը շարունակի իր տպագրական գործը։ Կարճ ժամանակով հետաձգվում է տպարանի տեղադրման գործը Նոր-Նախիջևան այն պատճառով, որ մերք գրքեր էին գտնվում մամուլի տակ, իսկ մյուս կողմից էլ Ս. Խաչ վանքի շինությունը դեռևս ավարտված չէր, քանի որ Արղությանը հենց այդ վանքում էր որոշել տեղադրել տպարանը։

1788 թվականին լույս է տեսնում ռուսերեն լեզվի մի ձեռնարկ, որի հեղինակը մի հայուհի էր, Կղեոպատրա Սարաֆյան անունով, որ ըստ Լեոյի, գրող Մարիամ Գարագաշյանից հետո 18-րդ դարի երկրորդ կին գրողն է հանդիսանում։ Ահա՝ Սարաֆյանի գործի վերնագիրը. «Գիրք որ կոչի բանալի գիտութեան։ Ոմանք սա ընդ իւր մասնաւոր բառարան և սկզբունք քաղաքական ուսմանց, արաբեալ և թարգմանեալ ի Ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, և ի Հայոց լեզուէ ի Ռուսաց բարբառ. Կղէօպատրայ դստեր առ ի Քրիստոս հանգուցեալ Մովսէսի Սարաֆեան, ի յօգուտ մանկանց և ամենից, որք ունին զկարօտութիւն և զպիտոյս, Ծախիւք նոյնոյ Կղէօպատրայ հօր հանգուցեալ Մովսիսի»։

Կղեոպատրայի բառարանը մի բավականին ստվար հատոր է, որի մի մասը՝ հայերենից ռուսերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերենից հայերեն թարգմանություններ են։ Գրքի սկզբում դրված են հայերեն և ռուսերեն այբուբեններ, այնուհետև բերված են միավանկ, երկավանկ և բազմավանկ բառերի օրինակներն ու նրանց պատասխանելու ձևերը, որից հետո սկսվում է բուն բառարանը, որտեղ տեղավորված են հատկապես այն բառերը, որոնք ամենից շատ են օգտագործվում խոսակցության մեջ։ Վերջում կան առօրյա կյանքը ներկայացնող զանազան արտահայտությունների նմուշներ՝ թարգմանված հայերենից ռուսերեն։ Գիրքն ունի 16,5×19,5 սմ. մեծություն և բաղկացած է 3 թերթից + 285 էջերից։

Այս հրատարակությունից հետո, հազիվ մի քանի ամիս անց, դարձյալ 1788 թվականին լույս տեսավ ռուսերենի ուսուցման համար մի երկրորդ ձեռնարկ, որի կազմվելու հետաքրքիր պատմությունը մեջ է բերել նույն ձեռնարկի առաջաբանում թագեոս վարդապետը։ Ըստ այդ պատմության, տպարանատեր Խալդարյանը, նկատի առնելով Ղրիմի

Մեսրոպ Մաշտոց
(Արտանված Գեռերյուզում Գրիգոր Խալդարյանի տպարանից լույս տեսած «Ընդհանրականից»)

հարց գաղթականության պահանջները, որոնք բնակեցված էին Ռուսաստանի հարավային նահանգներում և սերտ կապեր ունեին ռուս հասարակության հետ, անտեղյակ էին նրանց լեզվին, որոշում է հայերեն-ռուսերեն բառարան կազմել։ Այդ նպատակով էլ ժամանակ է լինում բառեր հավաքելու գործին, բայց աշխատանքը չվերջացրած վախճանվում է։

1. Հայկական ՍՍՌ Գետական մատենադարանի ձեռագիր N 2949, թ. 96ա։

Մինչ բառարանի գործը այսպիսի աննախանձելի վիճակի մեջ էր, Ներսես Շնորհալու «Ընդհանրականը» հրատարակելու համար Հովսեփ սրբազանի հրամանով Պետերբուրգ է գալիս Թադեոս վարդապետը։ Այստեղ խալդարյանի այրին՝ Կատարինե Զաքարովնան վարդապետին ցույց է տալիս ամուսնու գրած և գրատան անկյուններում ցաքուցրիվ ընկած բառարանի թերթերը և խնդրում նրան՝ «որքան կարելին իցէ՝ ի լրումն հասուցանել ի մի ժողովմամբ՝ զթերի և զանկատար զիրն երանելւոյն»։ Թադեոս վարդապետը կարճ ժամանակամիջոցում հավաքում է բոլոր բառերը և այբբենական կարգով դասավորում։ Գիրքն հրատարակելիս՝ վարդապետն այն անվանում է «Շաւիղ լեզուագիտութեան», «Զի ի բերանոյ իւրմէ՝ ունի բղխել զարդարութիւն ուղիղ ուսուցման բառից՝ և կանոնաւոր խօսակցութեանց,— գրում է վարդապետը,— զօրէնս և զողորմութիւն՝ ի լեզուի իւրում կրել։ Ճանապարհք բարեաց, և ամենայն շաւիղք սորա՝ խաղաղութեամբ»։ «...Զի ըստ շաւղացն հետոց ընթացողացն յառաջագոյն՝ ունի հանել զհետևողն ինքեան՝ ի յուղիղն և ի յարքունականն պողոտայ՝ կատարեալ իմաստից, պանծալի և պերճ բարբառոյն Ռուսաց»։ Գիրքը լույս է տեսել «արդեամբք և ծախիւք՝ նոյնոյ լուսահոգւոյն՝ պարկեշտասուն կենակից՝ Կատարինէ Զաքարովնայ ազնուուհւոյն»։ Կատարինեն առաջին հայուհին էր իրրև հրատարակչուհի։ Գիրքն ունի 13,5×19,5 սմ. մեծություն և բաղկացած է ԺԲ+156 էջերից։

«Շաւիղ լեզուագիտութեանն» ձեռնարկի վերջում դրված է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը հայերեն և ռուսերեն լեզուներով. թարգմանիչը գարձյալ հանգուցյալ Գրիգոր Խալդարյանն էր. դրանով նա նպատակ է ունեցել «առ ի տալ առիթ սիրոյ՝ երկոցունց մանկանց եկեղեցւոյն»։

Պետերբուրգում Խալդարյանի ապարանից լույս տեսած ամենավերջին գիրքը՝ Ներսես Շնորհալու «Ընդհանրական»ն է, և որը այդ տպարանի լավագույն հրատարակություններից մեկն է։ Գրքի տիտղոսաթերթում նշված է. «Առաքելաշաւիղ առաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ իշխանազնեայ Տեառն Յովսէփայ Սրբազնագունեղ Արքեպիսկոպոսի, որոյ արդեամբն իսկ տպեցաւ՝ ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ՝ սիրելի Ազգին իւրոյ»։

Արղությյան արքեպիսկոպոսը մեծ նվիրվածությամբ է մասնակցել Ներսես Շնորհալու սուրբ գրքի հրատարակման աշխատանքներին, քանի որ այդ գիրքը առաջին անգամն էր, որ լույս էր տեսնելու և մատչելի էր դառնալու ընթերցող հասարակությանը. այդ մի մեծ նվաճում էր հայ տպագրության համար։ Այս կապակցությամբ 1790 թվականին Նորնախիջևանում հրատարակված «Ողբք և ճառաշանք» գրքույկի հիշատակարանում ասված է. «Որպիսի է լուսաստիւն այն սքանչելին մատեան Սրբոյ Հօրն մերոյ Ներսիսի Շնորհալւոյ՝ տիեզերահռչակ հայրապետի՝ Ընդհանրական անուանեալ, որ յետ վեց հարիւր քսան և մի ամ՝ ընդ գրուանաւ մնալոյն՝ լուսատու դամբարանն այնմիկ, հազիւ թէ՝ ի ձեռն տյն ազգաշահ գործոյս՝ ի լոյս ընծայեցաւ տպագրութեամբ բարձրացեալ ի յաշտանակ»։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտպանությանը նվիրված Ներսես Շնորհալու այդ անմահ գրքի հրատարակումը մեծ նշանակություն ուներ առանձնապես այդ ժամանակի համար։ Սփյուռքում ցրված և օտար եկեղեցիների կողմից հաճախ հերձված անվանված հայորդիների համար այդ մի նոր ուժեղ զենք էր, որով նրանք պաշտպան պետք է կանգնեին իրենց հարազատ Մայր Եկեղեցու կողմից դարերից ի վեր սրբազործված տուրք խորհուրդներին։

Արղությանը իր մի շարք նամակներով թելադրանքներ էր անում Թադեոս վարդապետին «Ընդհանրականի» տպագրելի թղթի, կիլիշների, հիշատակարանի բովանդակության և տեխնիկական ամենամանր հարցերի մասին. նա մի տեղ գրում է. «Շնորհալւոյ երեսն և թաղն ուղղել տացես և յառաջի նորա պատշաճաւոր ոտանաւոր դնիցես և այլն։ Թեև «Ընդհանրականի» տիտղոսաթերթի վրա տպագրման որպես թվական հիշատակված է 1788 թվականի մայիսի 1-ը, բայց իրականում նա լույս է տեսնում 1789 թվականին։ Այդ մասին է վկայում Արղությյան արքեպիսկոպոսի կողմից 1789 թվականի ապրիլի 3-ին Թադեոս վարդապետին գրած մի նամակը, որտեղ հետագա տողերով ողջունում է նրա լույս ընծայումը. «Ընկալայ զփափաքելին իմ և զհարկատրն ազգին մերոյ և զպտուղ աշխատանաց քոց զմէկ հատ Ընդհանրականն, լիալի սրտիւ նախ գոհացայ զողորմութեանցն Աստուծոյ, որ արժանացոյց մեզ տեսանել զաւարտ նորին, և ապա շնորհակալեցայ զանդուլ աշխատութենէ քումմէ և զջանից և ամենայն ինչ ճարտարամտութեամբ զարդարելոյն. Փրկիչն մեր վարձատրեալ զքեզ շնորհիւ իւրով փայլեցուցէ զքեզ... քաղցր է ինձ դրութիւն նորին և կազմն»[1]։

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2949, թ. 119ա։

«Ընդհանրականի սկզբում դրված է Հովսեփ արքեպիսկոպոսի մի ընդարձակ առաջաբանը։ Գրքում կան մի շարք հայող նկարներ Ներսես Շնորհալու (2 հատ), Մեսրոպ Մաշտոցի, Տիրամոր և Հիսուսի, «նշանք թագաւորացն Հայոց» և Հովսեփ արքեպիսկոպոսի կնիքը։ Գիրքը պատմական է նաև Ներսես Լամբրոնացու «Դրուատ պատմագրաբար ի յաստուածահրաւէր փոխումն՝ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսէսի Կայեցւոյ» վերնագրով գրությունը։ Հիշատակարանում տեղեկություններ կան Գրիգոր Խալդարյանի տպարանի վերջին անցքերի, տպարանի ունեցած պարտքի, Արղությանի շինարարությունների, ազգատոհմի և զինադրոշմի, Թադեոս վարդապետի գործունեության մասին։ Հիշատակարանի վերջում խոսվում է նաև «լուսահոգի Խալդարեան պարոն Գրիգորի՝ զհոգեծին զաւակն և զձեռնատուն հարազատն» Մկրտում Աստվածատրյանի մասին, որն իր պատանեկության տարիներից սկսած մեծ աշխատանք է տարել տպարանում՝ «թէ՛ ի ձուլելն, թէ՛ ի հարթելն, թէ՛ ի շարելն և թէ՛ ի ցրուելն զկապարեայ տառսն»։ Գիրքն ունի 17,5×23,5 սմ. մեծություն և բաղկացած է ԺԶ—336 էջերից։

Պետերբուրգում հրատարակված վերոհիշյալ երեք գրքերի վրա էլ, ի պատիվ տպարանի բազմաշխատ հիմնադրի, հիշել են նրա անունը այսպես՝ «ի տպարանի Խալդարեան Եոզամալի որդի ի Քրիստոս հանգուցեալ Գրիգորիս»։

1790 թվականի հունվարի 4-ին Տեր Ստեփանին[1] իր գրած նամակում Արղությանը ավելում է, որ կարողացել է ազատել տպարանը։ Նա գրում է. «...ելեալ գնացի ի յԱշտարխան և ի Ղզլար, անդ՝ առ մերձաւորս բանիւք և առ հեռաւորս գրով օգնութիւն խնդրեցի, հազիւ թէ Դճ (400) թուման ժողովեցաւ։ Գճ (300) թուման ևս ի տանէս վաճառեցի ինչ ինչ։ Զերեք հարիւրն տուի, Թճ (900) թումանին սանագ և դամին տուեալ ազատեցի տպարանն»։

Արղությանի մի քանի այլ նամակներից ևս երևում է, որ նա, իրոք, գնացել է Աստրախան և Ղզլար, դիմել է տեղի հարուստներին, դրամ է հավաքել, երեք հարյուր թուման ևս ինքն է դրել, վճարել պարտքը և ազատել տպարանը։ Իսկ այս ամենը վկայում է այն մասին, որ հանձին Արղությանի մենք ունենք լուսամիտ մի հոգևորական, որը քաջ գիտակցելով տպագրության նշանակությունը հայ ժողովրդի զարգացման գործում, արել է կարելին՝ թույլ չտալու Ռուսաստանում ստեղծված հայկական տպագրության դործը խափանելու։ Ահա այս շրջանին է, որ Արղությանը տպարանը տեղափոխել է տալիս Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է պարզաբանել մի հարց ևս— Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը ի՞նչ նպատակով է տպարանը տեղափոխում Նոր-Նախիջևան և ի՞նչ նոր հեռանկարներ էր կապում նա այդ տպարանի հետ։

Այս հարցը պարզաբանելու համար անհրաժեշտ է մի հետաքրքիր ակնարկ գցել իր ժամանակի հայկական կյանքի և քաղաքական անցուդարձի վրա։

1. Ստեփան քահանան կոստանդնուպոլսեցի էր։ Նա Ղրիմի հայ գաղթականների հետ եկել էր Նոր-Նախիջևան և այստեղից, Հովսեփ արքեպիսկոպոսի կարգադրությամբ, որպես նվիրակ ուղարկվել էր Հնդկաստան։

2. «Արարատ» տարեգիր, Վաղարշապատ, 1886 թ., էջ 360։

(Շարունակելի)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության թանգարանը իբրև նվեր ստացավ Կիլիկիայի հանգուցյալ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի արխիվից 3 ոսկյա, 6 արծաթյա և 1 պղնձյա դրամներ։

Ոսկյա դրամներից մեկը կտրված է Մակեդոնիայում (336—318 թ. թ. մեր թվագրությունից առաջ), Ալեքսանդր Մակեդոնացու անունով, մյուսը հռոմեական է և պատկանում է կայսր Վեսպասյանին (69—79 թ. թ. մ. թ.), իսկ երրորդը՝ միջնադարյան մուսուլմանական դինար է՝ կտրված Խորասանի նշանավոր քաղաքում Մազանդարանի շահ Ռուստեմ Իբն-Ալիի կողմից, հավանաբար հիջրայի 551—552 թ. թ., որը համապատասխանում է մեր թվականության 1157—1158 թվականներին։

Պետք է նշել, որ Մազանդարանի շահերից, ընդհանրապես, մեզ հասած դրամները խիստ հազվադեպ են, իսկ վերոհիշյալ դինարը գոյություն ունեցող հատ ու կենտ օրինակների շարքում մի բարդությունն նոր տեսակի է։

Արծաթ դրամներից մեկը պատկանում է Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոս Անտոնինոսին և կրում է իր վրա նրա ամբենիկոսը մականունը (161—189 թ. թ.)։ Մնացած արծաթ դրամներից չորսը պատկանում են Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն երկրորդին (1198—1219 թ. թ.), ըստ որում, դրանցից մեկը խիստ հազվագյուտ է։

Ուշագրավ է նաև Տրապիզոնի կայսր Ալեքսիոս երկրորդի (1297—1330 թ. թ.) արծաթյա դրամը, որպես եզակի օրինակ մինչև այժմ մեզ հասած նրա դրամների մեջ։

Պղնձյա դրամը բյուզանդական է, դրժրախտաբար մաշված, և վերաբերում է մեր թվականության 7-րդ դարի առաջին կեսին. հավանաբար այն պատկանում է Հերակլիոս կայսեր և նրա որդի Հերակլիոս Կոստանդինի իշխանության տարիներին։

Վերոհիշյալ դրամների մեծ մասը պահպանված է շատ լավ վիճակում։

Հազվագյուտ դրամների այս փոքր հավաքածուն նշանակալից ավանդ է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանի դրամագիտական ժողովածուի համար, ուր այդ դրամներից մի քանիսը բացակայում էին։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՆՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ.— Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը, Սովետական Միության հետ բարեկամական կապերի Ռումինական ընկերության միջոցով, ստացել է հայկական հին ձեռագրերի մի հարուստ ժողովածու՝ թվով 42 ձեռագիր։

Այդ ձեռագրերը Սովետական Հայաստանի Պետական մատենադարանին իբրև նվեր ուղարկել են Ռումինիայի հայերը։ Հայրենասիրական այդ գեղեցիկ քայլի նախաձեռնողներից մեկը հանդիսացել է գերաշնորհ Վազգեն եպիսկոպոս Պաշյանը։

Ստացված գրքերի մեջ կան միջնադարյան շատ արժեքավոր ձեռագրեր, որոնք պատկանում են 13—14-րդ դարերին։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 14-րդ դարի մագաղաթյա մի ձեռագիր, որը նկարազարդված է միջնադարյան հռչակավոր հայ մանրանկարիչ Սարգիս Պիծակի կողմից։

Շատ ձեռագրեր ունեն որոշ հիշատակարաններ կամ հիշատակագրություններ, որոնք արված են արտագրողների և գրքերի տերերի կողմից։ Այդ հիշատակարաններն ու հիշատակագրությունները պարունակում են արժեքավոր տվյալներ Մոլդավիայի, Ռումինիայի, Լեհաստանի, Ուկրաինայի միջնադարյան հայ գաղութների վերաբերյալ։

Ներկայումս Մատենադարանի աշխատողները ուսումնասիրում են ստացված ձեռագրերը՝ նպատակ ունենալով դրանք դարձնել գիտական հասարակայնության սեփականությունը։

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐՈՒՄ.— Երևանի մոտ գտնվող Կարմիր բլուր վայրում ավարտվեցին ուրարտական ամրոցի պեղումների ընթացիկ տարվա աշխատանքները։ Պեղումները կատարում էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Լենինգրադի Պետական էրմիտաժի միացյալ արշավախումբը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ։

Հայտնաբերված են 9 նոր շենքեր, մեծ քանակությամբ տնային գործածության զանազան իրեր, ձիասարք, զարդարանք և այլն։ Պեղումները կատարվում էին ինչպես միջնարերդում, այնպես էլ նրա շրջակայքում գտնվող քաղաքի ավերակներում։ Հայտնաբերված նյութերը զգալի լափով հարստացնում են ուրարտական այդ հին բնակավայրի մարդկանց կենցաղի և ամրոցի կործանման վերաբերյալ եղած տեղեկությունները։

Միաժամանակ կատարվում էին Կարմիր բլուրից ոչ հեռու գտնվող Արին-բերդի պեղումները։ Այստեղ հայտնաբերված են հին տաճարի ավերակներ, որոնք հետաքրքիր նյութ կարող են ծառայել ուրարտական շրջանի ճարտարապետության ուսումնասիրության համար։

Արշավախմբի այս տարվա աշխատանքի արդյունքները հնարավորություն կտան ավելի խորը և մանրամասն ուսումնասիրելու Սովետական Միության սահմաններում գտնվող հնագույն պետություններից մեկի՝ Ուրարտական պետության հարուստ կուլտուրան։

ԸՆԴԱՐՁԱԿՎՈՒՄ Է ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՃԱՆՃԸ.— Ցկա Հայաստանում թեկուզ ամենափոքր գյուղ, որտեղ գրադարան չլինի։ Շատ գյուղեր ունեն 2—3 գրադարան (գյուղական, ակումբային, դպրոցական)։ Վերջին 5—6 տարում Կուլտուրայի մինիստրությունը գյուղերում և մեքենա-տրակտորային կայաններում բացել է ավելի քան 40 նոր գրադարան։

Այժմ Հայաստանի գյուղերում և քաղաքներում կա 2780 գրադարան, որոնք ունեն ավելի քան 10.000.000 օրինակ գիրք։

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.— Հայաստանի աշխատավորները յերմորեն նշեցին Ռումինիայի ազատագրման 10-րդ տարեդարձը։ Օգոստոսի 23-ին երևանում, Հայֆիլհարմոնիայի ամառային թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, որը կազմակերպել էին Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը, Հայաստանի պրոֆմիությունների խորհուրդը և Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեն։ Թատրոնի դահլիճն էին հավաքվել մեծ թվով աշխատավորներ, հասարակական գործիչներ, արվեստի և գիտության աշխատողներ, կառավարության անդամներ։

Հակիրճ խոսքով հանդիսավոր երեկոն բացեց Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության նախագահ դրող Գ. Սեմենը։ Նվագախումբը կատարեց ՍՍՌՄ և Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Պետական հիմները։

Այնուհետև լուսավորության մինիստր Ս. Միքայելյանը հանդես եկավ «Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի նվաճումները 10 տարում» զեկուցումով։

Վերջում տեղի ունեցավ համերգ։

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ.— Այս տարի Լենինականում կառուցվում են մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկություններ, ընդարձակվում հները։ Վերջերս Տեքստիլ կոմբինատում օգտագործման հանձնվեց գործվածքները ներկող ու նախշող գործարանը։ Դա մի խոշոր ձեռնարկություն է, հագեցված հիանալի կատարելագործված մեքենաներով։ Այդ գործարանի թողարկումով Լենինականի Տեքստիլ կոմբինատը հնարավորություն ունի բաց թողնելու զանազան տեսակի գուլպագույն, ինչպես և մաքուր սպիտակ գործվածքներ, և ոչ թե միայն բյազ՝ ինչպես որ թողարկում էր մինչև այժմ։

Լայն թափ է ստացել քաղաքում բնակելի և հասարակական շենքերի շինարարությունը։ Գրեթե բոլոր

ձեռնարկություններն այս տարի իրենց աշխատողների համար կառուցում են բնակելի խոշոր տներ։ Հեծանիվի, Գուպպա-տրիկոտաժի, Մեխանիկական գործարանների բնակելի շենքերը բաղկացած կլինեն 30—40 բնակարաններից։ Բացի այդ, մինչև այս տարվա վերջը կավարտվի 200 անհատական բնակելի տների շինարարությունը։

Քաղաքը զարդարվում է գեղեցիկ հասարակական շենքերով։ Նոր ուսումնական տարվա նախաշեմին մանուկներն ստացան դպրոցական մի նոր, հիանալի շենք։ Շուտով կավարտվի նոր մանկապարտեզի կառուցումը։ Քաղաքի կենտրոնական մասերից մեկում, նոր բացված հրապարակում վեր են խոյացել նորակառույց վարչական շենքեր։ Հաջողությամբ ընթանում է ռեմիվերսալ մեծ խանութի շենքի շինարարությունը, որի համար հատկացված է 3.000.000 ռուբլի։

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ.— Ոսկերչական արվեստը վաղուց ի վեր հայտնի է եղել Հայաստանում։ Այն ավելի լայն զարգացում է ստացել ներկայումս։ Արհեստագործական մի շարք արտելներից բացի, Երևանում ստեղծված է ոսկերչական հատուկ գործարան, որտեղ պատրաստվում են զանազան տեսակի իրեր ու արդուզարդեր ոսկուց, արծաթից։ Քանի-քարձեր քարերից։ Այստեղ աշխատում են հմուտ ոսկերիչ-վարպետներ։ Գործարանի արտադրանքը բաշխվեն սպառվում է ո՛չ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության շատ վայրերում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում և այլուր։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Օգոստոսի 1-ից Հայաստանի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվեցին 1954—1955 ուսումնական տարվա ընդունելության քննությունները։ Ինչպես միշտ, այս տարի ևս չափազանց մեծ էր տարբեր քննկացողների թիվը։

Այսպես, օրինակ, Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը պետք է ընդուներ 550 ուսանող, սակայն ստացված էր 1842 դիմում։ Ինստիտուտի հետագա քաջանմանության ընդունվելու են 250 ուսանողներ։ Գյուղատնտեսական ինստիտուտի առաջին կուրսերում նախատեսված 270 տեղի համար ստացվել էին երեք անգամ ավելի դիմումներ։ Բժշկական ինստիտուտում 250 տեղի համար ստացվել էր մոտ 1.000 դիմում։ Նոր ուսումնական տարվանից Բժշկական ինստիտուտում բացվել են երկու նոր՝ Բուժական և Սանիտարական-հիգիենիկ ֆակուլտետներ։ Երևանի և Լենինականի մանկավարժական լրիվ բարձրագույն ուսումնական հաստատություններն են ընդունվել 725 նոր ուսանողներ, մինչդեռ դիմում տվողների թիվը հասնում էր մոտ 3.600-ի։

ԳԵՏԱԿԱՆ ԵՐԳՇՏԻԿ ԽՄԲԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ.— Երկու շաբաթից ավելի Իջևանի և Եմշանի շրջանների գյուղերում շրջագայություն էին կատարում Հայաստանի պետական երգեցիկ խումբը և Ալեքսանդր Սպենդիարյանի անվան պետական կվարտետը։ Գեղարվեստական այդ երկու խմբերը տվեցին մի շարք համերգներ գյուղական աշխատավորների համար։ Համերգների ծրագիրը կազմված էր գլխավորապես Կոմիտասի, Կարա-Մուրզայի, ինչպես նաև ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից։

ԷԴԿԱՐ ԵԱՀԻՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայաստանի Պետական պատկերասրահում բացվել է հայ նշանավոր նկարիչ Էդգար Եահինի գործերի ցուցահանդես։ Ցուցահանդեսում ներկայացված է հեղինակի գործերից 165 նմուշ՝ որոնց մեծ մասը օֆորտներ են։

Էդգար Եահինի գործերի առաջին ցուցահանդեսը Երևանում կազմակերպվել էր 1936 թվականին։ Այն ժամանակից ի վեր նրա աշխատությունների ժողովածուն զգալի չափով հարստացվել է։ Երևանում եղած գործերի մեծ մասը հանգուցյալ նկարիչը ուղարկել էր Պետական պատկերասրահին որպես նվեր։

Էդգար Եահինը մահացավ 1947 թվականին Փարիզում, թողնելով նկարչական մեծ ժառանգություն։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԵՐ.— Ընթացիկ 1954 թվականին Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները ավել են 38 տոկոսով ավելի շրջանավարտներ, քան անցյալ 1953 թվականին։ Այդ հաստատություններն ավարտել են 1759 ուսուցիչներ, 361 ճարտարագետներ (ինժեներներ), 164 բժիշկներ, 202 գյուղատնտեսներ, 185 անասնաբույժ-անասնաբուժներ և այլն։

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական (գեոլոգիական) ինստիտուտը մշակում է մի շարք հրատապ գիտական հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար։

Ներկայումս մի շարք շրջաններում աշխատում են այդ ինստիտուտի հատուկ արշավախմբերը, որոնց խնդիրն է ուսումնասիրել Հայաստանի հողերի երկրաբանական կառուցվածքը, լեռնային շրջանների շրջելի պայմանները, շինարարական քարերի գոյացման ու դրանց տեխնիկական հատկությունները և այլն։ Արշավախմբերի հավաքած նյութերը հիմք կծառայեն ժողովրդական տնտեսության զարգացման հետ կապված հարցերը մշակելու։

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՄԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.— Հայաստանի գունագեղ, բազմագույն մարմարները լայն սպառում ունեն ո՛չ միայն ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Ամեն տարի Երևանի մարմարի գործարանը Սովետական Միության, ինչպես և Հայաստանի խոշոր նորակառույցների հաշվեհով ուղարկում է մեծ քանակությամբ մարմարի սալիկներ, որոնցով երեսապատվում են նորակառույց շենքերի ներսի մասերը։

Ներկայումս գործարանին պատկանող մարմարի հանքերում արդյունաբերական բոլոր տեսակի աշխա-

տանքները մեքենայացված են։ Վերակառուցվում և ընդարձակվում է նաև գործարանը։ Տեղադրվում են նոր, ավելի կատարելագործված մեքենաներ և սարքավորումներ, որոնք անհամեմատ կարագացնեն մարմարի մշակման գործը։ Վերակառուցումից հետո, որը կավարտվի մինչև ընթացիկ տարվա վերջը, գործարանը կտա 3,5 անգամ ավելի արտադրանք, քան տալիս է հիմա։

ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Տարեցտարի Երևանի արդյունաբերությունը հարստանում է նոր խոշոր ձեռնարկություններով։ Ներկայումս մայրաքաղաքի Միկոյանի շրջանում կառուցվում է կաթի վերամշակման մեծ գործարան, որը օրական կարող է վերամշակել մինչև 50 տոննա կաթ։ Նույն այդ շրջանում կառուցվում է հացի նոր, մեքենայացված գործարան։

Առանձին կարևորություն է ներկայացնում կերամիկ խողովակների գործարանը, որի կառուցումը մոտենում է իր ավարտին։ Այն հագեցվում է նորագույն սարքավորումներով։ Ամբողջ աշխատանքը մեքենայացվելու է։ Խողովակների թրծումը կատարվելու է գազի միջոցով։ Իրին հումք ծառայելու է Դսեղ գյուղի մոտ գտնվող կավահողը։ Գործարանը, որը նախատեսված է շահագործման հանձնել մինչև 1954 թվականի վերջը, տարեկան կարող է տալ 7.500 տոննա խողովակներ, որոնք գործածվելու են կոյուղիների և ջրմուղների կառուցման համար։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.— Այս տարի Հայաստանում բնակարանային շինարարությունն ավելի լայն թափով է ընթանում, քան անցյալ տարի։ Երևանում ներկայումս կառուցվում է ավելի քան 100 խոշոր բնակելի շենք, որոնց զգալի մասը կավարտվի ընթացիկ տարում։ Նոր բացված Կիևյան փողոցի վրա քաղաքային Սովետը կառուցում է 4 խոշոր հինգհարկանի շենքեր՝ ավելի քան 250 բնակարանով։ Վերջերս ավարտվեց Տերյան, Նալբանդյան, Կալինին, Բաղրամյան և այլ փողոցներում կառուցվող բնակելի շենքերի շինարարությունը։ Այս տարվա անցած 8 ամսում Երևանում օգտագործման հանձնված բնակելի տարածության չափը 50 տոկոսով գերազանցում է անցյալ տարվա նույն ժամանակաշրջանում օգտագործման հանձնված տարածությունը։

ԸՆԴԱՐՁԱԿՎՈՒՄ Է ՌՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԸ.— Տարեցտարի ընդարձակվում է Երևանի բուժական հաստատությունների ցանցը։ Ներկայումս երկթուղային աշխատողների համար կառուցվում է նոր հիվանդանոց և բուժարան։ Ավարտվում են քաղաքի Միկոյանի շրջանի խոշոր հիվանդանոցի շինարարական աշխատանքները։ Ընդարձակվում են քաղաքի մյուս շրջանների հիվանդանոցները և բուժարանները։

ՔԱՐ ՄՇԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ.— Հայաստանը հարուստ է շինարարական բազմապիսի քարերով։ Դրանց արդյունահանման հետագա զարգացումը, ինչպես և վերամշակման գործի մեքենայացման հարցը մասնագետների մշտական հոգատարության առարկան է։ Այժմ Հայաստանում դժվար է գտնել մի կառուցում, որտեղ չգործածվեն տուֆ տաշող և հղկող մեքենաներ։ Այդ մեքենաները, որոնք պատրաստվում են Լենինականի մեխանիկական գործարանում, հնարել են դյուխավորապես հայ ճարտարագետները։

Հատուկ ուշադրություն է նվիրվում շինարարական քարերի արդյունահանման գործի մեքենայացմանը։ Արթիկի և մյուս վայրերի քարահանքերում վերջին տարիներս գործի են դրվել քար կտրող, հող մաքրող, պատրաստի արտադրանքը բարձող շատ մեքենաներ։ Սակայն դրանք չեն բավարարում՝ քարի արդյունահանման գործը յայնորեն ծավալելու համար։

Արթիկտուֆի քարահանքերում, որոնք խոշորագույնն են ռեսպուբլիկայում, գործում են մեքենաներ, որոնք կարում են խոշոր զանգվածի քարեր՝ մեկ և կես մետր տրամագծով և 8—15 մետր երկարությամբ։ Այդպիսի զանգվածները հարկ եղած չափերի վերածելու համար պահանջվում է մեծ թվով աշխատող ձեռքեր և ժամանակ։ Դժվարին աշխատանքը։ Ներկայումս Լենինականի գործարանում պատրաստվում է ճարտարագետների կողմից հնարած մի նոր մեքենա, որով հատվելու են բարի հիշյալ խոշոր զանգվածները։ Նոր մեքենան կարող է հատել և միաժամանակ տաշել անհրաժեշտ չափերի քարեր, որոնց անմիջականորեն կարելի կլինի գործածել շինարարության մեջ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ.— 1954—1955 թվականների ուսումնական տարվա սկզբին Երևանում օգտագործման հանձնվեցին դպրոցական 5 նոր շենքեր։ Բոլոր շենքերն էլ 3—4 հարկանի են, կառուցված կեղեցիկ գույնզգույն քարերով, ունեն բոլոր հարմարություններ։ Ներկայումս մայրաքաղաքում կառուցվում են դպրոցական ևս 8 շենքեր, որոնց պատրաստ կլինեն գալիք 1955 թվականին։

Այս տարի ռեսպուբլիկայի գյուղերում, քաղաքներում և շրջանային կենտրոններում կառուցվում են 30-ից ավելի դպրոցական շենքեր, որոնց մի մասը օգտագործման հանձնվեց նոր ուսումնական տարվա նախօրյակին։

ԱՆՋՐԵՎԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ.— Այս ամառ Հայաստանի մի շարք շրջաններում գործածվում էին անձրևացող մեքենաներ։ Այդ մեքենաները հանդիսանում են Սովետական Միության գյուղատնտեսական մեքենաշինության վերջին նվաճումներից մեկը։ Դրանք գործ են ածվում հարկ եղած դեպքում ցանված դաշտերը ջրելու համար։

Հայաստանում այդ մեքենաներից ստացվել էին մի քանի տասնյակ հատ և բաշխվել այն շրջաններին, որոնց ոռոգման ջրի պաշարների տեսակետից ավելի աղքատ են։ Նոր Բայազետի, Բասարգեչարի, Թալինի և Կոտայքի շրջանների գյուղերում հիշյալ մեքենաները գործածվում էին քանջարաճոնցները, ծխախոտի և մյուս կուլտուրաների առանձին քանքատարածու-

թյունները շրջու համար։ Կատարված փորձնական շրջանները ավելցին դրական արդյունքներ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Սույն թվականի օգոստոս ամսվա ընթացքում Հայաստան են այցելել արտասահմանյան մի շարք պատվիրակություններ, հասարակական գործիչներ, կուլտուրայի և արվեստի գործիչներ։ Դրանց թվում են եղել Սովետական Միության հետ կուլտուրական կապի Անգլիական ընկերության պատվիրակությունը՝ նոտինկհամի համալսարանի պրոֆեսոր Վալտեր Սպրոտտի գլխավորությամբ, ֆրանսիական բանվորների պատվիրակությունը, շվեդական կուլտուրայի և արվեստի գործիչների պատվիրակությունը, այրանական կանանց պատվիրակությունը, հընդկական հայտնի ճարտարագետ դոկտոր Գանգատ Ռոյ Նանգեյան, Ֆինլանդիայի գրողների պատվիրակությունը և այլն։

Բոլոր պատվիրակություններին, ինչպես և առանձին հյուրերին լայն հնարավորություն է տրվել ծանոթանալու ռեսպուբլիկայի կուլտուրական և հասարակական կյանքին, արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը։ Նրանք այցելել են արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, ուսումնական և կուլտուրական հաստատությունները, շրջել են գյուղերը, դիտել պատմական հուշարձանները, ծանոթացել Երևանի շինարարությանը։ Ամենուրեք հյուրերն արժանացել են ինչպես պետական և հասարակական, այնպես էլ աշխատավորների ջերմ ընդունելությանը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԷՋՄԻԱԾՆԵՆ

Երեքշաբթի, հունիսի 22-ին, Պան Ամերիկը էրուելթով Նյու-Յորք Այդլվայլդի օդանավակայանը հասավ գերաշնորհ Սիոն եպիսկոպոս՝ հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի։ Սիոն եպիսկոպոս, ինչպես նաև ուրիշ եպիսկոպոսներ և առաջնորդներ, հրավիրված էին Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե, անմիջապես մեկնիլ Հայաստան՝ մասնակցելու համար վախճանյալ Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ. Կաթողիկոսի օծումի և թաղման վեհաշուք արարողությանց։

Հարգելի հյուրը առաջնորդվեցավ տիկին Տիրուհի Սվաճյանի բնակարանը, Բրուքլին։

Վախճանյալ Վեհափառ Հայրապետի օծման և թաղման տխուր արարողությանց մանրամասնությունները տալե հետ, սրբազանը, ընդառաջ երթալով այս տողերը գրողին փափագին, տվավ հետևյալ տեղեկությունները և իր տպավորությունները Հայաստանեն։

Սրբազանը մայիս 22-ին Մոսկվա ժամանած է և հոն հանդիպած է Մամբրե և Տիրան արքեպիսկոպոսներուն, ինչպես նաև Խաղ և Դերենիկ սրբազաններուն և Կիլիկիո և Երուսաղեմի միաբանությանց ուրիշ ներկայացուցիչներուն։

Մոսկվայեն մինչև Երևան երթուդարձի ծախքերը հոգացված են Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե։ Հայաստանի կառավարությունը մասնավոր օդանավ մը ղրկած է Հայաստանեն հայ օդաչուներով, որպեսզի ներկայացուցիչները Երևան տանին։ Կիրակի մայիս 22-ին Երևան հասնելեն հետ, պատգամավորները անմիջապես մեկնած են Էջմիածին և բոլորված Վեհափառի դագաղին շուրջ, խոր լռության մեջ, «Հոգւոցս» արտասանեցին։ Հինգշաբթի, հունիս 27-ին, կատարվեցավ Վեհափառ Հայրապետի թաղման արարողությունը, որ տեվեց առավոտյան ժամը 11-են մինչև կեսօրեն հետ ժամը 4.30-ին։ Կմասնակցեին 9 եպիսկոպոսներ, 8 վարդապետներ, 10 սարկավագներ։ Արարողությունը ձայնասփյուռով տարածվեցավ. ներկա էին հազարավոր հավատացյալներ, որոնք արդեն օրերով կուգային Հայաստանի ամեն կողմերեն, իրենց վերջին հարգանքը մատուցելու իրենց սիրեցյալ Հայրապետին։

Գերաշնորհ Սիոն եպիսկոպոս տվավ նաև հետևյալ շահեկան տեղեկությունները Հայաստանի մասին։

Իր տարվան մեջ, երբ ինքը առաջին անգամ այցելած էր Հայաստան, Երևանի բնակչությունը գրեթե կրկնապատկված է։ Քաղաքը վայելիորեն գեղացկացած է։ Ամբողջ Սովետական Միության մեջ միակ քաղաքն է, որ լոկ հայկական ճարտարապետությամբ շինված է և ինքնատիպ է։ Վարդագույն տուֆ քարը, իր գեղեցիկ գույնով ավելի փայլ կուտա շենքերուն. լայն պողոտաներ բացված են ամեն տեղ. հին քաղաքը գրեթե ամբողջությամբ նորոգված է։ Եկեղեցիները բեցուն են հավատացյալներով. ամեն կողմե քահանաներ կուգեն. Հայաստանի կառավարությունը կվերանորոգե ամբողջ Էջմիածնի վանքը. ան պիտի վերանորոգե նաև Մայր Տաճարը. որ կես միլիոն դոլարով հազիվ կրնա նորոգվիլ։

Սիոն սրբազան իր հետ բերած է տոպրակ մը հող Էջմիածնի պարտեզեն, զայն Հարավային Ամերիկա տանելու համար։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

(«ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 1 հուլիսի 1954 թ., № 153)

ՊԱՏՍՊԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

Հարավային Ամերիկայի Կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Սիոն եպիսկոպոս Մանուկյան, որ Էջմիածին գացած էր ներկա ըլլալու վախճանեալ Գեորգ Զ. Հայրապետի թաղումին և իր պաշտոնատեղին վերադարձը կկատարե Միացյալ Նահանգներու ճամբով, հունիս 27-ի կիրակին պատարագեց և քարոզեց Ս. Խաչ եկեղեցվո մեջ, ներկայությամբ խուռն բազմության մը. Սրբազանը հուզիչ կերպով նկարագրեց Վեհափառ Հայրապետի Վեհաշուք հուղարկավորությունը, հայտնեց թե՝ իրապես սուգի մեջ է թե՝ Հայրենիքի և թե՝ Սփյուռքի հայությունը։ Ապա պատմականը ըրավ Հայրենիքի և Ս. Էջմիածնի, ու շեշտեց անոնց հավատարիմ մնալու մեր սրբազան պարտքը ու մեր հավատքը անխախտ պահելու անհրաժեշտությունը։ Սիոն սրբազան հիացումով խոսեցավ Հայաստանի ժողովուրդին հառաջդիմության և բարգավաճումին մասին, և հայտնեց թե՝ ներգաղթողները կարևոր դեր մը ունեցած են Հայաստանի վերելքին մեջ, ու հավաստեց թե՝ ներգաղթը կանգ չէ առած, այլ կսպասվի քաղաքական նպաստավոր պայմաններու։ Հորդորեց, որ մեր հույսն ու հավատքը չտկարացնենք հանդեպ Հայրենիքին, Հայաստանյայց եկեղեցվո և հայ ժողովուրդին։

Ուրախալի էր լսել, որ ներկաներ հիացումով կարտահայտվեին Սիոն սրբազանի քարոզին և իր անձին շուրջ՝ որպես Ս. Էջմիածնի հավատարիմ եղեղեցական մը։

Սրբազանը նույն օրը կեսօրեն ետք խոսած է նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո դաշտահանդեսին մեջ, ուր ևս հասարակությունը խանդավառած է Հայաստանեն և Ս. Էջմիածնեն բերած հուսատու լուրերով։

ԼՐԱՏՈՒ
(«ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 8 հուլիսի 1954 թ., № 158)

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԽԻՂՃԸ ՀԱՆԴՈՒՐՏ Է, ԹԵԵՎ ՎԻՃՏԸ ՍՆԴՈՒՐՄԱՆԵԼԻ

Իստամբուլի «Նոր լուր» թերթը, «Գերագույն Հոգևոր Խորհուրդին խիղճը հանդարտ է հիմա կատարելապես, թեև իր վիշտը անդարմանելի է Վեհափառին վախճանման առթիվ» վերնագիրը կրող խմբագրականով մը (հունիս 1, 1954) հետևյալ արդարացի գնահատականը կընե.

«Հիմա, որ Ներսես Աշտարակեցիի և Խրիմյան Հայրիկի դամբարաններու կողքին, Ս. Էջմիածնա Մայր Տաճարի բակին մեջ, կհանգչի հոգնատանջ մարմինը Գեորգ Զ. մեծագործ Կաթողիկոսին, օծման և հուղարկավորության փառաշուք հանդիսությենե մը վերջ, որուն նմանը դուն ուրեք տեսնված է մեր ազգին պատմության մեջ, կխորհինք թե՝ ազգն համարեն վճարելի տուրք մը ունի Գերագույն Հոգևոր Խորհուրդին։

Այս տուրքը համազգային երախտագիտության տուրք մրն է Մայր Աթոռի պահապան հրեշտակները հանդիսացող Գերագույն Հոգևոր Խորհուրդի այն բոլոր եկեղեցական և աշխարհական անդամներուն, որոնք անմոռանալի Վեհափառին հիշատակը ըստ արժանվույն պանծացնելու համար, հաջողեցան ի մի համախմբել Սփյուռքի հայությունը, այս վերջնույն պատգամավորները բոլորել տալով Անոր նվիրական դագաղին շուրջ և կազմակերպել այնպիսի հանդիսություն մը, որ եթե իրենց վիշտը անդարմանելի է սիրեցյալ Վեհի վախճանման առթիվ, կատարելապես հանդարտ է իրենց խիղճը, ըստ արժանվույն գլուխ հանած ըլլալնուն համար իրենց տրդիական պարտականությունը։

Արդարև, Վեհին վախճանման առաջին րոպեեն մինչև նորին Ս. Օծության թաղումը՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդին հուզումնալից աշխատանքը հայության բոլոր սրտերուն մեջ վերապրեցնելու հայրենանվեր և ազգընտիր Հայրապետին անմահ հիշատակը, Արարատյան Մայր Աթոռեն մինչև ի սփյուռս աշխարհի, դյուրավ արդյունավորելի գործ մը չէր կրնար ըլլալ, տրված ըլլալով համաշխարհային պայմանները, և այսօր, ի պատիվ իրեն, կրնանք ըսել թե՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը կրնա պարծիլ իր տենդահույզ աշխատանքին արդյունավորումը տեսնելով, ապահոված ըլլալուն համար համազգային մասնակցությունը Վեհի դագաղին ընծայված հուսկ հետին հարգանքին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդին ցանկությունը այն եղած էր, որ իր կողմե ոչ մեկ հրավեր անպատասխանի մնար Սփյուռքի հայության մեջ։

Համենայն դեպս, Հայ Եկեղեցվո բարձրաստիճան դեմքերուն գրեթե կեսին անձամբ մասնակցությունը այդ հանդիսությանց բավական եղած է մեղմացնելու Գերագույն Հոգևոր Խորհուրդին մտահոգությունը, և զոհունակություն առթող պարագա մըն էր։ Վեհին օծման արարողության պատարագիչն ալ եղած է Կիլիկիո Կաթողիկոսության արդի տեղակալը՝ ամենապատիվ Տ. Խաչ սրբազան արքեպիսկոպոս Աջապահյան, որ սիրելին էր Վեհափառին, և գիտենք՝ թե իր ընտրելին էր նաև ՀԱթոռ Կիլիկիո Կաթողիկոսության։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը բավական լուրջ աշխատանքներ ունի մանավանդ ասկե վերջ, որոնց հաջողության սերտիվ կրաղձա ամբողջ հայությունը։

Եպիսկոպոսական ժողովի հառաջիկա գումարումը, Կաթողիկոսական տեղակալի մը ընտրությամբ և նախապատրաստությունները Գեորգ Զ.ի հաջորդի ընտրության, ասոնք բոլորը Գերագույն Հոգևոր Խորհուրդը լրջորեն զրաղեցնող և մտահոգող հարցեր են, որոնց հաջորդական լուծմանը իրաղեկ պիտի դառնանք անշուշտ մոտ ատենեն և որոնց համար մեր սրտագին մաղթանքն է այժմեն՝ կատարյալ հաջողություն։

(Նյու-Յորք, «ՎՐԱԲԵՐ» երկօրյա թերթ, 10 հուլիսի 1954 թ., № 1)